

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

Խմբագրական
խորհուրդ՝
Գագիկ Հարությունյան
Վահե Ստեփանյան
Վոլոդյա Հովհաննիսյան
Վալերի Պողոսյան
Առուշան Հակոբյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 58-81-71

ՏԵՂԵԿԱԳԻՐ

4(82)
2016

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- * ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԱՏՆԵՐԸ
Հրայր ԹՈՎՄԱՍՅԱՆ5

• ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1255-1267)

- * ՌՈՒՔԻՆ-ՕՖԻԿ ՕՍԿԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
376.1-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1255 - 16 փետրվարի 2016 թվականի)17
- * «ԻՆՖՈՐՄԱՑԻՍՅԻ ԱԶՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
71-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1256 - 23 փետրվարի 2016 թվականի)24
- * ԼԻԼԻԹ ՍՈՒՍԵՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 76-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1257 - 10 մարտի 2016 թվականի)37
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾՍԵՐՁԱՆՈՒՄ
ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՏԱՐԱԾՍԵՐՁԱՆԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1258 - 10 մարտի 2016 թվականի)51
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ
ՄԻՋԵՎ «ՌՈՒՂՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱԿԱՃԳՆԱԺՄԱՍՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

- ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1259 - 10 մարտի 2016 թվականի).....56
- * 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1260 - 10 մարտի 2016 թվականի).....61
- * 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐՈՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1261 - 10 մարտի 2016 թվականի).....66
- * «ԳՈՒԴԵՆ ՖԻԼԴ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2477-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1262 - 22 մարտի 2016 թվականի).....70
- * ՀՄԱՅԱԿ ԽԱԼԱՖՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՎԱՐԴԱՆ ԽԱԼԱՖՅԱՆԻ, ԱՆԻ ԽԱԼԱՖՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ «ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ» ԴՐՈՒՅԹԻ ԵՎ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1263- 5 ապրիլի 2016 թվականի)81
- * «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 102-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1264 - 12 ապրիլի 2016 թվականի).....96
- * ԳԱԳԻԿ ՉՐԱԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 340-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ 1265 - 19 ապրիլի 2016 թվականի)104
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1266 - 19 ապրիլի 2016 թվականի)117

* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐ-ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1267 - 19 ապրիլի 2016 թվականի)121

• ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

* ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ126

Հրայր ԹՈՎՄԱՍՅԱՆ
ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավար-
գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ,
ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի դոկտորանտ

**ՆԱԽԿԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱԶՄԱՎՈՐՎԱԾ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԱՐԱՏՆԵՐԸ**

Հայտնի է, որ աշխարհում չկան կատարյալ կառավարման ձևեր: Դրան-
ցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները¹,
սակայն քաղաքական պրակտիկան գործնականում ազդում է քաղաքա-
կան համակարգի գործառնության վրա՝ հաճախ առաջացնելով համա-
կարգային դեֆորմացիաներ և արատներ: Այս համատեքստում, նախ և
առաջ, անհրաժեշտ է անդրադառնալ կառավարման ձևերի իրավական և
պրակտիկ-քաղաքական արատներին: Բանն այն է, որ հաճախ նկատվում
է մեծ անջրպետ սահմանադրությունների և քաղաքական կյանքում դրանց
կենսագործման միջև: Ջ. Սարտորին նկատում է, որ «կենդանի» սահ-
մանադրությունը գերակայություն է ձեռք բերում «ֆորմալ» սահմանա-
դրության նկատմամբ²:

Հետևաբար, վերլուծելով կառավարման այս կամ այն ձևերը, ըստ Մ.
Դյուվերթեի, պետք է ամենից առաջ ուշադրություն դարձնել ոչ թե միայն
սահմանադրությանը, այլ դրա գործելու պրակտիկային: Միննույն ժամա-
նակ ֆրանսիացի պրոֆեսորը նկատում է, որ վերլուծական մոդելներ
կազմելու ժամանակ քաղաքագետը չի կարող անտեսել սահմանադրու-
թյունը, ինչպես որ ֆուտբոլում կամ բրիջում հանդիսատեսը չի կարող

1 St u Zaznaev O.I. Индексный анализ полупрезидентских государств Европы и постсоветского пространства. Полис. 2007. № 2, էջեր 146–164:

2 St u Sartori G. Comparative Constitutional Engineering: An Inquiry into Structures, Incentives and Outcomes. – 2nd edition. London: Macmillan Press, 1997, էջ 122:

հաշվի չառնել խաղի կանոնները: Այդ կանոնները ընկած են խաղացողների ռազմավարության և տակտիկայի հիմքում³:

Այս նույն տրամաբանությամբ, առավել նպատակահարմար է դիտարկել կառավարման իրավական ու քաղաքական կողմերի միջև տարբերությունները, այսինքն սահմանադրությամբ նախատեսված իշխանության կազմակերպման ձևի (de jure սահմանադրության) և իշխանության ճյուղերի փաստացի հարաբերությունների (de facto սահմանադրության) միջև: Այս կամ այն երկրում գոյություն ունեցող կառավարման ձևի գնահատման ժամանակ պետք է ուշադրության առնել և՛ սահմանադրական ձևը, և՛ դրա կենսագործման քաղաքական պրակտիկան: Նման համալիր մոտեցումը թույլ է տալիս ստանալ կառավարման համակարգի ադեկվատ պատկեր⁴:

Արատներն իրենցից ներկայացնում են կառավարման ձևի կոնկրետ թերություններ, բացթողումներ, օրինակ՝ մեծաքանակ լիազորությունների կենտրոնացում նախագահի ձեռքում, նախագահի և կառավարության նկատմամբ արդյունավետ վերահսկողության բացակայություն, պատասխանատու կառավարության բացակայություն, «տեխնիկական» կառավարության ձևավորում: Այդ արատները արդյունքում հանգեցնում են իշխանության թևերի միջև հավասարակշռության խախտման, անարդյունավետություն, կոնֆլիկտագենության, առաջանում են ավտորիտար և տոտալիտար ռեժիմներ, տնտեսական ու քաղաքական ճգնաժամեր, անկայություն, անկանխատեսելիություն, տնտեսական անկում, արտագաղթ և այլն:

Նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված պետությունների սահմանադրությունների ու իրական քաղաքական կյանքի համադրման արդյունքում կարելի է պնդել, որ այդ երկրների կառավարման ձևերին բնորոշ են ինչպես դասական կառավարման ձևերի համար ավանդական, այնպես էլ միայն տվյալ պետություններին բնորոշ արատներ: Սակայն այս երկրներում հիշյալ թերություններին ավելանում են նաև նորերը, որոնք ոչ միայն նոր «որակ» են հաղորդում դրանց, այլև խեղաթյուրում, հեռացնում են այն տրամաբանությունից, սկզբունքներից, որոնք դրված են տվյալ կառավարման ձևի հիմքում: Նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված պետություններում, որոշ բացառություններով, կառավարման համակարգի թերությունները կրում են համակարգային բնույթ, չեն վերանում տևական ժամանակ և դառնում են

3 St' u Duverger M. A New Political System Model: Semi-Presidential Government // European Journal of Political Research. 1980. Vol. 8, էջեր 166-167:

4 St' u Зазнаев О.И. Полупрезидентская система: теоретические и прикладные аспекты. Казань: Казан. гос. ун-т им. В.И. Ульянова-Ленина, 2006, էջ 218:

խրոնիկ:

Ժողովրդավարական ու իրավական պետության մեծ փորձ ունեցող երկրներում կառավարման համակարգի հիմնական սուբյեկտների՝ նախագահի, պառլամենտի, կառավարության միջև փոխհարաբերությունները և նրանց լիազորությունները տարիների ընթացքում մշակվել ու հղկվել են, իսկ որոշ հարաբերություններ էլ կարգավորվում են սովորույթային նորմերով: Մինչդեռ խնդրո առարկա երկու խումբ երկրներում երբեմն ոչ թե քաղաքական պրակտիկան է համապատասխանեցվում սահմանադրությանը, այլ հենց սահմանադրությունն է համապատասխանեցվում ձևավորված քաղաքական պրակտիկային կամ մեկնաբանվում դրան համահունչ:

Հարկ է նկատել, որ նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված պետությունների կառավարման համակարգերը սահմանադրական ամրագրման մակարդակում ունեն էական տարբերություններ: Այս երկրներն ըստ կառավարման ձևի պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

ա) Հայաստան⁵, Ուկրաինա, Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն,

բ) Բելառուս, Ադրբեջան, Ղազախստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Թուրքմենստան: Արդստանը կարող է լինել թե՛ առաջին և թե՛ երկրորդ խմբում:

Առաջին խմբի երկրներում սահմանադրական մակարդակում ակնհայտ է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ հետևողական իրացումը, համակարգային ոչ կատարյալ լուծումները, քաղաքական և սահմանադրական մշակույթի ցածր մակարդակը, կուսակցական համակարգի ոչ բավարար կայացվածությունը:

Երկրորդ խմբի երկրների առնչությամբ կարող ենք խոսել ոչ թե իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ հետևողական իրացման, համակարգային առումով ոչ կատարյալ լուծումների, այլ իշխանությունների բաժանման բացառապես ձևական բնույթի և զսպումների ու հակակշիռների համակարգի բացակայության, բացի իշխանական կուսակցություններից՝ այլ կուսակցությունների գրեթե բացակայության մասին:

⁵ Այս հոդվածում տեղ գտած վերլուծությունները հիմնականում կատարվել են Հայաստանի Հանրապետության 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության հիման վրա:

ՈՒԺԵՂ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՑՔ

Վերոնշյալ երկու խումբ երկրներին և, հատկապես, երկրորդ խմբին բնորոշ աչքի զարնող հանգամանքն ուժեղ նախագահական իշխանության առկայությունն է: Այդ երկրների քաղաքական համակարգում նախագահն առանցքային դերակատարություն ունի:

Նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված շատ պետությունների քաղաքական վերնախավի կարծիքով՝ այն պարագայում, երբ բացակայում են պառլամենտարիզմի ավանդույթները, երբ կայացած չեն քաղաքական կուսակցությունները, առկա խնդիրները առավել արդյունավետ կարող են լուծվել բացառապես ուժեղ նախագահական իշխանության պարագայում: Ուժեղ նախագահական իշխանության անհրաժեշտությունը այս երկրներում հիմնավորվում է նրանով, որ դա հնարավորություն է տալիս կենտրոնացնել գոյություն ունեցող տնտեսական ու քաղաքական ռեսուրսները և արագորեն ընդունել անհրաժեշտ որոշումներ, արդյունավետորեն հաղթահարել հրատապ կամ կուտակված խնդիրները: Ուժեղ նախագահը ավելի արագ է մոբիլիզացնում էլիտան ու զանգվածները՝ արտակարգ իրավիճակից կամ ճգնաժամից դուրս գալու համար:

Ուժեղ նախագահական համակարգի առավելությունը հիմնավորվում է նաև նրանով, որ միմիայն նախագահը կարող է բարեհաջող պայքարել բյուրոկրատների բանակի, ինչպես նաև հանցավորության դեմ:

Այս երկրներում հակված են կարծելու, որ ուժեղ նախագահն ավելի հուսալի կպաշտպանի երկրի ազգային շահերը, քան թե խորհրդարանը, որտեղ միշտ գոյություն ունեն այլընտրանքային պատկերացումներ պետության ազգային շահերի մասին:

Որպես առավելություն դիտարկվում է նաև այն, որ ժողովրդի կողմից ընտրված նախագահն իր կառավարման ժամանակահատվածում կարող է վեր կանգնել քաղաքական վեճերից և արտահայտել ոչ թե առանձին տնտեսական, տարածաշրջանային կամ քաղաքական խմբավորումների, այլ ողջ հասարակության շահերը:

Նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված պետությունների կառավարման համակարգին բնորոշ է ևս մի երևույթ, այն է՝ իշխանության վարչակարգի կազմակերպման եղանակ է ընտրվում «շրջապատի» գործոնը, այլ ոչ թե արհեստավարժների քաղաքական թիմի սկզբունքը: Երբեմն, ակնհայտ է դառնում, որ նախագահները չունեն լուրջ քաղաքական թիմ, այլ ունեն միայն «գորեղ շրջապատ», որը, սակայն, առանց նախագահի ոչ մի ուժ չունի:

Քննարկման առարկա հանդիսացող երկրների կառավարման համակարգին բնորոշ հաջորդ արատն այն է, որ եթե դասական նախագահական կամ անգամ կիսանախագահական հանրապետություններում կառավարման համակարգը գործում է «հաղթողը ստանում է ամեն ինչ, իսկ պարտվողը՝ ոչինչ» սկզբունքով, ապա այս տարածաշրջանի պետություններին բնորոշ է «հաղթողը ստանում է ամեն ինչ, իսկ պարտվողը ոչնչանում է» սկզբունքը: Այլ կերպ ասած՝ նրանք, ովքեր պարտվում են կառավարող նախագահական իշխանության խմբի մեջ մասնակցություն ունենալու պայքարում, ոչ միայն կորցնում են քաղաքական հեռանկարները, այլ նաև վտանգում են ամեն ինչ, երբեմն նաև իրենց սեփականությունը:

Կառավարման համակարգին բնորոշ հաջորդ արատը քաղաքական համակարգում կուսակցությունների չկայացած լինելն է կամ թույլ ազդեցությունը: Նախագահը, չունենալով իրական կուսակցական - քաղաքական աջակցություն, հարկադրված է իշխանության մեջ հենվել կենտրոնական ու տեղական բյուրոկրատների բանակի վրա, որի հիմքի վրա և որի արդյունքում էլ որպես կանոն, ստեղծվում է «իշխանության կուսակցություն»:

Առաջին խումբ երկրներում շատ սուր է դրված նախագահի վարչակազմի և կառավարության փոխազդեցության հարցը: Որպես երկու կենտրոնական իշխանություններ՝ նրանց միջև մրցակցություն է առաջանում ռեսուրսների ու պատասխանատվության համար: Նախագահի վարչակազմը, որպես կանոն, ընդօրինակում է կառավարության գործառույթները, սակայն պատասխանատվություն չի կրում աշխատանքի արդյունքների համար: Սա հարկադրում է ցանկացած կառավարության խաղալ իր քաղաքական դերերը՝ նախագահի շրջապատի սցենարով: Տեղի է ունենում երկրի համար շատ վտանգավոր երևույթ՝ կոնֆլիկտ «ստվերային» ու հանրային քաղաքականության միջև:

Նախագահի խոշոր իշխանական լիազորությունները խիստ մեծացնում են նրա մերձավոր, որպես կանոն, ոչ լեգիտիմ շրջապատի դերը և նշանակությունը: Եթե անգամ նախագահի կողքին գոյություն ունի վարչապետ, նախագահը հաճախ նախընտրում է հարցերը լուծել քաղաքականությամբ չզբաղվողների, զինվորականների, գործարարների, իրեն հաշվետու խմբի իր շրջապատի հետ: Կտրուկ մեծանում է արտահաստիքային տարբեր օգնականների, խորհրդատուների, անվտանգության ծառայողների դերը, իսկ վերջիններս անխուսափելիորեն կոնֆլիկտի մեջ են մտնում պետական իշխանության օրինական և իրավասու մարմինների հետ:

ՆԱԽԱԳԱՀԻ ՄԵԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Վերոհիշյալ երկու խումբ երկրների սահմանադրությունների և քաղաքական կյանքի վերլուծությունը վկայում է, որ դրանց մեծ մասին (Ադրբեջան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան) բնորոշ է նախագահի գերաճած դերը «նախագահ - կառավարություն - խորհրդարան» եռանկյան շրջանակում, նախագահի ձեռքում շատ մեծ լիազորությունների կենտրոնացումը, որոնք գործնականում որևէ մեկի կողմից կամ որևէ կերպ չեն զսպվում: Այս պետությունների սահմանադրությունները տալիս են նախագահի լիազորությունների լայնածավալ ցանկ (օրինակ՝ Ուզբեկստանում՝ 25 լիազորություն (հոդված 93)⁶, Տաջիկստանում՝ 30 լիազորություն (հոդված 69)⁷, Ադրբեջանում՝ 32 լիազորություն (հոդված 109)⁸, Ուկրաինայում՝ 31 լիազորություն (հոդված 106)⁹, որոնցից շատերը խիստ ծանրակշիռ են: Բացի այդ՝ առաջնորդների իշխանությունը գործնականում էականորեն մեծանում է: Այսպիսի համակարգերում խորհրդարաններն իրենցից ներկայացնում են միայն խորհրդատվական մարմին՝ վերածվելով նախագահի որոշումներին մեքենայորեն հավանություն տվող օրենսդիր իշխանության, իսկ կառավարությունն ամբողջությամբ ենթակա է Հանրապետության Նախագահին: Գերնախագահությունը դրսևորվում է ոչ միայն իշխանության ճյուղերի հավասարակշռությունը մեծապես խախտելու մեջ, այլ նաև առաջնորդի՝ պաշտոնավարման համար նախասահմանված ժամկետը երկարաձգելու կամ սեփական իշխանությունը ցմահ պահելու փորձերում:

Մի շարք երկրներում տեղի է ունեցել առանձին պետական մարմինների կարգավիճակի իրավական ու փաստացի բարձրացում, ինչն արդարացված չէ իշխանությունների բաժանման հայեցակարգի տեսանկյունից: Այդ երկրներում քաղաքականության սահմանման ու իրականացման մեջ մեծ դեր է խաղում նախագահի վարչակազմը, որի մասին այդ երկրների սահմանադրություններում լավագույն դեպքում առկա է մեկ-երկու հոդված: Այս երկրներում նախագահների աշխատակազմերը փաստացի իրենցից ներկայացնում են քաղաքական «ղեկավար կենտրոններ», որոնք

6 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/uzbkstan/uzbek--r.htm:

7 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/tajik/tajik--r.htm:

8 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/azer/azer--r.htm:

9 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/ukraine/ukrain-r.htm:

մշակում են ողջ պետական քաղաքականության ռազմավարությունը և տակտիկան:

Խնդրո առարկա պետությունների կառավարման ձևերի մասնավոր արատները վերաբերում են իշխանության կազմակերպման տարբեր կողմերին՝ ընտրությունների ընթացակարգերին և նախագահի փոփոխելիությանը, վարչապետի և կառավարության այլ անդամների նշանակմանը, նոր կառավարության ձևավորմանը, կառավարության կազմավորումը նախագահական և/կամ խորհրդարանական ընտրություններին կապելուն, կառավարությանը անվստահություն հայտնելուն, նախագահի օրենսդրական նախաձեռնությանը, նախագահի վետոյին, խորհրդարանի արձակմանը և պատգամավորական մանդատի՝ կառավարական պաշտոնի հետ համատեղելիությանը կամ անհամատեղելիությանը:

Նշված պետությունների կառավարման ձևի վերլուծության ժամանակ առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում 2 ինստիտուցիոնալ գործոններ. առաջինը, թե ինչպես է տեղի ունենում պետության գլխի փոփոխությունը (եթե տեղի է ունենում ընդհանրապես), ստեղծվա՞ծ են, արդյոք, մեկ նախագահին մյուսով փոխարինելու պայմանները, և երկրորդը՝ ինչպես է կազմավորվում կառավարությունը և ում առաջ է այն պատասխանատվություն կրում:

Թուրքմենստանում ընտրությունները փաստացի վերացվել են դեռևս Ս. Նիյազովի ժամանակ, Հանրապետության նախագահի լիազորությունները ըստ էության երկարացվում են հանրաքվեի միջոցով: Ուզբեկստանում՝ 1995 թվականին, Բելառուսում՝ 2004 թվականին, Տաջիկստանում՝ 2003 թվականին, Ադրբեջանում՝ 2009 թվականին վերացվեցին նախագահի պաշտոն զբաղեցնելը երկու ժամկետով սահմանափակող դրոյթները: Այս առումով առանձնահատուկ է Ղազախստանը, որտեղ 2007 թվականին սահմանադրությունը լրացվեց մի նորմով, ըստ որի՝ միննույն անձի՝ ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ նախագահ ընտրվելու սահմանափակումը չի տարածվում «Ղազախստանի Հանրապետության Առաջին նախագահի վրա (Ղազախստանի Հանրապետության սահմանադրության հոդված 42 մաս 5), այսինքն՝ գործող նախագահ Ն. Նազարբաևի վրա¹⁰:

Այս արատն առկա չէ առաջին խումբ պետություններում: Դրանցից յուրաքանչյուրն ունեցել է մի քանի նախագահ:

Կառավարման նախագահական համակարգին բնորոշ է պետության գլխի պաշտոնանկության ինստիտուտը, որպես կանոն, պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործության համար: Չնայած վերոհիշյալ երկրորդ խումբ երկրներում նախագահների պաշտոնանկության համար սահմանված են բարդ ու ծանրաշարժ ընթացակարգեր ու

10 St' u http://www.akorda.kz/ru/official_documents/constitution:

մեխանիզմներ, բայց դրանք առնվազն իրավաբանորեն գոյություն ունեն: Բացառություն է թերևս միայն Ուզբեկստանը, որտեղ սահմանադրությունը չի նախատեսում նախագահին իմպիչմենտ հայտնելու հնարավորություն, ինչը շատ տարօրինակ է հանրապետական կառավարման համակարգի համար: Նույն Ուզբեկստանի սահմանադրության մեջ ասվում է, որ նախարարների կաբինետն իր գործունեության մեջ պատասխանատու է նախագահի և Օլի Մաժլիսի առաջ (հոդված 98, մաս 7)¹¹, սակայն կառավարության պատասխանատվությունը խորհրդարանի առաջ խաբկանք է, քանի որ չի նախատեսում կառավարությանը անվտանգություն հայտնելու ընթացակարգ:

Կառավարման կիսանախագահական համակարգի տրամաբանությունից շեղում պետք է համարել նաև առաջին խումբ երկրների մի մասում նախագահի կողմից կառավարության որոշումներն ուժը կորցրած ճանաչելու դրույթը: Այս դրույթի ուժով գործադիր իշխանությունը փաստացի կենտրոնանում է հանրապետության նախագահի ձեռքում, որը, հիշեցնենք, բնավ էլ պատասխանատվություն չի կրում պատլամենտի առջև գործադիր իշխանության գործունեության համար:

Ընդ որում, տեղին է նկատել, որ Հայաստանի Հանրապետության 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը ևս պարունակում էր նման դրույթ. Սահմանադրության 86-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կառավարության որոշումները ստորագրում էր վարչապետը, վավերացնում՝ Հանրապետության Նախագահը: 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով այս նորմը խմբագրվեց, որի արդյունքում Հանրապետության Նախագահը կորցրեց կառավարության որոշումները վավերացնելու լիազորությունը և սահմանվեց, որ կառավարության որոշումները ստորագրում է վարչապետը: Մինևույն ժամանակ, նախատեսվեց, որ Հանրապետության Նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար¹²:

Նախագահի կողմից կառավարության որոշումները ուժը կորցրած ճանաչելու լիազորությունը սահմանված է նաև Ուկրաինայի սահմանադրությունում (հոդված 106, կետ 16)¹³, Ղազախստանի սահմանադրությունում (հոդված 44, կետ 3)¹⁴, Ուզբեկստանի սահմանադրությունում (հոդված 93, կետ 16)¹⁵:

11 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/uzbkstan/uzbek--r.htm:

12 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/azer/azer---r.htm:

13 Տե՛ս <http://www.kc.gov.by/main.aspx?guid=1013#gl3>:

14 Տե՛ս http://www.akorda.kz/ru/official_documents/constitution:

15 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/uzbkstan/uzbek--r.htm:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼԸ

Նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված պետությունների բազմաթիվ սահմանադրություններով նախատեսվում է կառավարությանն անվստահության հայտնելու ինստիտուտը: Այս ինստիտուտի գոյությունը, սակայն, գրեթե անիրական է դառնում, երբ դիտարկում ենք դրա իրականացման օրենսդրական մեխանիզմը կամ պրակտիկան: Այսպես, Ադրբեջանում (հոդված 109, մաս 6)¹⁶, Բելառուսում (հոդված 84, կետ 7)¹⁷, Ղազախստանում (հոդված 44)¹⁸, Ռուսաստանում (հոդված 83, կետ ք)¹⁹ խորհրդարանի կողմից կառավարությանը անվստահության հայտնելու դեպքում կառավարության լիազորությունների դադարեցման մասին որոշումը ընդունում է նախագահը: Սա գրեթե զրոյացնում է անվստահության քվեի ուժը: Ղրղզստանում, համաձայն 2007թ. սահմանադրության, վարչապետն ամեն տարի Ժողովուրդի Կենտրոն է ներկայացնում նախարարների խորհրդի աշխատանքի մասին հաշվետվությունը, և եթե խորհրդարանը այս աշխատանքը համարում է անբավարար, կարող է անվստահություն հայտնել կառավարությանը (հոդված 71, մաս 2 և 3)²⁰: Այնուամենայնիվ նախագահը կարող է չհամաձայնել Ժողովուրդի Կենտրոնի որոշման հետ (հոդված 71, մաս 6)²¹: Չնայած այն դեպքում, երբ խորհրդարանը երեք ամսվա ընթացքում կրկին ընդունում է որոշում կառավարությանն անվստահություն հայտնելու վերաբերյալ, ապա նախագահը պաշտոնանկ է անում կառավարությանը կամ նշանակում է Ժողովուրդի Կենտրոնի վաղաժամկետ ընտրություններ (հոդված 71 մաս 7)²²: Այս առումով լավ օրինակ է Հայաստանի Հանրապետության 2005թ. փոփոխություններով Սահմանադրությունը, որտեղ Ազգային ժողովի կողմից կառավարությանը անվստահություն հայտնելն ավտոմատ կերպով հանգեցնում է վարչապետի և կառավարության մյուս անդամների լիազորությունների դադարեցմանը: Հանրապետության Նախագահն այդ գործընթացը չի կարող կասեցնել:

Այս առումով, կառավարությանն անվստահություն հայտնելը ներկայումս չափազանց դժվար է Վրաստանում: Խորհրդարանի համար դժվար

16 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/azer/azer---r.htm:

17 Տե՛ս <http://www.kc.gov.by/main.aspx?guid=1013#gl3>:

18 Տե՛ս http://www.akorda.kz/ru/official_documents/constitution:

19 Տե՛ս <http://www.constitution.ru/10003000/10003000-6.htm>:

20 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/kyrgyz/kyrgyz-r-new.htm:

21 Տե՛ս նույն տեղում:

22 Տե՛ս նույն տեղում:

է «տեղավորվել» այն ժամկետներում, որոնք Սահմանադրությամբ նախատեսված են անվստահություն հայտնելու համար: Վրաստանի սահմանադրությամբ սահմանված է, որ խորհրդարանի կողմից կառավարությանը անվստահություն հայտնելուց հետո նախագահը պաշտոնանկ է անում կառավարությանը կամ չի պաշտպանում խորհրդարանի որոշումը: Եթե խորհրդարանը «90 օրից ոչ շուտ և 100 օրից ոչ ուշ» ժամկետում կրկին անվստահություն է հայտնում կառավարությանը, նախագահը պաշտոնանկ է անում կառավարությանը կամ արձակում է խորհրդարանն ու նշանակում արտահերթ ընտրություններ (հոդված 81, մաս 1)²³: Խորհրդարանն իրավասու է հարց բարձրացնել կառավարության նկատմամբ լիակատար անվստահության մասին, եթե «որոշում կայացնելուց հետո 15 օրից ոչ շուտ և 20 օրից ոչ ուշ» ժամկետում խորհրդարանը ընդհանուր կազմի «երեք հինգերորդ» (խիստ չափազանցված թիվ) մեծամասնությամբ անվստահություն է հայտնում կառավարությանը, նախագահն ընդունում է որոշում կառավարությանը պաշտոնանկ անելու մասին (հոդված 81, մաս 2)²⁴:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված մի շարք պետությունների նախագահներ անտեսում են խորհրդարանին ևս մեկ վարչապետի նշանակմանը համաձայնություն տալու հարցում: Բելառուսում համաձայնություն տալուց երկու անգամ հրաժարվելու դեպքում նախագահն իրավունք ունի նշանակել վարչապետի պաշտոնակատար, արձակել Ներկայացուցիչների պալատը և նշանակել նոր ընտրություններ (հոդված 106, մաս 5)²⁵, այսինքն խորհրդարանի համաձայնությունը ոչ մի նշանակություն չունի: Ադրբեջանում վարչապետի նշանակումը կատարվում է նախագահի կողմից Միլլի Մեջլիսի հետ համաձայնությամբ (հոդված 118, մաս 1): Նախագահը կարող է վարչապետին նշանակել առանց խորհրդարանի համաձայնության, եթե Միլլի Մեջլիսը չի դիտարկել թեկնածությունը մեկ շաբաթվա ընթացքում կամ համաձայնություն չի տվել երեք անգամ (հոդված 118, մաս 3)²⁶:

Ուզբեկստանի Օլի Մաժլիսը կարող է երեք անգամ մերժել նախագահի կողմից հաստատման ներկայացված վարչապետի թեկնածությունը, որից հետո խորհրդարանը կարձակվի, իսկ նախագահը կնշանակի կառա-

23 St' u http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/georgia/georgi-r.htm:
24 St' u նույն տեղում:
25 St' u <http://www.kc.gov.by/main.aspx?guid=1013#gl3>:
26 St' u http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/azer/azer---r.htm:

վարության գլխին: Սակայն այժմյան խորհրդարանը չի հանդգնում հակառակվել նախագահին, և այս նորմը հանդիսանում է «մեռած»: Ղազախստանի նախագահը (համաձայն 2007թ. սահմանադրական շտկումների) Մաժիլիսում ներկայացված քաղաքական կուսակցությունների խմբակցությունների հետ խորհրդակցությունից հետո Մաժիլիսի դիտարկմանն է ներկայացնում վարչապետի թեկնածությունը: Պրակտիկայում վերջին նորույթը զավեշտալի է. խորհրդարանում այժմ ներկայացված է մեկ նախագահամետ կուսակցություն, որը, ըստ էության, պաշտպանում է նախագահի բոլոր նախաձեռնությունները:

Մինչև 2007 թվականի սահմանադրական փոփոխությունները Ղազախստանում կառավարությանն անվստահություն կարելի էր հայտնել առնվազն ձայների ընդհանուր թվի երկու երրորդով ընդունված որոշմամբ: 2007թ. մայիսից հետո նման որոշումն ընդունվում է Մաժիլիսի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, Մաժիլիսի պատգամավորների ընդհանուր թվի ոչ պակաս, քան մեկ հինգերորդի նախաձեռնությամբ (հոդված 56, մաս 2)²⁷:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄԸ ԿՈՆԿՐԵՏ ԱՆՁԱՆՑ

Կառավարման ձևը սահմանող նորմերի հարմարեցումը կոնկրետ մարդկանց տարածված երևույթ է նախկին Խորհրդային Միության տարածքում: Այսպես՝ Հեյդար Ալիևը ջանքեր էր գործադրում, որ իր որդի Իլիամը դառնա նախագահ: 2002թ. հանրաքվեով ուղղումներ կատարվեցին Սահմանադրության մեջ, համաձայն որոնց պետության մեջ երկրորդ մարդը ոչ թե խորհրդարանի նախագահն էր, այլ վարչապետը (այս պաշտոնը այդ ժամանակ զբաղեցնում էր Իլիամ Ալիևը): Թուրքմենստանում Նիյազովի մահից հետո Գ. Բերդիմուխամմետովը հապճեպ փոխեց նախագահի իշխանության հանձնման կարգը, այն է՝ նախագահի պարտականությունների կատարումը փոխանցվում է ոչ թե խորհրդարանի նախագահին, այլ Նախարարների կաբինետի նախագահի տեղակալին, ով այդ ժամանակ Բերդիմուխամմետովն էր: Սա թույլ տվեց նրան դառնալ նախագահի պարտականությունների ժամանակավոր կատարող, իսկ այնուհետև, նաև «հաղթել» ընտրություններում:

Մի շարք դեպքերում կառավարման ձևում ներգրավվում են ավելորդ տարրեր: Այսպես՝ Ուզբեկստանի նախագահը «ներխուժում է» այնպիսի ոլորտներ, որտեղ նրա ներկայությունը տեղին չէ: Օրինակ, նախագահը

27 Տե՛ս http://www.akorda.kz/ru/official_documents/constitution:

Օլի Մաժլիսի (խորհրդարանի) Սենատին ներկայացնում է Սենատի նախագահի պաշտոնի թեկնածությունը (հոդված 93 կետ 9)²⁸: Ղազախստանի նախագահն իրավունք ունի խառնվելու խորհրդարանի գործերին, մասնավորապես՝ հաստատել օրենքի ուժ ունեցող հրամաններ (հոդված 61, մաս 2) և նույնիսկ մինչև մեկ տարի ժամկետով իր վրա վերցնել օրենսդիր իշխանության գործառույթները (հոդված 53, կետ 4)²⁹:

Եվ այսպես, նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված պետությունների սահմանադրությունները և քաղաքական պրակտիկան վեր են հանում կառավարման ձևերի արատների ամբողջ «հովհարը»: Այդ արատների վերացումը միայն սահմանադրական փոփոխությունների խնդիր չէ: Ձևավորված համակարգերը, հատկապես երկրորդ խումբ երկրներում, խիստ անձնավորված են և կմնան առնվազն այնքան ժամանակ, քանի դեռ այդ անձերն իշխանության են: Թերևս քիչ հավանական սցենարը աստիճանական բարեփոխումների ճանապարհն է:

28 Տե՛ս http://concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/uzbkstan/uzbek--r.htm:

29 Տե՛ս http://www.akorda.kz/ru/official_documents/constitution/:



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՌՈՒՔԻՆ-ՕՖԻԿ ՕՍԿԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
376.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Ռոբին-Օֆիկ Օսկանյանի և նրա ներկայացուցիչ Ա. Եսոյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռոբին-Օֆիկ Օսկանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի

Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ռոբին-Օֆիկ Օսկանյանի՝ 2015 թվականի սեպտեմբերի 10-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Բ Զ Ե Ց .

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«Վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

...

4) առաջին ատյանի դատարանների՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, փոփոխելու կամ վերացնելու, սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ խուզարկության, ազդարկման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման, ինչպես նաև նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքի սահմանափակման մասին որոշումները. ... »:

Օրենսգիրքը լրացվել է 376.1-րդ հոդվածով՝ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-270-Ն օրենքով (ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 18-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի դեկտեմբերի 27-ին):

Հիշյալ հոդվածը ենթարկվել է փոփոխման և լրացման «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» համապատասխանաբար՝ ՀՕ-237-Ն և ՀՕ-45-Ն Հայաստանի Հանրապետության օրենքներով, սակայն այդ փոփոխությունները և լրացումները վիճարկվող նորմին չեն վերաբերում:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. 2013 թվականի հունվարի 23-ին Ռոբին-Օֆիկ Օսկանյանը թիվ 46107610/1 քրեական գործով ներգրավվել է որպես մեղադրյալ, որպես

խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին և հայտարարվել է հետախուզում: 2013 թվականի ապրիլի 3-ին Ռոբին-Օֆիկ Օսկանյանն ինքնակամ ներկայացել է վարույթն իրականացնող մարմին, ուր վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով:

Ռոբին-Օֆիկ Օսկանյանի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել դատարան խափանման միջոցը վերացնելու մասին: Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2014 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ մերժել է պաշտպանի ներկայացրած միջնորդությունը:

Վերոհիշյալ դատական ակտի դեմ պաշտպանի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2015 թվականի հունվարի 19-ի որոշմամբ թողնվել է առանց քննության՝ տվյալ դատական ակտը վերաքննիչ բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2015 թվականի մարտի 26-ի որոշմամբ վերադարձրել է Վերաքննիչ դատարանի հիշյալ որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը՝ տրամադրելով 15-օրյա ժամկետ՝ բողոքի ձևական սխալները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը 2015 թվականի հուլիսի 6-ին կայացրել է որոշում հիշյալ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին՝ վերահաստատելով Վերաքննիչ դատարանի իրավական դիրքորոշումը:

3. Վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը՝ դիմողը գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 17, 18, 19, 25 և 43-րդ հոդվածներին:

Հղում կատարելով Սահմանադրության հիշյալ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 3 և 13-րդ հոդվածներին, վերլուծելով օրենսգրքի համապատասխան հոդվածները, դիմողը գտնում է, որ տվյալ իրավակարգավորումը զրկում է իրեն իր նկատմամբ նշանակված խափանման միջոցը վերացնելու մասին միջնորդությունը մերժելու վերաբերյալ դատարանի որոշումը բողոքարկելու հնարավորությունից, ինչի արդյունքում իր ազատ տեղաշարժի սահմանադրական իրավունքի սահմանափակման հիմնավորվածությունը պատշաճ կերպով չի ստուգվում՝ դատարանի կամայականության հնարավորություն ստեղծելով, դրանով իսկ խախտելով արդար դատաքննության՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքը:

Դիմողի կարծիքով՝ տվյալ պարագայում փաստորեն խախտվում են ՀՀ

Սահմանադրությամբ երաշխավորված իր այլ իրավունքները ևս, մասնավորապես՝ ազատ տեղաշարժի և վերջինիս սահմանափակման համար անհրաժեշտ հիմքերի պահպանման իրավունքները:

Համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 6-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով: Դիմողի կարծիքով՝ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման վերաբերյալ օրենսգրքի 376.1-րդ հոդվածը չի բավարարում վերը նշված սահմանադրական նորմի պահանջը, քանի որ չի ապահովում պատշաճ ընթացակարգի մասին պահանջը, որը քրեական դատավարության շրջանակներում անձի հիմնական իրավունքների սահմանափակման պարտադիր հիմքերի պահպանման ընթացակարգային մեխանիզմն է:

Դիմողը գտնում է, որ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման վերաբերյալ հոդվածը, որը չի ներառում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման կամ դրա վերացման մասին դատարանի որոշման վերաքննիչ բողոքարկման հնարավորություն, հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Պատասխանողը նշում է, որ ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ դատարանի մատչելիության և դատական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքն առաջին հերթին վերաբերում է առաջին ատյանի դատարանի մատչելիությանը և չի ներառում վերաքննիչ բողոքարկման և իրավական պաշտպանության այլ միջոցները: Թեև երկրորդ դատական ատյանի ստեղծումը պարտադիր չի համարվում, այնուհանդերձ, դատական ակտերի բողոքարկումը կենսական նշանակություն ունի կամայական որոշումներ կայացնելու ռիսկերը նվազագույնի հասցնելու և դատական սխալները շտկելու տեսանկյունից: Պետությունը, ստեղծելով վերաքննիչ և վճռաբեկ ատյաններ, օրենսդրորեն երաշխավորել է դատական ակտերի վերանայման հնարավորությունը, որից բացառությունները սահմանվում են միայն օրենքով:

Ըստ պատասխանողի՝ օրենսդիրը, տարանջատելով գործն ըստ էության լուծող դատական ակտերը գործն ըստ էության չլուծող դատական ակտերից, օրենսգրքի 376.1-րդ հոդվածով սպառիչ սահմանում է վերաքննության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը, այդ թվում՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի ցանկը: Վերջինիս սահմանափակումը նպատակ ունի դատական վերանայման

համակարգը գերծ պահել երկրորդական դատական ակտերի բողոքարկմամբ անհարկի ծանրաբեռնելուց: Գործն ըստ էության չլուծող դատական ակտը հիմնականում վերանայման առարկա է դառնում գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում:

Պատասխանողը հղում է կատարում ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-922 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ միջանկյալ դատական ակտերի «հետաձգված բողոքարկման» կարգի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել գործի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու, դատաքննությունն անհարկի ձգձգումներից գերծ պահելու պահանջի երաշխավորումը, ինչպես նաև դատավարական գործընթացի արդյունավետության իրավաչափ նպատակ:

Վերջում պատասխանողն անդրադառնում է գործն ըստ էության չլուծող դատական ակտի բողոքարկման հարցում միջազգային պրակտիկային:

5. Սույն գործի քննության շրջանակներում սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դիմումի մուտքագրման պահին գործել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ 2005 թվականի փոփոխություններով, և դիմողը վիճարկվող իրավադրույթները վիճահարույց է համարել Սահմանադրության այդ խմբագրությամբ 17, 18, 19, 25 և 43-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-3-րդ գլուխներն ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ից, ուստի սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը քննության առարկա է հանդիսանում Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) համապատասխանաբար 26, 61 և 63-րդ հոդվածների, ինչպես նաև 40-րդ հոդվածի 1-3-րդ մասերի և 4-րդ մասի համատեքստում:

6. Սահմանադրական դատարանը դիմումի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթի հնարավոր հակասահմանադրականության վերաբերյալ դիմողի փաստարկները գլխավորապես հանգում են օրենսդրական կարգավորումների ենթադրաբար ոչ լիարժեք լինելու խնդրին:

ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում, մասնավորապես, 2014 թվականի ապրիլի 8-ի ՄԴՈ-1143 որոշմամբ միմյանցից հստակ սահմանազատել է օրենսդրական կարգավորումների ոչ լիարժեք լինելու այն դեպքերը, որոնք կարող են քննվել սահմանադրական

դատարանի կողմից, այն դեպքերից, որոնց լուծումը վերապահված է բացառապես օրենսդիր մարմնին:

Նշված որոշման 6-րդ կետում ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է սկզբունքային նշանակություն ունեցող հետևյալ իրավական դիրքորոշումները.

ա) «...Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»,

բ) «... բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է»:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ստորագրություն չհեռանալու վերաբերյալ խափանման միջոցը վերացնելու մասին որոշման վերաքննության կարգով բողոքարկման հարաբերությունների իրավակարգավորման բացակայությունը չի կարող դիտարկվել որպես օրենքի բաց կամ իրավական անորոշություն, այլ դա օրենսդրի հայեցողության շրջանակներում իրականացված իրավակարգավորում է:

Սահմանադրական դատարանը նաև ընդունում է ի գիտություն, որ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի պահանջներին համապատասխան՝ արգելվում է Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացու ելքը, եթե օրենքով սահմանված կարգով հարուցված քրեական գործով նրա նկատմամբ կիրառվել է խափանման միջոց, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական հետապնդման մարմինը տվյալ անձին Հայաստանի Հանրապետությունից ելքի գրավոր թույլտվություն է տվել:

Սահմանադրական դատարանը հաշվի է առնում նաև միջազգային իրավունքի ակտերով ընդունված այն սկզբունքը, որ իրավախախտի նկատմամբ ազատագրկման հետ չկապված խափանման միջոցի կիրառումը պահանջում է նրա համաձայնությունը (ՄԱԿ-ի ԳԱ 14 դեկտեմբերի 1990թ. 45/110 բանաձևի 3.4 կետ): Ստորագրությունը՝ չհեռանալու մասին, անձի կամաարտահայտության դրսևորում է:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ, ըստ գործի նյութերի, դիմողի նկատմամբ՝ ամբաստանյալի կարգավիճակով, դատաքննությունը շարունակվում է, որի շրջանակներում խափանման միջոցի ընտրության հետ կապված հարցն ակնհայտ անհիմն ձևով է ներկայացվել

որպես սահմանադրաիրավական վեճ, և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով դիմումը ենթակա է մերժման: Քննության առարկա դիմումը չի համապատասխանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Միաժամանակ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումում առկա վեճի առնչությամբ կիրառելի են նաև սահմանադրական դատարանի ՄԴՈ-922 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, սահմանադրական դատարանը գտել է, որ՝ «... օրենսդրի նման մոտեցումն իր հերթին բխում է այն ողջամիտ տրամաբանությունից, որ հարուցված, չկասեցված և շարունակվող վարույթի տրամաբանական ավարտը գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացումն է, հետևաբար՝ նման վարույթի շրջանակներում կայացված միջանկյալ ակտերը, անձի իրավունքի ենթադրյալ խախտման դեպքում, կարող են վիճարկվել գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման շրջանակներում»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ .

1. «Ռոբին-Օֆիկ Օսկանյանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 376.1-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16 փետրվարի 2016 թվականի
ՄԴՈ-1255



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶՍՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԳՈՒՅՔԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ
ՕՐԵՆՔԻ 71-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 փետրվարի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Գ. Հայրապետյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Հ. Սարգսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ի ՏԵՂԵԿՎԱԳԻՐ Ի 4(82)2016
24

հողվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ 19.10.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքները և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1999 թվականի ապրիլի 14-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1999 թվականի ապրիլի 30-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի մայիսի 6-ից:

Օրենքի՝ «Պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման վճարովիությունը» վերստառությամբ՝ սույն գործով վիճարկվող 71-րդ հոդվածը սահմանում է.

«1.Սույն օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների՝ դրանց ծագման, դադարման, փոխանցման կամ փոփոխման պետական գրանցման, ինչպես նաև անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար մատուցվող ծառայությունների համար պետական բյուջե գանձվում է վճար սույն օրենքով սահմանված չափերով՝ գանձապետարանում բացված համապատասխան հաշվին:

2. Դիմողները պարտավոր են վճարել սույն օրենքով սահմանված վճարները»:

Վերը նշված հոդվածը նախատեսվել է 2011թ. հունիսի 23-ից ընդունված ՀՕ-247-Ն օրենքով, որից հետո որևէ փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. դիմողը Երևան քաղաքի փակ շուկայի վերաբերյալ տեղեկություն ստանալու նպատակով 2013 թվականի մայիսի 7-ին գրավոր հարցմամբ

դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին:

Կոմիտեն 18.05.2013թ. թիվ ԿԽ-1/1813 գրությամբ մերժել է դիմումը՝ դիմողին չտրամադրելով հայցվող տեղեկությունը: Մերժումը պայմանավորված է եղել տեղեկատվության տրամադրման համար օրենքով սահմանված վճարը վճարված չլինելու փաստով, ինչպես նաև պահանջվող տեղեկությունների ծավալում ընդգրկված որոշակի տեղեկությունների տրամադրումը օրենքի ուժով սահմանափակված լինելու հանգամանքով:

Դիմողը 23.08.2013թ. ընդդեմ Կոմիտեի ՀՀ վարչական դատարան է ներկայացրել «Տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին» հայցադիմում: Վարչական դատարանը 06.06.2014թ. N ՎԴ/7503/05/13 վարչական գործով վճիռ է կայացրել հայցադիմումը մերժելու մասին՝ պատճառաբանելով նաև, որ հայցվորը չի վճարել փնտրվող տեղեկության համար «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարը:

Դիմողը 30.06.2014թ. վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, որն իր՝ 18.12.2014թ. կայացրած որոշմամբ մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը և բողոքարկվող դատական ակտը թողել անփոփոխ:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշումը դիմողի կողմից 18.01.2015թ. բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան, որը 01.04.2015թ. կայացրել է «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշում:

3. Դիմողը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 8, 18, 23, 27 և 27.1-րդ հոդվածներին՝ այնքանով, որքանով սահմանում են անձի՝ ինքն իր մասին կամ անձի իրավունքների պաշտպանության համար կարևոր կամ հանրային նշանակություն ունեցող (հանրային շահի պաշտպանության համար կարևոր) տեղեկության մատչելիության իրավունքի սահմանափակում:

Դիմողի համոզմամբ՝ սահմանադիրը պետական մարմիններից տեղեկություն կամ փաստաթղթեր ստանալու իրավունքն անմիջականորեն կապել է հասարակական շահերի պաշտպանության հետ: Սահմանադրության (2005 թվականի խմբագրությամբ) 27-րդ և 27.1-րդ հոդվածներում նկարագրված իրավունքի կարևորությունն առարկայացել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում և նույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որոնց՝ տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն

տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը, ընդ որում՝ մինչև 10 էջ տպագրված կամ պատճենահանված նման տեղեկություն տրամադրելիս գանձում չի կատարվում:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը, վկայակոչելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի փակ շուկայի նկատմամբ սեփականության կամ վարձակալության հիմքերի մասին տեղեկություն ստանալու իր հարցումն ունի հանրային նշանակություն, գտնում է, որ հանրային նշանակության որևէ տեղեկություն պետք է անձին հասու լինի անառարկելիորեն, առանց որևէ վճարի կամ այլ պայմանի կամ նախապայմանի, անկախ նրանից, թե գաղտնիության որևէ աստիճան ունի տվյալ տեղեկությունը, թե՛ ոչ, և եթե ունի, ապա՝

ինչպիսի, տեղեկության գաղտնագրված լինելը չպետք է անձին հանրային նշանակության տեղեկության տրամադրումը մերժելու հիմք լինի:

Բացի դրանից, դիմողը գտնում է, որ ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է անձի ինքն իր մասին տեղեկություն ստանալու անսահմանափակ իրավունքը առանց որևէ միջամտության: Պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում կամ որևէ այլ պետական հիմնարկում անձի վերաբերյալ առկա տեղեկությունը պետք է հասու լինի նրան՝ առանց ծանրաբեռնելու որևէ, այդ թվում՝ վճարելու, պարտականությամբ: Այդ իրավունքը բխում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հանրահայտ փաստաթղթերի, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և այլն, պահանջներից:

Եզրափակելով՝ դիմողը շեշտում է, որ չի վիճարկում առհասարակ որևէ տեղեկություն ստանալու համար վճարելու սահմանադրականությունը, չի վիճարկում ծառայությունների մատուցման համար վճարելու սահմանադրականությունը, այլ վիճարկում է այն իրավակարգավորումը, որի շրջանակում պետությունը հանրային կարևորության տեղեկության տրամադրման համար գումար վճարելու պայման է առաջադրում:

Դիմողը հայտնել է նաև, որ ՀՀ Սահմանադրության (2005թ. խմբագրությամբ) 8-րդ հոդվածին համադրելի է ՀՀ Սահմանադրության (2015թ. խմբագրությամբ) 10-րդ հոդվածը, 18-րդ հոդվածին՝ 50-րդ և 61-րդ հոդվածները, 23-րդ հոդվածին՝ 34-րդ հոդվածը, 27-րդ հոդվածին՝ 42-րդ և 51-րդ հոդվածները, 27.1-րդ հոդվածին՝ 53-րդ հոդվածը: Միաժամանակ, դիմողը հայտնել է, որ ՀՀ Սահմանադրության հոդվածների թվագրումը

փոխվել է, սակայն դրանցում նշված իրավունքների բովանդակությունը մնացել է նույնը, ինչի կապակցությամբ, ըստ դիմողի, դիմումում նշված մեկնաբանությունները, դիրքորոշումները և փաստարկները փոփոխության ենթարկելու անհրաժեշտությունը բացակայում է:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ տեղեկատվական հասարակության ներկա պայմաններում տեղեկատվության իրավունքը հանդես է գալիս որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկը: Մերտորեն առնչվելով հասարակական կյանքի ոլորտներին՝ այս իրավունքի իրականացումը նախադրյալներ է ստեղծում մարդու այլ հիմնական իրավունքների իրականացման համար:

Տեղեկատվության ազատության իրավունքը պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովել այդ իրավունքի իրականացման համար անհրաժեշտ օրենսդրական պայմաններ:

Պատասխանողը նշում է, որ տեղեկատվություն ստանալու իրավունքն իրականացվում է երկու եղանակով՝ ակտիվ և պասիվ: Եթե տեղեկատվություն ստանալու ակտիվ իրավունքն անձից պահանջում է անհրաժեշտ տեղեկություններն ստանալու համար դիմել համապատասխան տեղեկատվությունը տնօրինող մարմիններին, ապա տեղեկատվություն ստանալու պասիվ իրավունքին համապատասխանում է տեղեկատվությունը տնօրինող մարմինների պարտականությունը՝ իրենց նախաձեռնությամբ հրապարակել հանրամատչելի համարվող տեղեկատվությունը: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքն արդեն իսկ նախանշել է հանրային նշանակություն ունեցող այն տեղեկատվությունը, որը հրապարակելու կամ անհատույց տրամադրելու պարտականությունը դրվել է համապատասխան տեղեկատվությունը տնօրինող մարմինների վրա: Այդպիսի դրույթները երաշխիք են հանդիսանում քաղաքացիական հասարակության կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության, հասարակական կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնելու համար:

Ըստ պատասխանողի՝ ի տարբերություն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի, որը սահմանում է տեղեկատվության տրամադրման ընդհանուր կանոնները, առանձին օրենքներով, այդ թվում՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են առանձին ոլորտներում տեղեկատվության տրամադրման հետ կապված հարաբերությունները: Հաշվի առնելով տեղեկատվություն ստանալու իրավունքի կարևորությունը տեղեկատվության տրամադրման դիմաց գանձվող վճարները չպետք է լինեն այնքան բարձր,

որ խոչընդոտ հանդիսանան իրավունքի իրականացման համար: Տեղեկատվություն ստանալու վճարովիությունն ունի փոխհատուցող բնույթ, ինչպես նաև զսպող նշանակություն:

Պատասխանողը նշում է, որ անվճար սկզբունքով տեղեկատվության տրամադրումն ընդունված է միայն որոշ բովանդակությամբ տեղեկատվության դեպքում, որն ունի հանրային նշանակություն, հետաքրքրություն է ներկայացնում հասարակության լայն զանգվածների համար կամ դրա մասին հանրությանն անհապաղ իրազեկելը պայմանավորված է խիստ անհրաժեշտությամբ: Անվճար հիմունքներով տեղեկատվության տրամադրումը պայմանավորվում է ոչ թե տեղեկատվությունը հայցող սուբյեկտների կարգավիճակով, այլ տեղեկատվության բնույթով:

Պատասխանողն անդրադառնում է նաև միջազգային փորձին՝ վկայակոչելով մի շարք երկրների օրենսդրությունները, որոնցում նույնպես նախատեսվում է տեղեկատվության ստացման վճարովիություն: Պատասխանողը նշում է, որ անգամ սկզբունքորեն անվճար հիմունքներով տեղեկատվություն ստանալու իրավունք նախատեսող երկրների օրենսդրությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման մասին օրենքներով նախատեսվում են համապատասխան ծառայությունների տրամադրման համար գանձվող վճարների չափերը:

Ամփոփելով՝ պատասխանողը եզրակացնում է, որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը, սահմանվել են՝ հաշվի առնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները, իսկ հայցվող տեղեկատվության տրամադրման դիմաց նախատեսվող վճարները ոչ թե նպատակաուղղված են տեղեկատվության մատչելիության իրավունքի սահմանափակմանը, այլ հանդես են գալիս որպես նշված իրավունքի իրականացման ընթացակարգի բաղկացուցիչ հանդիսացող պայմաններ:

5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում դիմողը մատնանշում է երկու խնդիր, այն է՝

1.անձի իր մասին տեղեկություն ստանալու վճարովիությունը,

2.անձի իրավունքների պաշտպանության համար կարևոր կամ հանրային նշանակություն ունեցող (հանրային շահի պաշտպանության համար կարևոր) տեղեկություն ստանալու վճարովիությունը:

Ուստի սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյոք հանրային շահերից բխող տեղեկություն ստանալու վճարովիությունը չի խախտում ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով, ինչպես

նան Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված տեղեկություններ ստանալու իրավունքը,

- արդյոք անձի՝ իր մասին տեղեկություններ ստանալու իրավունքի իրականացման վճարովիությունը համահունչ է ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի պահանջներին,

- արդյոք տեղեկություն տրամադրելու համար «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված վճարման կարգն ու վճարի չափը չեն հանգեցնում տեղեկատվության ազատության՝ օրենքով սահմանված երաշխիքների հնարավոր արգելափակման:

6. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկատվություն ստանալու՝ անձի իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ 51-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք»: Սահմանադրական այս իրավունքն օրենքով կարող է սահմանափակվել երկու դեպքում՝

- 1) երբ անհրաժեշտ է պաշտպանել հանրային շահերը,
- 2) երբ անհրաժեշտ է պաշտպանել այլոց հիմնական իրավունքները և ազատությունները:

Բացի դրանից, տեղեկատվություն ստանալու իրավունքին են առնչվում ՀՀ Սահմանադրության մի շարք այլ հոդվածներ, մասնավորապես՝ 34-րդ (Անձնական տվյալների պաշտպանությունը), 42-րդ (Կարծիքի արտահայտման ազատությունը) և 53-րդ (Հանրագիր ներկայացնելու իրավունքը) հոդվածները:

Տեղեկություններ ստանալու իրավունքի իրագործման հիմնական օրենսդրական երաշխիքները սահմանվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով: Այն ունի ընդհանուր բնույթ, սահմանում է տեղեկատվության ոլորտում հիմնական սկզբունքները, տեղեկություններ ստանալու իրավունքի սահմանափակումները, տեղեկություններ ստանալու հայտի ներկայացման կարգը և այլն: Ըստ այդ օրենքի՝ տեղեկատվության տրամադրումն օրենքով սահմանված դեպքերում իրականացվում է անվճար սկզբունքով: Մասնավորապես՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղեկության տրամադրման համար զանձում չի կատարվում հետևյալ դեպքերում՝

- «1) բանավոր հարցումներին պատասխանելիս.

կարգավիճակով՝ յուրաքանչյուր անձ, ով հայցում է ստանալ նման տեղեկություններ, օգտվում է տեղեկատվության համար վճարի 50 տոկոսի զեղչից: Մյուս դեպքում՝ տեղեկության ստացման համար վճարելու պարտականությունից ազատվում են պետական համակարգի մի շարք մարմիններ, այսինքն՝ արտոնության կիրառումն ուղղակի կապվում է հայցող սուբյեկտի կարգավիճակի հետ: Տեղեկատվության համար վճարից ազատելու այլ դեպքեր օրենքը չի նախատեսում:

Համադրելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 71-րդ հոդվածների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կոնկրետ ոլորտին վերաբերող իրավական ակտով անտեսվել է տեղեկատվության ազատության՝ օրենքով նախատեսված երաշխիքների իրացումը: Նման իրավիճակը չի բխում ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքից, համաձայն որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

7. Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Պետական մարմինների տրամադրության տակ գտնվող տեղեկատվության հասանելիության մասին» NR(81)19 հանձնարարականի պահանջներին, համաձայն որոնց՝

«I. Անդամ պետության իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի ստանալ պետական մարմինների տրամադրության տակ գտնվող հայցվող տեղեկատվությունը, բացառությամբ օրենսդիր և դատական իշխանության մարմինների:

II. Տեղեկատվության հասանելիությունը ապահովելու համար անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան արդյունավետ միջոցներ:

III. Տեղեկատվության հասանելիությունը չի կարող մերժվել՝ պատրվակով, որ տեղեկատվություն հայցողը չունի հատուկ հետաքրքրություն տվյալ ոլորտում:

IV. Տեղեկատվության հասանելիությունը պետք է ապահովվի իրավահավասարության հիման վրա:

V. Վերոհիշյալ սկզբունքները ենթակա են սահմանափակման միայն այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում հասարակության օրինական շահերի պաշտպանության համար (ինչպես, օրինակ, ազգային անվտանգությունը, հասարակական

անվտանգությունը, հասարակական կարգը, երկրի տնտեսական բարեկեցությունը, հանցագործությունների կանխումը և կոնֆիդենցիալ տեղեկության բացահայտումը կանխելը), ինչպես նաև մասնավոր կյանքի և մասնավոր այլ իրավաչափ շահերի պաշտպանության համար, հաշվի առնելով յուրաքանչյուր անձի հատուկ հետաքրքրությունը պետական մարմիններում առկա այն տեղեկության առնչությամբ, որը վերաբերում է անձամբ իրեն:

VI. Տեղեկություն հայցելու դիմումները պետք է քննարկվեն ողջամիտ ժամկետներում:

VII. Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում համապատասխան պետական գերատեսչությունը օրենքի կամ պրակտիկայի համաձայն պետք է հիմնավորի մերժման պատճառները:

VIII. Տեղեկատվության մերժման յուրաքանչյուր դեպք պետք է բողոքարկելի լինի»:

Բացի դրանից, հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում անդրադարձել է տեղեկատվության ազատության խնդիրներին, մասնավորապես. 2009թ. ապրիլի 14-ի *Társaság a Szabadságjogokért v. Hungary* (զանգատ թիվ 37374/05) գործով դատարանը եզրահանգել է, որ հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկության տրամադրման խոչընդոտները կարող են բացասաբար ազդել ՁԼՄ-ներում և հարակից ոլորտներում գործունեություն ծավալող անձանց վրա: Իսկ 2013թ. նոյեմբերի 28-ի *Österreichische Vereinigung zur Erhaltung, Stärkung und Schaffung eines wirtschaftlich gesunden land und forstwirtschaftlichen Grundbesitzes v. Austria* (զանգատ թիվ 39534/07) վճռով դատարանը վերահաստատել է նախկին դիրքորոշումները, այն է՝ կողմնակից է «տեղեկություններ ստանալու ազատության» հասկացության ավելի լայն մեկնաբանմանը, որը ներառում է տեղեկությունների մատչելիության սկզբունքը:

Ամփոփելով վերոհիշյալ պահանջները և համադրելով վեճի առարկա օրենքի իրավակարգավորումների հետ՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնատար անձանցից տեղեկություններ ստանալու իրավունքը պետության համար ստեղծում է պոզիտիվ պարտականություններ ապահովելու համապատասխան իրավունքի պատշաճ և արդյունավետ իրականացումը: Օրենսդիրը՝ կարգավորելով անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար վճար վճարելու հետ կապված իրավահարաբերությունները, կաշկանդված է տեղեկատվության մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանա-

դրությամբ նախատեսված՝ տեղեկություններ ստանալու իրավունքը կարող է իրականացվել տարբեր եղանակներով:

Մասնավորապես՝ կախված տեղեկության բովանդակությունից և նշանակությունից, այն կարող է հասու լինել կամ որպես պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվություն, կամ որպես օրենքով նախատեսված կարգով տրամադրվող տեղեկություն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են տեղեկատվություն տնօրինողի կողմից իր գործունեությանն առնչվող ու տարին առնվազն մեկ անգամ հրապարակվող այն տեղեկությունները և դրանցում կատարված փոփոխությունները, որոնց առնչությամբ ՀՀ Սահմանադրությամբ և (կամ) օրենքով այլ բան նախատեսված չէ: Վերջինս, ըստ օրենսդրի, այն նվազագույն տեղեկատվությունն է, որը պետք է հասու լինի յուրաքանչյուրին որպես հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ: Սակայն դրանով չի սահմանափակվում հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության շրջանակը: Յուրաքանչյուր անձ, այդ թվում՝ կազմակերպություն, պետք է հնարավորություն ունենա իրավահավասարության պայմաններում պահանջելու կամ ծանոթանալու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող տեղեկությանը, եթե նման տեղեկության տրամադրումը չի խախտում հանրային շահերի կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Ընդ որում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով արդեն իսկ նախանշված է տեղեկությունների այն շրջանակը, որը ցանկացած պայմաններում չի կարող հիմք հանդիսանալ հանրային շահի խախտման հիմքով տեղեկությունների տրամադրման սահմանափակման համար:

Ինչ վերաբերում է անձի իր մասին տեղեկություններին ծանոթանալու մատչելիությանը, ապա այդ իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներում, մասնավորապես՝ «Անձնական տվյալների պաշտպանությունը» վերտառությամբ 34-րդ հոդվածով, որի 3-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իր մասին հավաքված տվյալներին ...»: Այս իրավունքը պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով կարող է սահմանափակվել օրենքով:

Տեղեկատվության մատչելիությանն առնչվող տեղեկատվության վճարովիությունը, եթե խոսքը չի վերաբերում պետական և տեղական

ինքնակառավարման մարմինների կողմից մատուցված ծառայությունների կամ տեղեկությունների տրամադրման համար պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից կատարված փաստացի և ողջամիտ ծախսերին, կարող է խոչընդոտ հանդիսանալ տեղեկություններ ստանալու իրավունքի արդյունավետ իրականացման համար:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ տեղեկատվության վճարի սահմանման չափը թեև գտնվում է օրենսդրի լիազորությունների շրջանակներում, այնուամենայնիվ, այն պետք է համահունչ լինի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Բացի դրանից, օրենսդրի խնդիրն է ապահովել անվճարունակ անձանց համար իրենց մասին տեղեկատվություն ստանալու վճարովիության սկզբունքից արտոնություններ՝ ապահովելով ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքների և ազատությունների, տվյալ պարագայում՝ տեղեկություններ ստանալու իրավունքի էության անխախտելիությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված 32-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 34, 51, 78, 79 և 80-րդ հոդվածներին հակասող, այնքանով, որ տարբերակված մոտեցում չեն սահմանում, երբ տեղեկատվությունը վերաբերում է անձի՝ իր մասին հայցվող տեղեկությանը, ինչպես նաև տեղեկատվության ազատության՝ օրենքով սահմանված երաշխիքների իրացմանը:

2. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու

վերջնաժամկետ սահմանել 2016 թվականի նոյեմբերի 1-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը իրենց իրավասության շրջանակներում, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին՝ հաշվի առնելով իրավունքների սահմանափակման առնչությամբ 2015թ. սահմանադրական փոփոխություններով ամրագրված նոր հստակեցումները:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23 փետրվարի 2016 թվականի
ՍԴՈ-1256



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԼԻԼԻԹ ՍՈՒՍԵՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 76-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող Լիլիթ Սուսեյանի ներկայացուցիչներ Ա. Զեյնալյանի, Ա. Կիրակոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Ս. Առաքելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38, 68 եւ 69-րդ

հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լիլիթ Մուսեյանի դիմումի հիման վրա` ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի` Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լիլիթ Մուսեյանի` 26.10.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (ՀՕ-139-Ն) (այսուհետ` օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել` 2013 թվականի դեկտեմբերի 28-ին եւ ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի` սույն գործով վիճարկվող 76-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է.

«Հոդված 76. Հայցադիմումը և կից փաստաթղթերը պատասխանողին և դատավարության մյուս մասնակիցներին փոստով ուղարկելը

...

6. Վարչական մարմին կամ պաշտոնատար անձ հանդիսացող պատասխանողին հայցադիմումը և կից փաստաթղթերն ուղարկվում են նրանց պաշտոնական հասցեով:

Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը փոփոխության եւ լրացման չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին:

Լիլիթ Մուսեյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան Երևանի քաղաքապետի 20.01.2015թ. թիվ Վ-53/894 որոշումն առ ոչինչ ճանաչելու վերաբերյալ: ՀՀ վարչական դատարանի` 04.03.2015թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է հետևյալ հիմնավորմամբ. «Տվյալ դեպքում որպես հայցադիմումը եւ կից փաստաթղթերը պատասխանողին ուղարկելը հավաստող ապացույց հայցադիմումին կցվել է «Gmail» էլեկտրոնային փոստի միջոցով «mayor@yerevan.am», «admin@yerevan.am» եւ «press@yerevan.am» կայքերին հասցեագրված ծանուցագիրք, որը, Դատարանի գնահատմամբ, հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին ուղարկելը հավաստող

ապացույց չի կարող հանդիսանալ, քանի որ հայցադիմումով որպես պատասխանող է նշված Երեւանի քաղաքապետը եւ վերջինիս հասցեագրված հայցադիմումը եւ կից փաստաթղթերի պատճենները պետք է ուղարկվեն նրա պաշտոնական հասցեով, ինչպիսի պահանջը հայցվորի կողմից չի պահպանվել, որն էլ հիմք է հայցադիմումը վերադարձնելու համար»:

ՀՀ վարչական դատարանի հիշյալ որոշման դեմ Լիլիթ Մուսեյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վարչական դատարան: Վերջինս իր՝ 22.04.2015թ. որոշմամբ մերժել է վերաքննիչ բողոքը՝ անփոփոխ թողնելով ՀՀ վարչական դատարանի՝ 04.03.2015թ. որոշումը՝ հիմք ընդունելով ՎԴ/4971/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում դատավարական փաստաթղթերի առաքման հիմնական միջոց դիտարկվում է փոստը, իսկ էլեկտրոնային փոստը նախատեսվում է որպես ընդհանուր կանոնից բացառություն՝ որի կիրառելիության թույլատրելիության մասին օրենսդիրը հատուկ նշում է, օրինակ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասում:

Դիմողի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի կողմից՝ 03.06.2015թ. որոշմամբ:

Նույնպիսի հիմնավորումներով վերադարձվել եւ մերժվել են Երեւանի քաղաքապետի՝ 23.01.2015թ. թիվ Վ-1/1110 որոշումն առ ոչինչ ճանաչելու պահանջի մասին դիմողի՝ համապատասխանաբար ՀՀ վարչական դատարան ներկայացրած հայցադիմումը, ինչպես նաեւ վերաքննիչ ու վճռաբեկ բողոքները:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակիցներին կամ գործը քննող դատարան փոստի միջոցով ուղարկելու վերաբերյալ իրավակարգավորումն այն դեպքում, երբ էլեկտրոնային փոստի միջոցով այդպիսի փաստաթղթերի առաքման հնարավորությունը սահմանափակված է, «դուրս է ողջամտության սահմաններից», խոչընդոտում է անձի Սահմանադրությամբ երաշխավորված դատավարական իրավունքների իրացմանը, քանի որ ժամանակակից տեղեկատվական եւ հաղորդակցության միջոցները հնարավորություն են տալիս մարդու գործունեության տարբեր ոլորտներում ապահովել էլեկտրոնային միջոցով փաստաթղթաշրջանառություն, որը համարվում է ժամանակակից, հուսալի եւ մատչելի միջոց: Այն հնարավորություն է տալիս «էժանացնել արդարադատությունը», որը, ըստ դիմողի, դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր է: Դիմողը կարծում է, որ իրավակիրառ պրակտիկայում ձեւավորվել է խտրական մոտեցում՝ կապված էլեկտրոնային ծանուցում-

ների հետ: Մասնավորապես, դատարանների կողմից «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործին մասնակցող անձանց ծանուցումները կատարվում են նաեւ էլեկտրոնային եղանակով, սակայն վիճարկվող դրույթը մերժում է դատավարության մասնակիցների կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցումների իրականացումը: Դիմողը հանգել է այն եզրակացությանը, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «պաշտոնական հասցեով» դրույթն իրավակիրառական պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, որով պաշտոնական հասցե չի համարվում պետական մարմնի կամ պաշտոնատար անձի էլեկտրոնային պաշտոնական հասցեն, «հակասում է ՀՀ Սահմանադրության (2005թ. փոփոխություններով խմբագրությամբ) 3-րդ, 18-րդ, 19-րդ, 27.1-րդ հոդվածներին, քանի որ խոչընդոտում է անձի դատավարական իրավունքների իրացմանը», ինչպես նաեւ «խախտում է արդարադատության մատչելիության եւ հասանելիության սկզբունքները»:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ վիճարկվող նորմի պահանջները չպահպանելն ինքնին չի կարող արգելակել դատարանի մատչելիության իրավունքը, իսկ այդ պահանջները չպահպանելը հայցադիմումը վերադարձնելու հիմք է, որը հնարավորություն է տալիս նաեւ դիմողին դատարանի կողմից մատնանշված թերությունները վերացնելուց հետո կրկին դիմել դատարան:

Պատասխանող կողմի եզրահանգման համաձայն. «...ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածը սահմանում է հայցադիմումը եւ կից փաստաթղթերը պատասխանողին եւ դատավարության մյուս մասնակիցներին փոստով ուղարկելու կարգը», եւ «...Այսպիսի իրավակարգավորումը վկայում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում սկզբունքորեն գործում է փոստով ծանուցման եղանակը»: Մյուս կողմից, ինչպես գտնում է պատասխանող կողմը, «...օրենսդիրը հնարավորություն է տվել համապատասխան պայմանների առկայության դեպքում դատական ծանուցումներն իրականացնել նաեւ էլեկտրոնային եղանակով»: Հետեւաբար, «...հայցադիմումը եւ կից փաստաթղթերը պատասխանողին փոստով ուղարկելու պահանջը պետք է դիտել որպես վարչական դատարանի դիմելու իրավունքի իրականացման նախապայմաններից մեկը, որը անձի վրա չի դնում անիրագործելի պարտականություն եւ իր էությամբ չի կարող խոչընդոտ հանդիսանալ անձի դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար»: Ըստ պատասխանող կողմի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. Սույն գործով սահմանադրական դատարանը, ելնելով նաև դիմումում առաջադրված հարցադրումների բովանդակությունից, անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատել դատական պաշտպանության եւ, մասնավորապես՝ վերջինիս կարելու տարր հանդիսացող արդարադատության մատչելիության իրավունքի համատեքստում, կարելուրելով.

- արդարադատության մատչելիության (դատարան դիմելու իրավունքի) որպես Սահմանադրությամբ նախատեսված դատական պաշտպանության իրավունքի իրացման կարելուր նախապայմանի ազատ իրականացման երաշխավորումը, գնահատելով այն այդ իրավունքի իրացման ընթացակարգային գործող կանոնների եւ դրանց կիրառմամբ առաջացած իրավական հնարավոր հետեւանքների շրջանակներում,

- վեճի առարկա կանոնակարգմամբ պայմանավորված՝ իրավական սահմանափակման համադրելիությունն արդարադատության մատչելիության իրավունքի բուն էությանը, ինչպես նաև այդ իրավունքի իրացման միջազգային իրավական չափանիշներին,

- քննության առարկա նորմատիվ կարգավորմամբ հետապնդվող նպատակի եւ դրան հասնելու իրավական միջոցի համաչափությունը, ինչպես նաև դատական հայեցողության շրջանակները:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատել նաև իր նախորդ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության հետ կապված հանրային բնույթի հասարակական հարաբերությունները կարգավորող օրենսդրության այլ ակտերի համապատասխան դրույթների համատեքստում:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ դիմողի ներկայացրած դիմումի հիման վրա գործը քննության ընդունելու պահին գործել է 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը, եւ դիմողը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի նորմերի սահմանադրականությունը վիճարկում է այդ խմբագրությամբ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու տեսանկյունից: 2015 թվականի դեկտեմբերի 22-ից ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով կատարված փոփոխություններով ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթներ: Հետեւաբար, սույն գործով վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս սահմանադրական դատարանն առաջնորդվում է Սահմանադրության գործող իրավադրույթներով:

6. Անձի իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության իրավունքը նախատեսված է ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 61-րդ եւ 63-րդ հոդվածներով, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների եւ ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ եւ անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային եւ ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Դատարան դիմելն անձի իրավունքն է, որի իրացումն օրենքով նախատեսված իրավական գործընթաց է, պայմանավորված չէ դատական կամ հանրային իշխանության այլ մարմնի հայեցողությամբ, եւ որի իրացմամբ առաջացած իրավական հետեւանքները պարտադիր են ինչպես դիմող անձի, դատավարության մյուս մասնակիցների, այնպես էլ դատարանի համար, քանի որ, ինչպես վկայում է դատավարական օրենսդրության (ՀՀ քաղաքացիական, քրեական եւ վարչական դատավարության օրենսգրքերի) համապատասխան նորմերի ուսումնասիրությունը, անձի հայցադիմումին հաջորդում են ընթացակարգային նորմերով կարգավորվող հասարակական հարաբերություններ, որոնց շրջանակներում իրացվում են փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ: Անձի հայցադիմումն ընդունելու կամ ընդունումը մերժելու դեպքում դատարանը պարտավոր է կայացնել անհրաժեշտ հիմնավորումներով դատական ակտ, որը պարտադիր է դիմողի եւ դատավարության այլ մասնակիցների համար:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից ընդհանրապես առաջնահերթ կարեւոր է, թե որքանով է մատչելի (հասանելի) արդարադատությունը, ինչպիսի՞ իրավական պայմաններ են առաջադրված դատարան դիմելու իրավունքն իրացնելու, հետեւաբար, նաեւ դրանով պայմանավորված՝ դատավարական (քրեական, քաղաքացիական եւ վարչական) կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար: Առանց անձի դատարան դիմելու կամահայտ դրսեւորման, դատական պաշտպանության իրավունքի իրացումը եւ ընդհանրապես արդարադատության իրականացումն իրավաբանորեն անիրագործելի են: Դատարան դիմելու իրավունքի իրացման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով: Չնայած այդ իրավունքն անմիջականորեն նախատեսված չէ ՀՀ Սահմանադրությամբ, այնուհանդերձ, բխում է Սահմանադրության 61-րդ եւ 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակությունից: Դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման երաշխավորումն իրավական առաջնահերթ նախապայման է անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները

դատական կարգով պաշտպանելու համար: Հետեւաբար, այդ հանգամանքով է պայմանավորված վեճի առարկա իրավակարգավորման սահմանադրականությունը հատկապես դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում գնահատելը:

7. Իր մի շարք որոշումներով (ՄԴՈ-652, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-765, ՄԴՈ-844, ՄԴՈ-873, ՄԴՈ-890, ՄԴՈ-932, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1052, ՄԴՈ-1115, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1196, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1220, ՄԴՈ-1222) սահմանադրական դատարանը հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար եւ արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարեւորությունը դատարնթացակարգային բնագավառներում:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 61-րդ եւ 63-րդ հոդվածների իրավակարգավորման հիմքում դրված են անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման սահմանադրաիրավական այն սկզբունքները, որոնց համատեքստում սահմանադրական դատարանն իր վերոհիշյալ որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ: Այդ դիրքորոշումներն արտացոլում են նաեւ միջազգային իրավական փորձի համալիր ուսումնասիրության արդյունքները: Հետեւաբար, սահմանադրական դատարանը վերահաստատում է իր նախորդ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները եւ արձանագրում, որ դրանք այնքանով, որքանով վերաբերելի են վեճի առարկա իրավակարգավորմանը, կիրառելի են նաեւ սույն գործի շրջանակներում:

Սահմանադրական դատարանը վերոթվարկյալ որոշումներում կարեւորել է իրավակարգավորման սկզբունքներ (չափանիշներ), որոնք սույն գործով վեճի առարկա նորմի սահմանադրականության գնահատման տեսանկյունից ունեն սկզբունքային նշանակություն, մասնավորապես.

- դատավարական որեւէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել էլ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որեւէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի

- մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,
 - դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,
 - դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձեռակապահանջներով,
 - դատական ակտի դեմ ներկայացված բողոքի ընդունելիության պայմաններ, բողոքարկման ժամկետ սահմանելիս պետք է գերակայեն դատարանի մատչելիության իրավունքի ապահովման երաշխիքները,
 - դատական ակտի պատճառաբանվածությունը, ըստ որի ընդունվում կամ մերժվում է անձի դիմումը, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման իրավունքը մատչելիության իրավունքի իրացման երաշխիքներ են,
 - օրենսդրական կանոնակարգումը չի կարող սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն առաջացնել անձանց համար՝ կախված նրանց ֆինանսական հնարավորություններից, արդյունքում չապահովելով դատարանի մատչելիության իրավունքը:

8. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի վիճարկվող 6-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելիս սահմանադրական դատարանը ելնում է այդ նորմատիվ դրույթն օրենսգրքի 12 եւ 13-րդ գլուխներում ներառված նորմերի համակարգային ամբողջության մեջ դիտարկելու եւ գնահատելու անհրաժեշտությունից, քանի որ այդ նորմերն իրենց կարգավորման առարկայով, այսինքն՝ վարչական դատարանում գործ հարուցելու (դատարան դիմելու) կամ հարուցումը մերժելու հետ կապված համասեռ հարաբերություններ կարգավորելու առումով փոխլրացնում են միմյանց, կազմում են կառուցակարգային ամբողջություն: Այս համատեքստում է անհրաժեշտ գնահատել, թե որքանով է համապատասխանում վեճի առարկա իրավակարգավորումն արդարադատության մատչելիության սահմանադրաիրավական, ինչպես նաև միջազգային իրավական չափանիշներին:

Ինչպես հետևում է օրենսգրքի 12-րդ գլխում ամփոփված հոդվածների վերլուծությունից, որպես գործ հարուցելու հիմք (առիթ, օրինական միջոց) սահմանված է հայցը (օրենսգրքի 65-րդ հոդված)՝ գրավոր փաստաթուղթ, որն ստորագրվում է դատարան է ներկայացվում հայցվորի կամ նրա ներկայացուցչի կողմից, բովանդակում է բոլոր այն պարտադիր եւ հայեցողական տեղեկությունները, ինչպես նաև հայցին կցվող փաստաթղթերը, որպիսիք նախատեսված են օրենսգրքի 73 եւ 74-րդ հոդվածներում: Օրենսգրքի 76-րդ հոդվածի նորմատիվ պահանջն է՝ հայցադիմումը և կից փաստաթղթերը պատասխանողին և դատավարության մյուս

մասնակիցներին վաղօրոք (մինչ դատարան դիմելը) փոստով ուղարկելը եւ այն հավաստող ապացույցները հայցադիմումին կցելը:

Օրենսդիրն անհրաժեշտաբար սահմանել է նաեւ հայցադիմումը դատարան ներկայացնելու ժամկետները եւ եղանակը, համաձայն որոնց ժամկետների հաշվարկման հիմք են հանդիսանում իրավաբանական կոնկրետ փաստեր (օրենսգրքի 72-րդ հոդված), իսկ հայցադիմումը հայցվորը վարչական դատարան է ներկայացնում առձեռն կամ ուղարկում է փոստով (օրենսգրքի 75-րդ հոդված):

Վերոհիշյալ նորմատիվ պահանջների կատարման (պատշաճության) հանգամանքով է պայմանավորված վարչական դատարանի հայցադիմումը վարույթ ընդունելու կամ ընդունումը մերժելու մասին, կամ՝ օրենսգրքի 77-րդ հոդվածով նախատեսված այլ որոշման կայացումը: Այսինքն՝ վերոհիշյալ իրավակարգավորումների բովանդակությունից հետեւում է, որ նման որոշման կայացումը ոչ թե դատական հայեցողության, այլ օրենսգրքի 72, 73, 74, 75 եւ 76-րդ հոդվածների նորմատիվ դրույթների անմիջական կիրառման արդյունք պետք է հանդիսանա:

Միաժամանակ, օրենսգրքի 79 եւ 80-րդ հոդվածներում նախատեսված է հայցադիմումում առկա առերևույթ սխալները (այդ թվում՝ օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը կատարելու մասով) վերացնելու եւ այն դատարան նորից ներկայացնելու, ինչպես նաեւ հայցադիմումի ընդունելիության վերաբերյալ վարչական դատարանի ընդունած ակտի բողոքարկման դատավարական հնարավորությունը, որպիսիք կարելու էրաշխիք են դատարանի (արդարադատության) մատչելիության ապահովման տեսանկյունից:

Այսպիսով, օրենսդիրը հստակեցրել է այն հիմնական, պարտադիր (ոչ հայեցողական) իրավապայմանները, որոնց առկայության պայմաններում անձը հնարավորություն է ստանում վարչական դատարանից հայցել իր իրավունքների ու ազատությունների պաշտպանություն, այսինքն՝ իրացնել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իր իրավունքը: Այս առումով, վարչական դատարանը (վարչական արդարադատությունը) անձին մատչելի է այնքանով, որքանով վերջինս պատշաճ պահպանել է դատարան դիմելու՝ օրենսգրքով սահմանված իրավապայմանները:

Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում վերոհիշյալ իրավապայմանների եւ դրանք նախատեսող նորմերի վերլուծությունը վկայում է, որ վիճելի իրավակարգավորման շրջանակում օրենսդիրը.

- վարչական դատարան դիմելու իրավունքի իրացման (հայցադիմում ներկայացնելու) համար նախատեսել է մի շարք ձեւական եւ բովանդակային պահանջներ, որպիսիք անհրաժեշտ են դիմողի անձը (ներկայա-

ցուցին) նույնականացնելու, դատարան ներկայացվող հայցադիմումը, այդ անձի իրավունքների ու ազատությունների խախտման փաստը, հանգամանքները, պատասխանողին ուղղված իրավական պահանջը մասնագիտորեն ձեւակերպելու, առկա վեճի բնույթն ու բովանդակությունը դատարանի կողմից պարզելու եւ դրան իրավական գնահատական ու լուծում տալու նպատակով,

- պարտադիր է համարել դիմող անձի կողմից իր հայցադիմումը և կից փաստաթղթերի պատճենները (եթե դրանք հնարավոր է պատճենահանել) պատասխանողին և երրորդ անձանց ուղարկելը եւ այն հավաստող ապացույցները դատարան ներկայացնելը, որն անհրաժեշտ է դատավարության շահագրգիռ մասնակիցների իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու, նրանց կողմից իրավունքից բխող իրենց գործողությունները (պաշտպանական եւ այլն) նախապես պլանավորելու եւ իրացնելու տեսանկյունից,

- առանձնահատուկ կարեւորել է հայցադիմումի եւ կից փաստաթղթերի պատճենները պատասխանողին եւ շահագրգիռ այլ անձանց երաշխավորված ուղարկելու հանգամանքը՝ սահմանելով այն պարտադիր փոստային հասցեները, որոնցով հիշյալ փաստաթղթերի առաքման փաստն ինքնին գնահատելի է որպես իրավական բավարար պայման՝ դատավարության մասնակիցների իրավունքների ու շահերի պաշտպանությունն իրացնելի համարելու տեսանկյունից: Մասնավորապես, վարչական մարմնին կամ պաշտոնատար անձ հանդիսացող պատասխանողին հայցադիմումը եւ կից փաստաթղթերը հատկապես նրանց պաշտոնական փոստային հասցեով ուղարկելու վերաբերյալ նորմատիվ պահանջը, որը սույն գործով վեճի առարկա է, պայմանավորված է իրավական այն արդարացի հանգամանքով, որ հիշյալ մարմինը կամ պաշտոնատար անձը վարչական դատավարությունում հանդես է գալու Մահմանադրությամբ, օրենքով կամ իրավական այլ ակտով նախատեսված իր իրավական կարգավիճակից բխող իրավունքների ու պարտականությունների շրջանակներում, եւ ոչ որպես մասնավոր կամ վարչական մարմին չհանդիսացող անձ: Այսինքն, վարչական դատարան դիմելու ընթացակարգի շրջանակներում օրենսդիրը հնարավոր եւ ողջամիտ է համարել փոստային առաքման եղանակի ընտրությունը, վարչական մարմնի կամ պաշտոնատար անձ հանդիսացող պատասխանողի առնչությամբ նախատեսելով պարտադիր համարվող փոստային հասցե, որպիսի հանգամանքը, սահմանադրական դատարանի գնահատմամբ, մատչելի, հասանելի եղանակ է այս կամ այն վարչական մարմնին կամ պաշտոնատար անձին՝ վերջիններիս նկատմամբ վարչական դատարանում հայց հարուցելու անձի մտադրության, ներկայացվող իրավական պահանջների բնույթի եւ բովանդակության մասին տեղեկացնելու, ինչպես

նաեւ իրավական երաշխիք է վարչական դատարանում կոնկրետ գործի քննությունն նախաձեռնելու համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ միաժամանակ էլեկտրոնային հասցեով վերոհիշյալ փաստաթղթերը դատարան, պատասխանողին եւ դատավարության այլ մասնակիցներին ուղարկելու իրավական պայմանի բացակայությունը խոչընդոտ չէ դատարանի մատչելիության իրավունքի իրացմանը եւ չի կարող մեկնաբանվել որպէս այդ իրավունքի էության խաթարում: Հետեւաբար, այս հարցում դիմող կողմի փաստարկները հիմնավոր չեն:

Անդրադառնալով վեճի առարկա իրավակարգավորման շրջանակներում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության հետ կապված հանրային բնույթի հասարակական հարաբերությունները կարգավորող օրենսդրության այլ ակտերի նորմերի կիրառման վերաբերյալ դիմող կողմի փաստարկներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այդ ակտերի նորմերը կիրառելի են օրենքով նախատեսված դեպքերում («էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մաս, «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մաս): Հետեւաբար, նկատի ունենալով վեճի առարկա նորմատիվ կարգավորման շրջանակներում էլեկտրոնային հաղորդակցության միջոցների կիրառման իրավական հնարավորության բացակայությունը՝ սահմանադրական դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի եւ վերոհիշյալ ակտերի նորմերի համադրված վերլուծությանը եւ դրանց սահմանադրաիրավական գնահատմանը չի անդրադառնում:

9. Անդրադառնալով նաեւ դիմող կողմի այն պնդմանը, համաձայն որի՝ դատարան էլեկտրոնային եղանակով դիմելն ավելի «հուսալի», «էժան» եւ «մատչելի» միջոց է, սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական պաշտպանության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից «էժան արդարադատությունը», կամ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ դատարան դիմելու գործընթացներն առավել հուսալի կամ մատչելի համարելն ինքնին չեն կարող դիտարկվել որպէս դատարանի մատչելիությունն ապահովող անհրաժեշտ երաշխիքներ: Դատարանի մատչելիության մակարդակը կամ այդ իրավունքի էությունն սկզբունքորեն բնորոշվում է որպէս մի քանի բաղադրիչների ամբողջություն: Սահմանադրական դատարանն արդարադատության մատչելիության սահմանադրաիրավական չափանիշների վերաբերյալ վերը թվարկված իր բազմաթիվ որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներում, ելնելով նաեւ Մարդու իրավունքների եվրոպա-

կան դատարանի նախադեպային իրավունքում հաստատագրված չափանիշներից, հատկանշել է հետևյալ առաջնահերթ տարրերը.

- հայցադիմում ներկայացնելու, վնասի հատուցում պահանջելու եւ դատարանի որոշումն ստանալու իրավական հնարավորություն,

- ընթացակարգային այնպիսի սահմանափակումների (ձեւական, ժամկետային /այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման հետ կապված/ եւ այլն) սահմանում, որպիսիք չպետք է խաթարեն մատչելիության իրավունքի բուն էությունը,

- իրավաբանական օգնություն ստանալու կամ սեփական շահերի պաշտպանությունն անձամբ իրականացնելու անձի իրավունքի ապահովումը,

- գործով ըստ էության կայացված դատական ակտի վերջնականություն,

- դատարանի վերջնական ակտի ողջամիտ ժամկետում կատարման երաշխավորում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վեճի առարկայի շրջանակներում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ եւ 13-րդ գլուխների նորմերով երաշխավորվում են վերոթվարկյալ իրավապայմաններին համապատասխան կարգավորումներ:

Ինչ վերաբերում է հայցադիմումը եւ կից փաստաթղթերը դատարան եւ շահագրգիռ այլ անձանց ներկայացնելու (ուղարկելու) եղանակին, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ առձեռն ներկայացնելը կամ փոստով առաքելը պարզ ու մատչելի այնպիսի միջոցներ են, որոնց գործադրմամբ դատական պաշտպանության իրավունքը չի սահմանափակվում, անձից չի պահանջվում լրացուցիչ գիտելիքներ ու հմտություններ, ինչն անհրաժեշտ կլիներ հաղորդակցության ժամանակակից էլեկտրոնային միջոցների գործադրման պարագայում:

Արդարադատության «էժանացումը», որպէս արդարադատության մատչելիության (դատարան դիմելու) իրավունքի իրացման արդյունավետության բարձրացման միջոց, ինչպէս վկայում է միջազգային պրակտիկան, ենթադրում է պետության կողմից ոչ այնքան իրավական, որքան տեխնիկական, տնտեսական, սոցիալական եւ այլ բնույթի համալիր ու տեւական միջոցառումների իրականացում: Դատարնթացակարգային հարաբերությունների կարգավորման շրջանակներում հաղորդակցության էլեկտրոնային ժամանակակից միջոցների առավել լայն գործադրման հնարավորության նախատեսումն օրենսդրի բացառիկ լիազորությունն է, որն անձին իրավական այլընտրանքային հնարավորություն կրնձեռի դատարան դիմելիս կամ հայցադիմումը (կից փաստաթղթերով) դատավարության մասնակիցներին ուղարկելիս ընտրություն կատարելու հարցում: Բոլոր դեպքերում, այդպիսի միջոցների օրենքով

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ի ՏԵՂԵԿՎԱԳԻՐ Ի 4(82)2016

իրացման սկզբունքները, եղանակները պետք է համադրելի լինեն արդարադատության մատչելիության սահմանադրաիրավական չափանիշներին: Մահմանադրական դատարանը գտնում է, որ առանց վերոհիշյալ նախադրյալների ստեղծման (այդ թվում՝ իրավական), դատական պաշտպանության եւ, մասնավորապես՝ արդարադատության մատչելիության իրավունքի իրացումը ՀՀ Մահմանադրության 61 եւ 63-րդ հոդվածների սահմանադրաիրավական բովանդակության տեսանկյունից երաշխավորելի չէր լինի: Իսկ միայն հաղորդակցության էլեկտրոնային միջոցների կիրառման նախատեսումը՝ ներկայումս գործող առձեռն կամ փոստային առաքման եղանակների բացառման պայմաններում, գնահատելի կլինեք որպես արդարադատության մատչելիության սահմանափակում:

10. Անդրադառնալով հաղորդակցության էլեկտրոնային միջոցներով դատարան դիմելու միջազգային իրավական պրակտիկային՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված «Նոր տեխնոլոգիաների օգտագործման միջոցով քաղաքացիներին դատական եւ այլ ծառայությունների էլեկտրոնային մատուցման վերաբերյալ» թիվ (2001)3 հանձնարարականի համաձայն (ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2001թ. փետրվարի 28-ին) կարելուով էլ է դատարանների հետ նոր տեխնոլոգիաների միջոցով հաղորդակցվելը, մասնավորապես՝ էլեկտրոնային միջոցներով դատական վարույթ հարուցելու հնարավորությունը՝ անհրաժեշտ անվտանգության եւ անձնական տվյալների պաշտպանության հետ կապված պահանջները պահպանելու դեպքում:

Էլեկտրոնային եղանակով դատարան դիմելու վերաբերյալ եվրոպական պետությունների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը վկայում է դրա բազմազանության մասին: Մասնավորապես, մի շարք պետություններում օրենքով արգելված է համացանցով դատարան դիմելու (հայց հարուցելու) հնարավորությունը (Իռլանդիա, Բելգիա, Իտալիա, Կիպրոս, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Մալթա): Ընդ որում, Իռլանդիայի Հանրապետությունում դատարան դիմելիս պահանջվում է հայցադիմումը ձեռագրելով հատուկ ձեռագրով: Եվրոպական որոշ այլ պետություններում (Գերմանիա, Էստոնիա, Հունգարիա (միայն որոշ գործերով), Ավստրիա, Պորտուգալիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Շվեդիա (հայցադիմումի բնօրինակը հետագայում անձամբ ներկայացնելու պայմանով), Մեծ Բրիտանիա) դատարան դիմելու էլեկտրոնային եղանակը կիրառվում է որպես այլընտրանք:

11. Մահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վեճի

առարկա իրավակարգավորման շրջանակներում օրենսդիրը նախատեսել է ողջամիտ պահանջներ, որոնք դատարան դիմող անձին ոչ թե ծանրաբեռնում են ձեռնարկելու, ավելորդ պահանջներով, այլ նախատեսում են առաջնահերթ, իրավական տեսակետից անհրաժեշտ ու իրագործելի գործողություններ, որոնց կատարումը հետապնդում է սահմանադրա-իրավական նպատակներ, չի առաջացնում սոցիալական անհամաչափ ծանրաբեռնվածություն եւ միտված է դիմող անձի, դատարանի եւ գործով շահագրգիռ այլ անձանց, այդ թվում՝ պատասխանողի համար, Սահմանադրությամբ եւ օրենքով նախատեսված իրենց իրավունքների ու պարտականությունների արդյունավետ իրացման համար նախադրյալներ ստեղծելուն: Այսինքն՝ քննության առարկա նորմատիվ կարգավորմամբ հետապնդվող նպատակի եւ դրան հասնելու իրավական միջոցի միջեւ առկա է համաչափություն: Հետեւաբար, օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի իրավակարգավորումը դատարանի մատչելիության իրավունքի էությունը բնորոշող սահմանադրաիրավական եւ միջազգային իրավական չափանիշների շրջանակներում սահմանադրականության խնդիր չի հարուցում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64, 68 եւ 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Ց:

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10 մարտի 2016 թվականի
ՍԴՈ-1257

50 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Խ ՏԵՂԵԿՎԱԳԻՐ Խ 4(82)2016



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2015 թվականի Դեկտեմբերի 23-ին ՄՈՍԿՎԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ
ՀԱԿԱՕՂԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՎՈՐՎԱԾ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՄԱՉԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի

դեկտեմբերի 23-ին Մոսկվայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 02.02.2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Ց .

1. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է Մոսկվայում՝ 2015 թվականի դեկտեմբերի 23-ին:

2. Համաձայնագրի նպատակն է ստեղծել տարածաշրջանում հակաօդային պաշտպանության կատարելագործման համար Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ:

3. Համաձայնագրի անբաժանելի մաս է հանդիսանում «Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանի հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի մասին» կանոնակարգը, որով սահմանվում են Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի հիմնական ինդիքները, գործառույթները, ինչպես նաև տեղաբաշխման և կիրառման սկզբունքները:

4. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- տարածաշրջանում հակաօդային պաշտպանության կատարելագործման նպատակով ռուսական կողմի հետ Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում ստեղծել հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ (հոդված 2, մաս 1),
- ապահովել, որպեսզի խաղաղ ժամանակ ՀՀ լիազորված մարմինը (ՀՀ պաշտպանության նախարարությունը) ռուսական կողմի լիազոր-

ված մարմնի (ՌԴ պաշտպանության նախարարության) հետ կազմակերպի Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի գորքերի (ուժերի) համատեղ կիրառման պլանավորումը, հակաօդային պաշտպանության ուղղությամբ իրենց համատեղ մարտական հերթապահությունը, փոխգործակցությունը, ինչպես նաև համատեղ օպերատիվ և մարտական պատրաստությունը (հոդված 7),

- ապահովել Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգում հատկացված ՀՀ գորքերի (ուժերի) մարտական պատրաստվածությունը, պահպանել դրանց անձնակազմով, սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով համալրվածության սահմանված մակարդակը, իրականացնել նյութատեխնիկական ապահովումը (հոդված 9),
- ապահովել Համաձայնագրի կիրառման ընթացքում ստացած՝ Հայաստանի Հանրապետության պետական ու ծառայողական գաղտնիք և Ռուսաստանի Դաշնության պետական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունը՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին» 2002թ. նոյեմբերի 5-ի համաձայնագրին համապատասխան և Համաձայնագրի կիրառման ընթացքում, ինչպես նաև դրա գործողության դադարեցման դեպքում չիրապարակել ստացած վերոհիշյալ տեղեկությունները (հոդված 12):

5. Համաձայն Համաձայնագրի 6-րդ հոդվածի՝ Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի գորքերի (ուժերի) ու հակաօդային պաշտպանության այլ տարածաշրջանային համակարգերի կազմի մեջ մտնող գորքերի (ուժերի) համատեղ գործողությունների համակարգումն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի օդատիեզերական ուժերի գլխավոր հրամանատարը, Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի գորքերի (ուժերի) համատեղ գործողությունների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության Հարավային զինվորական օկրուգի գորքերի հրամանատարը, իսկ Հավաքական անվտանգության առանձին շրջանի հակաօդային պաշտպանության միավորված համակարգի գորքերի (ուժերի) համատեղ գործողությունների կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի

հակաօդային պաշտպանության զորքերի պետը:

6. Համաձայնագրում հղում է կատարվում մի շարք միջազգային պայմանագրերի, որոնք են. 1992թ. մայիսի 15-ի՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագիրը /ՀՀ կողմից վավերացվել է 1992 թվականի հուլիսի 28-ին, Գերագույն Խորհրդի Հ.Ն-0676-Ի որոշմամբ/, 1995 թվականի փետրվարի 10-ի՝ «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների հակաօդային պաշտպանության միացյալ համակարգի ստեղծման մասին» համաձայնագիրը /ՀՀ կողմից վավերացվել է 1995 թվականի նոյեմբերի 20-ին, Ազգային ժողովի Ն-065-Ի որոշմամբ/, 2000 թվականի սեպտեմբերի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև համատեղ անվտանգության ապահովման նպատակով զորքերի (ուժերի) կիրառման համատեղ պլանավորման հարցերի մասին» համաձայնագիրը /ՀՀ կողմից վավերացվել է 2001 թվականի փետրվարի 20-ին, Ազգային ժողովի Ն-147-2 որոշմամբ (ՄԴՈ-267)/, 2000 թվականի մարտի 16-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետից Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ՀՕՊ-ի և ավիացիայի ուժերի ու միջոցների և ռուսաստանյան ռազմակայանի ՀՕՊ-ի և ավիացիայի ուժերի ու միջոցների կառավարման գծով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի մարտական հաշվարկի և Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի օպերատիվ խմբի խնդիրների և լիազորությունների մասին» համաձայնագիրը /ՀՀ կողմից վավերացվել է 2001 թվականի փետրվարի 20-ին, Ազգային ժողովի Ն-150-2 որոշմամբ (ՄԴՈ-261)/, 2002 թվականի հոկտեմբերի 1-ի՝ «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմական ենթակառուցվածքի օբյեկտների համատեղ օգտագործման մասին» համաձայնագիրը /ՀՀ կողմից վավերացվել է 2003 թվականի սեպտեմբերի 24-ին, Ազգային ժողովի Ն-032-3 որոշմամբ (ՄԴՈ-413)/, 2002 թվականի նոյեմբերի 5-ի՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև գաղտնի տեղեկատվության փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիրը /ՀՀ կողմից վավերացվել է 2003 թվականի հունվարի 9-ին, ՀՀ Նախագահի ՆՀ-1255-Ն հրամանագրով/:

7. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագիրը հիմք կհանդիսանա կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգի ստեղծման համար, որը կնպաստի Հայաստանի Հանրապետության անվտանգության և պաշտպանության

ամրապնդմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2015 թվականի դեկտեմբերի 23-ին Մոսկվայում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10 մարտի 2016 թվականի
ՍԴՈ-1258



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

2015 թվականի Հոկտեմբերի 16-ին ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՆԵՐԴՐՈՒՄՍՑԻՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

10 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող, զեկուցող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Հարությունյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Խ 4(82)/2016 ՏԵՂԵԿՎԱԳԻՐ

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի հոկտեմբերի 16-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի ֆինանսավորման համար Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաձգնաժամային հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 02.02.2016թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց .

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի ֆինանսավորման համար Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաձգնաժամային հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի հոկտեմբերի 16-ին Երևանում՝ «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի ֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետությանը 40.000.000 ԱՄՆ դոլար վարկ տրամադրելու նպատակով:

Համաձայնագրի անբաժանելի մասն են հանդիսանում «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից մասնակից պետությանը ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրերի Ստանդարտ պայմանները», այսուհետ՝ «Ստանդարտ պայմաններ» (Համաձայնագրի Հավելված 1), Հավելված 2-ը՝ «Ներդրումային վարկի պայմանները», Հավելված 3-ը՝ «Հիմնական պարտքի մարման ժամանակացույց», Հավելված 4-ը՝ «Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և ծախսերի տեսակները», Հավելված 5-ը՝ «Ծրագրի նկարագրությունը և իրականացման կարգը», Հավելված 6-ը՝ «Ծրագրի մոնիտորինգ և գնահատում», Հավելված 7-ը՝ «Գնումների ընթացակարգեր» և Հավելված 8-ը՝ «Միջոցների ծախսման ընթացակարգերը»:

Ծրագրի նպատակն է ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացումը, ոռոգվող հողերի մակերեսի ընդլայնումը, Ջրօգտագործողների միավորումների (ՋՕՄ) կառավարչական կարողությունների

զարգացումը և տեխնիկական հագեցվածության բարձրացումը, ՋՕՍ ֆեդերացիաների ստեղծումը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից՝ Մաս 1. «Մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս ոռոգմամբ», Մաս 2. «Մայր ջրանցքների և երկրորդ շարքի ջրանցքների վերականգնում», Մաս 3. «ՋՕՍ-երի ներտնտեսային բաշխիչ ցանցերի արդիականացում», Մաս 4. «Ծրագրի կառավարումը: ՋՕՍ-երի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում և ՋՕՍ-երի ֆեդերացիաների ստեղծման պիլոտային ծրագիր», Մաս 4.1. «Ծրագրի կառավարումը», Մաս 4.2. «ՋՕՍ-երի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում և ՋՕՍ-երի ֆեդերացիաների ստեղծման պիլոտային ծրագիր»:

Համաձայնագրով՝ Կառավարիչը Հիմնադրամի մասնակիցների անունից և նրանց հանձնարարությամբ Հիմնադրամի միջոցներից Հայաստանի Հանրապետությանն է տրամադրում Ներդրումային վարկ՝ 40.000.000 (քառասուն միլիոն) ԱՄՆ դոլարի չափով (այսուհետ՝ Ներդրումային վարկ)՝ Համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով, «Ոռոգման համակարգերի արդիականացում» Ծրագրի ֆինանսավորման համար՝ նկարագրված Համաձայնագրի Հավելված 5-ում: Ներդրումային վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտը 2021 թվականի հունիսի 30-ն է կամ ավելի ուշ ժամկետ, որը Կառավարիչը կարող է սահմանել ՀՀ դիմումի հիման վրա: Ներդրումային վարկի օգտագործման ժամկետը Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ 20 (քսան) տարուց ոչ ավել է, ներառյալ այն ժամանակահատվածը, ուժի մեջ մտնելու ամսաթվից 10 (տասը) տարուց ոչ ավել, որի ընթացքում Հիմնական պարտքի մարում չի կատարվում (այսուհետ՝ Արտոնյալ ժամանակահատված): Ծրագիրը նախատեսվում է ավարտել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը: Վարկի արժույթը ԱՄՆ դոլարն է:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլնի, ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- Ներդրումային վարկի նպատակների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում վարկի արտարժույթով բացել և վարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ միասնական գանձապետական հաշվի առանձին ենթահաշիվ (այսուհետ՝ Հատուկ հաշվեհամար) Կառավարչի համար ընդունելի պայմաններով՝ ներառյալ հաշվեհամարի պատշաճ պաշտպանությունը ցանկացած տեսակի հայցերից, առգրավումներից, կալանքներից կամ ոչ նպատակային օգտագործումից (հոդված 2, կետ 2.2, մաս 2),

- Ներդրումային վարկի միջոցները չօգտագործել Ստանդարտ պայմանների 2.03 բաժնում նշված Հարկերի ֆինանսավորման և վճարման նպատակով (հոդված 2, կետ 2.4),

- վճարել Ներդրումային վարկի սպասարկման և մարման համար Սկզբնական միանվագ միջնորդավճար 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոս, որը հաշվեգրվում և վճարվում է Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի «ա» կետին համապատասխան (հոդված 3, կետ 3.1, մաս 1, Հավելված 2),

- Ներդրումային վարկի հիմնական պարտքը մարել սկսած 2025թ. դեկտեմբերի 30-ից մինչև 2035թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ին և դեկտեմբերի 30-ին՝ 2.000.000,00 (երկու միլիոն) ԱՄՆ դոլար մասնաբաժնով (հոդված 3, կետ 3.1, մաս 2, Հավելված 3),

- ապահովել Ծրագրի համաֆինանսավորումը՝ Համաձայնագրի Հավելված 4-ին համապատասխան և տեխնիկական միջոցների, ծառայությունների և այլ ռեսուրսների տրամադրումը, որոնք անհրաժեշտ են Ծրագրի արդյունավետ կատարման համար՝ Ստանդարտ պայմանների 4.01 բաժնի «բ» կետին համապատասխան, ինչպես նաև յուրաքանչյուր տարի ապահովել անհրաժեշտ ծավալի հատկացումներ նշված ծախսերի ֆինանսավորման նպատակով (հոդված 4, կետ 4.1, ենթակետ «գ»),

- ապահովել Ծրագրի ֆինանսավորման համար հատկացված միջոցների օգտագործման մասին հաշվետվությունների նախապատրաստումը և տրամադրումը Կառավարչին, ներառյալ՝ Ներդրումային վարկի նախկինում ստացված միջոցների նպատակային օգտագործումը հաստատող և ՀՀ կողմից կատարված և Ներդրումային վարկի միջոցների հաշվին վճարման ենթակա ծախսերի վերաբերյալ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է միջոցների աղբյուրների և օգտագործման մասին հաշվետվություն, Ծրագրի միջոցառումների գծով միջոցների օգտագործման մասին հաշվետվություն, Հատուկ հաշվից քաղվածք, ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն և Հատուկ հաշվի հավասարակշռված բալանս (հոդված 4, կետ 4.1, ենթակետ «գ», մաս 1, ենթամաս 1),

- մշտական հիմունքներով իրականացնել Ծրագրի կատարման և դրա նպատակների իրագործման մոնիտորինգ և գնահատում Համաձայնագրի Հավելված 6-ի 2-րդ կետում բերված մոնիտորինգի ցուցանիշներին համապատասխան,

- Ներդրումային վարկի միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներն իրականացնել Հիմնադրամի գնումների Քաղաքականությանը (Հիմնադրամի գնումների Քաղաքականության 4.4 կետի «թ» ենթակետը չի կիրառվում), ՎԶՄԲ ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների Ուղեցույցին, այն մասով, որը չի հակասում Հիմնադրամի գնումների Քաղաքականությանը, և Գնումների պլանին

համապատասխան (Հավելված 7, կետ 1),

- խորհրդատվական ծառայությունների գնումներն իրականացնել Ներդրումային վարկի միջոցների հաշվին Հիմնադրամի գնումների Քաղաքականությանը (Հիմնադրամի գնումների Քաղաքականության 4.4 կետի «թ» ենթակետը չի կիրառվում), ՎՋՄԲ խորհրդատուների ընտրության և հավաքագրման ուղեցույցի այն մասով, որը չի հակասում Հիմնադրամի գնումների Քաղաքականությանը, և Գնումների պլանին համապատասխան (Հավելված 7, կետ 2),

- Կառավարչին վերադարձնել Հատուկ հաշվեհամարի վրա ավանսավորված Ներդրումային վարկի միջոցները, որոնց նպատակային օգտագործումը ՀՀ կողմից չի հաստատվել փաստաթղթերով Համաձայնագրի Հավելված 8-ի 4.1 կետի պահանջներին համապատասխան Վարկի հասանելիության ժամկետի ավարտից 4 (չորս) ամսվա ընթացքում (Հավելված 8, կետ 7):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2015 թվականի հոկտեմբերի 16-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման Բանկի միջև «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագրի ֆինանսավորման համար Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10 մարտի 2016 թվականի
ՍԴՈ-1259



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ՄԻՆՍԿՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ (ԿԻՑ
ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի նոյեմբերի 28-ին Մինսկում ստորագրված՝ Քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության մասին համաձայնագրում (կից առար-

կությանը) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի 2016 թվականի փետրվարի 24-ին սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Բ Ձ Ե Ց .

1. Քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2006 թվականի նոյեմբերի 28-ին Մինսկում՝ Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուկրաինայի (այսուհետ՝ Կողմեր) միջև:

Համաձայնագրի վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետությունը կատարել է վերապահում, որի առնչությամբ Հայաստանի Հանրապետությունը հանդես է եկել առարկությամբ:

2. Համաձայնագրի նպատակն է ապահովել Կողմերի տարածքներում հանցագործության դեմ արդյունավետ պայքարի և քրեական դատավարության խնդիրների հաջող լուծման նպատակների իրականացմանն աջակցող անձանց օրինական իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը:

Համաձայնագիրը կիրառվում է այն դեպքերում, երբ պաշտպանվող անձանց նկատմամբ հայցող Կողմի կողմից նրա ազգային օրենսդրությանը համապատասխան կիրառվող պաշտպանության միջոցները չեն կարող ապահովել նրանց պատշաճ անվտանգությունը:

3. Համաձայնագրի շրջանակներում պաշտպանվող անձանց նկատմամբ միաժամանակ կարող են կիրառվել 4-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտպանության միջոցներից մեկը կամ մի քանիսը:

Պաշտպանության միջոցները կիրառվում են պաշտպանվող անձի կամ նրա օրինական ներկայացուցիչների գրավոր համաձայնության առկայության դեպքում: Անչափահաս կամ չափահաս անգործունակ պաշտպանվող անձի նկատմամբ պաշտպանության միջոցներն իրականացվում են միայն նրանց ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների

գրավոր համաձայնությամբ (հոդվ. 15):

Պաշտպանության միջոցների իրականացումը պաշտպանվող անձի կողմից հայցվող Կողմի տարածքում հանցագործություն կատարվելու դեպքում նրա նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հիմք չի համարվում (հոդվ. 25):

Համաձայնագիրն անձի պաշտպանության ապահովման համար Կողմերին հնարավորություն է ընձեռում փոխադարձ համաձայնության հիման վրա իրականացնել Համաձայնագրով չնախատեսված պաշտպանության այլ միջոցներ (հոդվ. 4, կետ 2):

4. Համաձայնագիրը սահմանում է նաև տրամադրվող պաշտպանությունից օգտվող անձանց ցանկը, անձի պաշտպանության միջոցների տրամադրման և իրականացման կարգն ու պայմանները, հարցման ձևն ու բովանդակությունը, հարցումը մերժելու հիմքերը, պաշտպանության ենթակա անձի իրավունքներն ու պարտականությունները:

5. Ըստ Համաձայնագրի՝ եթե պաշտպանության միջոցների իրականացման վերաբերյալ հարցումը չի պարունակում Համաձայնագրով նախատեսված բոլոր անհրաժեշտ տվյալները, ապա հայցվող Կողմի իրավասու մարմինը կարող է պահանջել նման տվյալներ, մինչև որոնց ստանալը հարցումը կարող է թողնվել առանց քննության (հոդվ. 17): Միաժամանակ, Համաձայնագրով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառումը կարող է մերժվել, եթե դա կարող է հայցվող Կողմի շահերին վնաս պատճառել կամ հակասում է հայցվող Կողմի ազգային օրենսդրությանը կամ միջազգային պարտավորություններին, հայցվող Կողմի տարածքում պաշտպանվող անձի կողմից կատարվել է հանցագործություն կամ առկա է հայցվող Կողմի իրավասու մարմնի՝ այդ անձի մուտքը հայցվող Կողմի տարածք արգելող որոշում (հոդվ. 18):

6. Մույն Համաձայնագիրը չի շոշափում քրեական գործերով իրավական օգնության տրամադրման հարցերը:

Համաձայնագրի դրույթները չեն ազդում Կողմերի մասնակցությամբ այլ միջազգային պայմանագրերով ստանձնված իրավունքների ու պարտականությունների վրա:

7. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- Համաձայնագրի դրույթներին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հարցման հիման վրա հայցող Կողմին աջակցել պաշտպանվող անձանց նկատմամբ պաշտպանության միջոցներ իրականացնելիս,

- որպես հայցվող Կողմ՝ պաշտպանության միջոցների իրականացման ժամանակահատվածում պաշտպանվող անձին Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավոր տեղափոխել կամ վերաբնակեցնել անվտանգ վայրում, տրամադրել կացարան, նրա շարժական գույքը նոր բնակավայր տեղափոխելու հնարավորություն ընձեռել,

- Հայաստանի Հանրապետության տարածքում կալանքի տակ վերցված կամ ազատազրկման դատապարտված անձին, ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ, ժամանակավորապես տեղավորել համապատասխան հիմնարկում,

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները, հայցող Կողմի իրավասու մարմինների հարցմամբ, փոխեն պաշտպանվող անձի փաստաթղթերը՝ փոխելով նրա անունը, ազգանունը, հայրանունը և նրա մասին այլ տեղեկությունները, որոնց ցանկը համաձայնեցվում է շահագրգիռ Կողմերի իրավասու մարմինների կողմից,

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները, հայցող Կողմի իրավասու մարմինների հարցմամբ, փոխեն պաշտպանվող անձի արտաքին տեսքը, որը նախատեսում է Հայաստանի Հանրապետության տարածքում անհրաժեշտ բժշկական, կոսմետիկ ընթացակարգերի անցկացում՝ ինչպես մասնագիտացված կլինիկաներում և այլ բժշկական հիմնարկներում, այնպես էլ դրանցից դուրս՝ մասնագետների ներգրավմամբ և անհրաժեշտ սանիտարական և այլ պայմանների ստեղծմամբ,

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները, հայցող Կողմի իրավասու մարմինների հարցմամբ, պաշտպանվող անձին տրամադրեն անձնական պաշտպանության, կապի և իրազեկման հատուկ միջոցներ, որոնց տրամադրման և պաշտպանվող անձի կողմից դրանց կիրառման կարգը որոշվում է ՀՀ օրենսդրությամբ,

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն ապահովեն պաշտպանվող անձի անձնական պաշտպանությունը, բնակարանի և գույքի պաշտպանությունը,

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները պաշտպանության միջոցների իրականացման նպատակներով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով իրականացնեն օպերատիվ-հետախուզական միջոցառումներ,

- որպես հայցող Կողմ հանդես գալու դեպքում կրել Համաձայնագրի 2-րդ և 4-10-րդ հոդվածներով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառման հետ կապված ծախսերը,

- ապահովել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների ցանկի՝ ավանդապահին տրամադրումը, որն այդ մասին տեղեկացնում է

մյուս Կողմերին և այլն:

8. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն Համաձայնագրի դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 13-րդ հոդվածում ամրագրված՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու սկզբունքներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց.

1. 2006 թվականի նոյեմբերի 28-ին Մինսկում ստորագրված՝ Քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության մասին համաձայնագրում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10 մարտի 2016 թվականի
ՍԴՈ-1260



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Միրումյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2015 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Պետական

հատվածի արդիականացման երրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 24.02.2016թ. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015 թվականի նոյեմբերի 18-ին՝ հանրային ֆինանսական հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ֆինանսավորելու նպատակով:

2. Համաձայնագիրն ունի երեք Առդիր՝ Առդիր 1. «Ծրագրի նկարագրությունը», Առդիր 2. «Ծրագրի կատարումը», Առդիր 3 և Հավելված: Ծրագրի նպատակն է ֆինանսական հանրային հաշվետվությունների որակի և ընտրված էլեկտրոնային կառավարման կատարելագործված ծառայությունների հասանելիության բարելավումը: Ծրագիրը բաղկացած է չորս մասերից՝ Մաս 1. «Պետական ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր», Մաս 2. «Ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված էլեկտրոնային կառավարման լուծումներ», Մաս 3. «Կարողությունների զարգացում և կարողությունների ստեղծման փոքր միջամտություններ» և Մաս 4. «Ծրագրի կառավարում»:

3. Համաձայնագրին համապատասխան՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) Հայաստանի Հանրապետությանը կտրամադրի 21.000.000 (քսանմեկ միլիոն) ԱՄՆ դոլարին համարժեք վարկ (այսուհետ՝ Վարկ) Համաձայնագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման նպատակով:

4. Վարկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրվում է 25 տարի ժամկետով, որից 14.5-ը՝ արտոնյալ (առանց մայր գումարի վճարման): Վարկի տոկոսադրույթը կազմում է 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR+ փոփոխական մարժա: Մայր գումարի մարումները կատարվելու են կիսամյակային հավասար մասնաբաժիններով՝ սկսած 2030 թվականի

մայիսի 1-ից մինչև 2040 թվականի մայիսի 1-ը:

5. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

1) Վարկի մարումը կատարել կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ին և նոյեմբերի 1-ին,

2) իրականացնել Ծրագիրը Համաձայնագրի դրույթներին և դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող ժամանակացույցներին և Հավելվածին համապատասխան,

3) վճարել սկզբնավճար Վարկի գումարի մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար չափով,

4) վճարել Պարտավճար Վարկի գումարի չառհանված մնացորդի տարեկան մեկ քառորդ տոկոսին (0.25%) հավասար չափով,

5) Ծրագրի պատշաճ վերահսկողությունը, համակարգումը և կատարումն ապահովելու նպատակով Ծրագրի իրականացման պատասխանատվությունը վերապահել Պետական կառավարման հատվածի բարեփոխումների հանձնաժողովին, որը պետք է՝ ա) հանդես գա որպես Ծրագիրը համակարգող խորհուրդ, բ) գլխավորվի Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի կողմից, ով նաև Ծրագրի տնօրենն է, և գ) պատասխանատու լինի Ծրագրի ռազմավարական ուղղորդումն ապահովելու և Ծրագրի Գործառնական ձեռնարկը, Ծրագրի տարեկան բյուջեները և ֆինանսական կառավարման և գնումների հիմնական փաստաթղթերը հաստատելու համար,

6) յուրաքանչյուր տարվա մարտի 1-ից ոչ ուշ քան Բանկին ներկայացնել տարեկան մոնիտորինգի, գնահատման հաշվետվության և Գնումների վերանայման պլան Բանկին բավարարող ձևով և բովանդակությամբ,

7) ապահովել Ծրագրի իրականացումը Հակակոռուպցիոն ուղեցույցի դրույթներին համապատասխան:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. 2015 թվականի նոյեմբերի 18-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանա-

դրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ,

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

10 մարտի 2016 թվականի
ՍԴՈ-1261



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԳՈՒԴԵՆ ՖԻԼԴ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2477-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, «ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 23-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ
ԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

22 մարտի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-
յանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ.
Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
դիմողի «Գուդեն Ֆիլդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Գ. Այվազյանի,
Լ. Դավթյանի,
գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի
պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր
մասնագետ Վ. Դանիելյանի,
համաձայն ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ
հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին»
ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ
N 4(82)/2016
70

դնրբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2477-րդ հոդվածի 2-րդ կետի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «Գոլդեն Ֆիլդ» ՍՊԸ-ի՝ 2015 թվականի նոյեմբերի 6-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները և գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Ց .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից: Հետագայում օրենսգրքում կատարվել են բազմաթիվ լրացումներ և փոփոխություններ:

Օրենսգիրքը 2004թ. փետրվարի 18-ին ընդունված ՀՕ-39-Ն օրենքով լրացվել է «Քաղաքացիական գործերով իրավական օգնությունը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան» գլխով, որի՝ «Օտարերկրյա պետության դատարանի դատական ակտի կամ միջազգային արբիտրաժի որոշման ճանաչման վերաբերյալ որոշում կայացնելու պայմանները» վերտառությամբ 2477-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է.

«Օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը կամ միջազգային արբիտրաժի որոշումը ճանաչելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանի կայացրած որոշումը կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. հունիսի 3-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

Նշված օրենքի՝ «Կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը» վերտառությամբ 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը սահմանում են.

«1. Կատարողական թերթը առաջին անգամ կարող է կատարման ներ-

կայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ՝

1) օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը.

2) արբիտրաժային տրիբունալը կայացրել է վճիռ...»:

Ընդունման պահից ի վեր օրենքի 23-րդ հոդվածը փոփոխվել է 25.12.06թ. ՀՕ-69-Ն օրենքով, լրացվել է 17.06.08թ. ՀՕ-133-Ն, 24.03.11թ. ՀՕ-71-Ն օրենքներով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Ուկրաինայի առևտրաարդյունաբերական պալատին կից գործող միջազգային կոմերցիոն արբիտրաժային դատարանը /այսուհետ՝ ՄԿԱԴ/ 11.02.2011թ. վճռել է «Գոլդեն ֆիլդ» ՍՊԸ-ից հօգուտ «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ի բռնագանձել 1.991.330,20 ԱՄՆ դոլար և 20 ցենտ: Վճիռն օրինական ուժ է ստացել կայացման պահից:

07.09.2012թ. «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ն ՄԿԱԴ-ի նշված վճիռը ճանաչելու և ՀՀ տարածքում այդ վճռի կատարումը թույլատրելու պահանջով դիմել է ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որը 07.03.2014թ. որոշմամբ միջնորդությունը բավարարել է: Դատարանը որոշել է ՀՀ-ում ճանաչել ՄԿԱԴ-ի 11.02.2011թ. վճիռը, այդ վճռի հիման վրա տրամադրել կատարողական թերթ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի ու ժամկետների պահպանմամբ թույլատրել դրա կատարումը ՀՀ տարածքում:

ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատարի 17.04.2014թ. որոշմամբ կատարողական թերթը կատարման ներկայացնելու մեկտարյա ժամկետը բաց թողնված լինելու հիմքով վերադարձվել է «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ի ներկայացուցչին:

Կատարողական թերթը կրկին ներկայացվել է ԴԱՀԿ ծառայություն և նույն անձի 08.05.2014թ. որոշմամբ նույն պատճառաբանությամբ այն կրկին վերադարձվել է:

«Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ն առաջին աստյանի դատարանի ՄԿԱԴ-ի վճիռը ճանաչելու մասին 07.03.2014թ. որոշումը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ դատարան՝ խնդրելով որոշման եզրափակիչ մասում նշել կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետի սկիզբը, այն է՝ այդ որոշման ուժի մեջ մտնելու օրը:

Դատական ակտի բողոքարկմանը զուգահեռ «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ն 16.06.2014թ. վարչական վերադատության կարգով բողոքարկել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության որոշումը:

ՀՀ արդարադատության նախարարի 29.07.2014թ. որոշմամբ կատարողական թերթը վերադարձնելու մասին հարկադիր կատարողի

08.05.2014թ. որոշումը ճանաչվել է անվավեր: 06.08.2015թ. հարուցվել է կատարողական վարույթ:

ՀՀ արդարադատության նախարարի վարչական բողոքը բավարարելու մասին վերոնշյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին դիմողը հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որն ընդունվել է վարույթ (վարչական գործ թիվ ՎԴ/4861/05/14) և դատարանի 09.02.2016թ. որոշմամբ վարույթը կասեցվել է մինչև սահմանադրական դատարանում սույն գործի քննության ավարտը:

Քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 26.06.2014թ. որոշմամբ մերժել է «Ինտերպայպ Ուկրաինա» ՍՊԸ-ի բողոքը և օրինական ուժի մեջ թողել առաջին ատյանի դատարանի 2014թ. մարտի 7-ի որոշումը:

30.04.2015թ. ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված բողոքը բավարարվել է մասնակիորեն: Վճռաբեկ դատարանը որոշել է բեկանել և փոփոխել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի նշված որոշումը և առաջին ատյանի դատարանի որոշման եզրափակիչ մասից հանել «... ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի ու ժամկետների պահպանմամբ...» արտահայտությունը:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2477-րդ հոդվածի 2-րդ կետին և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերին, փաստորեն, վերջնական դատական ակտով այդ իրավադրություններն իր նկատմամբ կիրառել է այնպիսի մեկնաբանությամբ, որպիսին հակասում է իրավական որոշակիության և խտրականության արգելման սահմանադրական սկզբունքներին:

Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավադրությունները ձևակերպված են այնպես, որ դատական ակտով պարտապան հանդիսացող անձի համար հետագա իրավական հետևանքների առաջացման հնարավորությունը և ժամանակը կանխատեսելի չեն, և պարտապանն ըստ էության զրկված է պահանջատիրոջից որոշակի վարքագիծ ակնկալելու և իր վարքագիծն ըստ ժամանակի պլանավորելու ու դրսևորելու հնարավորությունից: Այդ դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը պատճառաբանում է, որ հնարավոր չէ որոշակիորեն ընկալել քննության առարկա օրենքներում գործածվող՝ «միջազգային արբիտրաժի որոշում», «դատական ակտ» և «արբիտրաժային տրիբունալի վճիռ» հասկացությունները: Ներպետական օրենսդրության և «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958թ. կոնվենցիայի համապա-

տասխան դրույթների սեփական մեկնաբանության արդյունքում դիմողը եզրակացնում է, որ իրավակիրառողը պետք է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում օգտագործվող «արբիտրաժային տրիբունալ» եզրույթի ներքո նկատի ունենար նաև օտարերկրյա և միջազգային արբիտրաժային տրիբունալները:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավակարգավորումները խնդրահարույց են նաև օրենքի առջև բոլորի հավասարության իրավունքի տեսանկյունից, քանի որ նախատեսում են խտրականություն ներպետական և օտարերկրյա արբիտրաժային տրիբունալի վճիռներով ինչպես պահանջատեր, այնպես էլ պարտապան հանդիսացող անձանց միջև: Դիմողն անհիմն է համարում ՀՀ վճարեկ դատարանի այն իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ ներպետական արբիտրաժային տրիբունալի վճռի կատարման ներկայացման ժամկետի հաշվարկն սկսվում է այն կայացնելու օրվանից, իսկ օտարերկրյա արբիտրաժային տրիբունալի վճիռը՝ այն ճանաչող ներպետական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից:

Բացի դրանից, դիմողը գտնում է, որ օտարերկրյա դատական ակտն առանց ժամկետային սահմանափակման կատարման ներկայացնելու մասին օրենսդրական կարգավորումը և իրավակիրառ պրակտիկան հակասում են արդար դատաքննության սահմանադրական իրավունքի տարր հանդիսացող՝ կողմերի իրավահավասարության սկզբունքին:

Դիմողը վիճարկվող իրավադրույթները խնդրահարույց է համարում ՀՀ Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ի խմբագրությամբ 1-ին, 3, 14.1, 18 և 19-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածը 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված փոփոխություններով մնացել է անփոփոխ, 3-րդ հոդվածն ամրագրում է նույն դրույթը՝ որոշակի խմբագրական փոփոխություններով, իսկ 14.1, 18 և 19-րդ հոդվածներում ամրագրված դրույթներն ամփոփված են 2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 28, 29, 61 և 63-րդ հոդվածներում:

4. Սույն գործով քննարկվող սահմանադրաիրավական վեճի կապակցությամբ վերլուծելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը՝ պատասխանողը եկել է այն հետևությանը, որ օրենքը հստակ տարանջատում է «արբիտրաժային տրիբունալ» և «միջազգային արբիտրաժային տրիբունալ» հասկացությունները և ամբողջությամբ համապատասխանում է իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության պահանջին:

Պատասխանողը գտնում է, որ պետական առանձին մարմինների,

քաղաքացիների, անգամ դատական մարմինների կողմից օրենքի որևէ դրույթի՝ միայնակ հակասող մեկնաբանությունների առկայությունն ինքնին չի կարող հակասել իրավական որոշակիության սկզբունքին, և իրավական դրույթների տարբերումների նկատմամբ միասնական դիրքորոշումն ապահովում է ՀՀ վճռաբեկ դատարանը՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթի շրջանակներում:

Պատասխանողը պնդում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2477-րդ հոդվածի 2-րդ կետը հստակ սահմանում է, որ ոչ թե միջազգային արբիտրաժի վճիռն ինքնին, այլ այն ճանաչելու վերաբերյալ ՀՀ իրավասու դատարանի կայացրած որոշումն է կատարվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Մինչև Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային արբիտրաժային տրիբունալի վճռի ճանաչումն այն որևէ իրավական հետևանք ՀՀ տարածքում առաջացնել չի կարող:

Պատասխանողը վերլուծելով «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիայի դրույթները՝ եզրահանգել է, որ օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման վերաբերյալ հարաբերությունները կարգավորվում են վերը հիշատակված կոնվենցիայով, որով սահմանված են միջազգային արբիտրաժային տրիբունալների վճիռների ճանաչումը մերժելու սպառնիչ հիմքեր, ինչը նշանակում է, որ կոնվենցիայի անդամ պետությունը կաշկանդված է այդ հիմքերով և չի կարող դրանց հակասող կամ դրանցից տարբերվող այլ հիմքեր սահմանել ներպետական օրենսդրությամբ, ինչն ազատ է անելու ներպետական արբիտրաժային տրիբունալի վճիռների ճանաչման հիմքերի սահմանման հարցում: Հետևաբար, ներպետական և միջազգային արբիտրաժային տրիբունալի վճիռների հարկադիր կատարման համար տարբերակված ժամկետային սահմանափակումները չեն կարող դիտվել որպես խտրականություն:

Պատասխանողը միաժամանակ նշում է, որ օտարերկրյա արբիտրաժային որոշման ներկայացման ժամկետի բացակայությունը չի նշանակում, որ անձը կարող է տասնյակ տարիներ անց արբիտրաժային վճիռը ներկայացնել ՀՀ իրավասու դատարանին և ստանալ այդ վճռի ճանաչում: ՀՀ դատարաններն օտարերկրյա արբիտրաժային տրիբունալի վճիռները ճանաչելիս պարտավոր են գնահատել արբիտրաժային տրիբունալի վճռի կայացման պահից այն ներկայացնելն ընկած ժամանակահատվածի ողջամիտ լինելը և դրա ազդեցությունն արդար դատական քննության իրավունքի ապահովման՝ ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրաիրավական պահանջի կատարման վրա:

5. ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել,

որ դիմողը քննության առարկա գործի շրջանակներում բարձրացնում է միայն օտարերկրյա արբիտրաժային տրիբունալի վճռի կատարումը կարգավորող իրավադրույթների սահմանադրականության հարցը և ինչպես քաղաքացիական վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում չի բողոքարկել օտարերկրյա արբիտրաժային տրիբունալի վճռի ճանաչումը, այնպես էլ սահմանադրական դատարանում չի բարձրացրել այդ վճռի ճանաչման իրավաչափության հարցը: Ավելին, դիմողն ընդունում է, որ «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958թ. կոնվենցիան չի նախատեսում օտարերկրյա արբիտրաժային դատարանի վճիռը ճանաչման ներկայացնելու որևէ ժամկետ: Հետևաբար, հաշվի առնելով հիշյալ հանգամանքը՝ սահմանադրական դատարանը գործը քննության է առնում բացառապես այդպիսի վճիռների կատարման հարցերի սահմանադրականության գնահատման տեսանկյունից:

6. Սույն գործի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու համար սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել և գնահատել.

- արդյոք վիճարկվող դրույթները համակարգային ամբողջականության մեջ ձևակերպված են այնքան որոշակի և հստակ, որ հնարավորություն տան իրավունքի սուբյեկտներին միանշանակ ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել այդ պահանջներին,

- օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքների ապահովվածությունը՝ հաշվի առնելով անձի թե ընդհանուր իրավական և թե դատավարական կարգավիճակի առանձնահատկությունները,

- ֆիզիկական կամ իրավաբանական անձանց արդար դատաքննության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման հնարավորությունը:

7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առևտրի, արդյունաբերության, ներդրումային գործունեության ոլորտում միջազգային կապերի զարգացումը, արտաքին առևտրի շրջանառության աճն անխուսափելիորեն հանգեցնում են տարբեր ազգային իրավական համակարգերի տնտեսվարող սուբյեկտների միջև վեճերի և տարաձայնությունների թվի մեծացմանը: Դրանք գրեթե միշտ ընդդատյա են արբիտրաժային մարմիններին, որոնց վճիռները, որպես կանոն, այլ պետության տարածքում իրավաբանական ուժ են ստանում միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունն այդ առթիվ տալիս է իր համաձայնությունը: Ճանաչման

դեպքում այլ պետության տարածքում այդ վճիռները ձեռք են բերում որոշակի հատկանիշներ՝ դրանք են՝ անհերքելիությունը, բացառիկությունը, ինչպես նաև կատարելիությունը:

ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ ՀՀ ինքնիշխանության սկզբունքից բխում է, որ օտարերկրյա կամ միջազգային արբիտրաժների որոշումները, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների ուժով, Հայաստանի Հանրապետությունում օրինական ուժ կարող են ստանալ միայն ՀՀ դատական մարմինների ակտերով դրանց ճանաչման պարագայում: Նույնը բխում է նաև «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիայի 3-րդ հոդվածի ձևակերպումից, որից հետևում է, որ այլ երկրի կամ միջազգային արբիտրաժային տրիբունալի վճիռի ճանաչումն է այն դարձնում պարտադիր, հետևաբար՝ նաև կատարման ենթակա: Նշված կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1998 թվականի մարտի 29-ից (կոնվենցիայում ամրագրված դրույթները ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-67 որոշմամբ ճանաչվել են ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2477-րդ հոդվածի 2-րդ կետը հստակ սահմանում է, որ ոչ թե միջազգային կամ օտարերկրյա արբիտրաժային մարմնի վճիռն ինքնին, այլ այն ճանաչելու վերաբերյալ ՀՀ իրավասու դատարանի որոշումն է կատարվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում գործածվող «դատական ակտ» հասկացությունը ներառում է նաև օտարերկրյա և միջազգային արբիտրաժային մարմինների ակտերը ճանաչող ներպետական դատական ակտը, իսկ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում գործածվող «արբիտրաժային տրիբունալ» եզրույթը վերաբերելի է բացառապես ներպետական արբիտրաժային մարմիններին և, հետևաբար, կիրառելի է բացառապես վերջիններիս նկատմամբ: Ինչ վերաբերում է քննության առարկա օրենքներում գործածվող «միջազգային արբիտրաժի որոշում», «դատական ակտ» և «արբիտրաժային տրիբունալի վճիռ» հասկացությունների առումով իրավական որոշակիության հարցին, ապա հարկ է նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում սպառնիչ թվարկված են հարկադիր կատարման ենթակա դատական ակտերը և համապատասխանաբար դրանք կայացնող մարմինները: Նշված հոդվածի 3-րդ կետով հստակ ձևակերպված են և տարանջատված են «արբիտրաժային տրիբունալ», 4-րդ կետով՝ «օտարերկրյա դատարան» և «արբիտրաժային տրիբունալ», 5-րդ կետով՝ «միջազգային դատարան» և «միջազգային արբիտրաժ» հասկացությո-

յունները և, հետևաբար, տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ չեն կարող:

Այդ մասին վկայում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ իրավական ակտերը մեկնաբանվում են դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 13.05.2008թ. ՄԴՈ-753 որոշմամբ ամրագրել է, որ. «Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը»:

Տվյալ դեպքում ակնհայտ է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթը հղում է կատարում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին, իսկ նշված օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նշվեց, չեն պարունակում իրավական անորոշություն: Այսինքն՝ բացակայում են տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունները, և իրավական անորոշության վերաբերյալ դիմողի փաստարկներն այս տեսանկյունից ևս հիմնավոր չեն:

8. Օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելքի սկզբունքների խախտման վերաբերյալ դիմողի փաստարկների առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 04.05.2010թ. ՄԴՈ-881 որոշման 5-րդ կետում ամրագրած իրավական այն դիրքորոշումը, համաձայն որի. «...օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ՝ ... սահմանելուն»:

Խտրականության արգելքի խախտման վերաբերյալ դիմողի փաստարկները դիտարկելով վերը նշված իրավական դիրքորոշման լույսի ներքո՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում համապատասխան արբիտրաժային տրիբունալի վճիռը կատարման ներկայացնելու ժամկետների առումով ներպետական արբիտրաժային տրիբունալին դիմած կողմերի և օտարերկրյա կամ միջազգային արբիտրաժային տրիբունալին դիմած կողմերի կարգավիճակները և դրանցից բխող իրավունքների և պարտականությունների ծավալը չեն կարող նույնական լինել:

Հիմնավորված չէ նաև դիմողի այն փաստարկը, որ «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին» Նյու Յորքի 1958թ. կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերության և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների ուժով Հայաստանի Հանրապետությունում ճանաչման ենթակա են ինչպես օտարերկրյա և միջազգային, այնպես էլ ներպետական արբիտրաժային տրիբունալների որոշումները: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը նշված կոնվենցիային միացել է հայտարարությամբ՝ այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունը կոնվենցիան կկիրառի միայն մյուս Պայմանավորվող կողմի տարածքում ընդունված արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման նկատմամբ:

9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հաստատված է, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքը ներառում է նաև «վերջնական պարտադիր դատական ակտերի կատարման իրավունքը» /օրինակ՝ *Ouzounis and others v. Greece (Application no. 49144/99)*/:

Մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը պարտավոր է իր իրավական համակարգի աշխատանքը կազմակերպել այնպես, որպեսզի դատական որոշումների կատարման համար պատասխանատու պետական իշխանության տարբեր մարմինների միջև ապահովվի փոխհամագործակցություն և երաշխավորի ողջամիտ ժամկետում դատական որոշումների կատարումը /*Glushakova v. Russian Federation (Application no. 23287/05)*/:

Միևնույն ժամանակ, *Raylyan v. Russia (Application no. 22000/03)* գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պարտադիր դատական ակտի կատարման չհիմնավորված երկարատև ձգձգումը հանգեցնում է Կոնվենցիայի խախտման:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ սույն գործով ՀՀ ԴԱՀԿ ծառայության կողմից ձևավորված իրավակիրառական պրակտիկան չի բխում ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման պահանջներից, ինչը նպաստել է վճռի կատարման անհիմն ձգձգմանը:

ՀՀ ԴԱՀԿ ծառայության իրավասությունն է կատարողական թերթի ժամանակին, լրիվ և ճիշտ կատարման համար միջոցներ ձեռնարկելը, այլ ոչ թե դատական ակտի և կիրառման ենթակա օրենքի մեկնաբանությունը: Դատական ակտի իրավաչափության քննությունն ու օրենքի միատեսակ կիրառության ապահովումը ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական իրավասության խնդիրն է:

Հարկ է նշել, որ անդրադառնալով կատարման ներկայացնելու

Ժամկետի հաշվարկի սկզբի հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 30.04.2015թ. թիվ ԵԿԴ/0024/16/12 որոշմամբ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու՝ իր սահմանադրաիրավական գործառնությունն համապատասխան վիճարկվող դրույթների կապակցությամբ իրավաչափորեն նշել է. «Այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը, այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել սկսած այն օրվանից, երբ կայացվել է արբիտրաժային տրիբունալի վճիռը: Մինչդեռ այն դեպքում, երբ կատարման է ներկայացվում օտարերկրյա պետության արբիտրաժային տրիբունալի (միջազգային արբիտրաժի) վճիռները և որոշումները ճանաչելու վերաբերյալ դատական ակտը, ապա այն կատարման ներկայացնելու մեկ տարվա ժամկետը պետք է հաշվարկել այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2477-րդ հոդվածի 2-րդ կետում, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում ամրագրված դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22 մարտի 2016 թվականի
ՄԴՈ-1262



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀՄԱՅԱԿ ԽԱԼԱՖՅԱՆԻ, ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ՎԱՐԴԱՆ ԽԱԼԱՖՅԱՆԻ, ԱՆԻ ԽԱԼԱՖՅԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 40-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ «ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈՂՎԱԾՈՎ ԼԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ» ԴՐՈՒՑԹԻ ԵՎ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 5-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

5 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողներ Հ. Խալաֆյանի, Ա. Վարդանյանի, Վ. Խալաֆյանի, Ա. Խալաֆյանի և նրանց ներկայացուցիչներ Ա. Ջեյնալյանի, Տ. Սաֆարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հմայակ Խալաֆյանի, Անահիտ Վարդանյանի, Վարդան Խալաֆյանի, Անի Խալաֆյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հմայակ Խալաֆյանի, Անահիտ Վարդանյանի, Վարդան Խալաֆյանի, Անի Խալաֆյանի՝ 2015 թվականի նոյեմբերի 16-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Բ Ձ Ե Ց .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Անձինք, որոնք կարող են ներկայացուցիչներ լինել դատարանում» վերտառությամբ 40-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Դատարանում ներկայացուցիչ կարող է լինել դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի, բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի»:

Օրենսգրքի 40-րդ հոդվածը փոփոխությունների է ենթարկվել 28.11.07թ. ՀՕ-277-Ն, 26.12.08թ. ՀՕ-233-Ն ՀՀ օրենքներով, իսկ «բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթն օրենսգրքում ամրագրվել է 08.12.11թ. ՀՕ-341-Ն ՀՀ օրենքով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ օրենք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005

թվականի հունվարի 13-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 22-ին:

Օրենքի՝ «Փաստաբանական գործունեությունը» վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Մույն հոդվածով նախատեսված դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ

1) մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի.

2) մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի»:

Օրենքի 5-րդ հոդվածը փոփոխվել է 08.12.11թ. ՀՕ-339-Ն ՀՀ օրենքով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

դիմողները նոտարական կարգով վավերացված լիազորագրով երեք տարի ժամկետով լիազորել են «Փաստաբանների պալատ» ոչ առևտրային կազմակերպությանը չանդամակցող երրորդ անձի լինելու իրենց ներկայացուցիչը (այսուհետ՝ դիմողների ներկայացուցիչ) ՀՀ դատական և վարչական մարմիններում:

Դիմողների ներկայացուցչի՝ դիմողների անունից ներկայացված հայցադիմումի հիման վրա թիվ ԿԴ2/1078/02/14 գործով ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը 17.12.2014թ. կայացրել է «Հայցադիմումի վարույթ ընդունումը մերժելու մասին» որոշում:

Նշված որոշումը դիմողների ներկայացուցիչը բողոքարկել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, որն իր՝ 29.01.2015 թվականի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վերաքննիչ բողոքը՝ արձանագրելով, որ. «Տվյալ դեպքում վերաքննիչ բողոքը Հմայակ Խալաֆյանի, Անահիտ Վարդանյանի, Վարդան Խալաֆյանի, Անի Խալաֆյանի անունից ստորագրել են Արտակ Զեյնալյանը, Արայիկ Ղազարյանը: Սակայն բողոքին կից ներկայացված չէ (գործում նույնպես առկա չէ) Հմայակ Խալաֆյանի, Անահիտ Վարդանյանի, Վարդան Խալաֆյանի, Անի Խալաֆյանի կողմից Արտակ Զեյնալյանին, Արայիկ Ղազարյանին տրված լիազորագիր»:

Հետագայում դիմողների ներկայացուցիչն իր դիմումով ՀՀ վերաքննիչ

քաղաքացիական դատարան է ներկայացրել դիմողների կողմից իրեն տրված լիազորագրի պատճենը՝ նոտարական վավերացմամբ, սակայն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 23.02.2015 թվականի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վերաքննիչ բողոքն այն պատճառաբանությամբ, որ վերաքննիչ բողոքին կցված չեն փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագրի կամ լիազորողների և լիազորվածների միջև ազգակցական կապը հաստատող փաստաթղթի պատճենները:

Նշված որոշումը դիմողների ներկայացուցիչը բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան, որն իր՝ 22.04.2015 թվականի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին» որոշմամբ վերադարձրել է վճռաբեկ բողոքը՝ ներկայացուցիչ՝ փաստաբան չհանդիսանալու հիմքով՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ 40-րդ և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածների դրույթները:

3. Դիմողները, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված խմբագրությամբ տեքստի 1-ին, 18, 19 և 23-րդ հոդվածները, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը, ՀՀ դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, գտնում են, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասը և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 18, 19, 20 և 14.1-րդ հոդվածներին, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետին, քանի որ արգելում են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրենց կողմից ընտրված անձի միջոցով դատական ներկայացուցչություն իրականացնելու հնարավորությունը: Ըստ դիմողների սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթները հակասության մեջ են մտնում նաև ՀՀ Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված խմբագրությամբ) 1-ին, 8, 23, 27.1 և 31-րդ հոդվածների հետ:

Վկայակոչելով.

ա/ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 08.10.2008թ. ՍԴՈ-765 որոշման մեջ հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջի վերաբերյալ արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումներ, և, մասնավորապես, այն իրավական դիրքորոշումը, որ. «փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը՝ որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություն-

ներից»,

բ/ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասը, որը թվարկում է այն անձանց շրջանակը, որոնց հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն,

գ/ հանրային պաշտպանների՝ 2013-2014թթ. վարած գործերի վիճակագրությունը,

դիմողները գտնում են, որ Հանրային պաշտպանի գրասենյակն ունակ չէ միայնակ կրելու անվճար իրավաբանական ծառայություններ մատուցելու հանրային բեռը, քանի որ դրա ռեսուրսները մոտ 10 անգամ փոքր են պահանջարկից, իսկ մոտ ապագայում, պայմանավորված օբյեկտիվ մի շարք հանգամանքներով (պետության տնտեսական վիճակ և այլն), Հանրային պաշտպանի գրասենյակի ռեսուրսների տասն անգամ մեծացումն իրատեսական չէ: Ըստ դիմողների՝ նշվածը հաստատվում է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1192 և ՄԴՈ-1197 որոշումներով, որոնցով Սահմանադրական դատարանը կրկին հաստատել է, որ անվճար իրավաբանական ծառայությունների համակարգը՝ որպես այլընտրանք, դեռ բավարար չափով ապահովված չէ: Նշված պարագայում դիմողները գտնում են, որ ապահովված չէ անձանց արդար դատաքննության սահմանադրական իրավունքը:

Դիմողները՝ վկայակոչելով.

ա/ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, որի համաձայն՝ անձը Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ) գանգատ ներկայացնելու իրավունք ունի թե՛ անձամբ, թե՛ իր նախընտրած անձի միջոցով, ով պարտադիր չէ, որ տվյալ երկրի իրավաբաններին համախմբող հասարակական կազմակերպության անդամ լինի,

բ/ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն՝ անձը Սահմանադրական դատարան կարող է դիմել թե՛ անձամբ, թե՛ իր ներկայացուցչի միջոցով, ով պետք է լինի բարձրագույն կրթություն ունեցող իրավաբան, սակայն պարտադիր չէ, որ լինի փաստաբան,

գ/ ՀՀ վարչական և ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը, որոնք չեն նախատեսում ներկայացուցչի՝ պարտադիր կարգով փաստաբան լինելը վարչական դատավարությունում և տուժողի համար՝ քրեական վարույթում,

դ/ դատարանների կողմից հայցն ըստ ընդդատության վերահասցեագրելու ՀՀ օրենսդրությամբ ամրագրված իրավական հնարավորությունը,

արձանագրելով, որ թե՛ Սահմանադրական դատարանի որոշումը և թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը, որոնցով հաստատվել է սահմանադրական կամ կոնվենցիոն իրավունքների

Խախտման փաստը, Վճռաբեկ դատարանի որոշումները փաստի ուժով բեկանելու հիմք են, դիմողները կարծիք են հայտնում, որ վիճարկվող իրավակարգավորումների համաձայն Վճռաբեկ դատարանի որոշումը բեկանելու ունակ դատական ակտի հիմքում ընկած դիմումի հեղինակը գրկված է արդեն բեկանված գործով ընդհանուր իրավասության դատարանում անձին ներկայացնելու և գործին մասնակցելու իրավունքից, կամ վարչական դատարանի կողմից գործն ըստ ընդդատության ընդհանուր իրավասության դատարանին վերահասցեագրելու դեպքում ընդհանուր իրավասության դատարանի կողմից կմերժվի հայցի վարույթ ընդունումը, քանի որ ներկայացուցիչը փաստաբան չէ:

Դիմողները խնդրին անդրադառնալով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված խմբագրությամբ)՝ 14.1.-րդ և Կոնվենցիայի 14-րդ հոդվածներով ամրագրված խտրականության արգելման սկզբունքի տեսանկյունից՝ արձանագրում են, որ իրավաբանը, ով փաստաբան չէ, իրավունք ունի ներկայացուցչություն իրականացնելու ՀՀ սահմանադրական դատարանում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, ՀՀ վարչական դատարանում, ՀՀ ընդհանուր իրավասության դատարանում՝ քրեական գործերով որպես տուժողի ներկայացուցիչ, սակայն քաղաքացիական գործի շրջանակում չի կարող լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցիչը:

Անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորման նպատակի իրավաչափությանը՝ դիմողները գտնում են, որ վիճարկվող իրավակարգավորումը չի հետապնդում իրավաչափ նպատակ, դրանով չի հիմնավորվում, թե ինչ սահմանադրական արժեք է պաշտպանվում կամ երաշխավորվում կամ ապահովվում կիրառված սահմանափակումներով:

Դիմողները հիմնավոր չեն համարում վիճարկվող իրավակարգավորման նպատակը դատարանում ներկայացուցչության բարձր որակ ապահովելու հանգամանքով պայմանավորելը, և այդ տեսակետը հիմնավորում են նրանով, որ վիճարկվող իրավակարգավորումը թույլատրելի է համարում դատարան ներկայացվող դատավարական փաստաթղթերը նույնիսկ իրավաբանական կամ բարձրագույն կրթություն չունեցող անձի կողմից ստորագրելը և ներկայացնելը, սակայն թույլատրելի չի համարում ֆիզիկական և իրավաբանական անձանց անունից դատական լսումներին մասնակցելը և անձի շահերը ներկայացնելն իրավաբանական գիտությունների դոկտորի (դատավարագետի, քաղաքացիական իրավունքի գիտակի) կամ իրավաբանական ֆակուլտետի դեկանի, կամ գործող կամ պաշտոնաթող դատավորի, կամ փաստաբանների դպրոցի դասախոսի կողմից միայն այն պատճառով, որ ներկայացուցչություն իրականացնող անձը «Փաստաբանների պալատի» անդամ չէ:

Ըստ դիմողների՝ թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և թե՛ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում բացակայում է որևէ բացատրություն, թե ի՞նչ նպատակով է, որ՝

- փաստաբանները դատական ներկայացուցչություն իրականացնելու ազատություն, իրավունք ունեն, իսկ մյուս խումբ անձինք, այդ թվում՝ իրավաբանները և իրավապաշտպանները, զրկված են այդ ազատությունից, իրավունքից,

- փաստաբան չհանդիսացող մերձավոր ազգականները դատական ներկայացուցչություն իրականացնելու ազատություն, իրավունք ունեն, իսկ ազգական չհանդիսացող կամ ոչ մերձավոր ազգականները զրկված են այդ ազատությունից, իրավունքից,

- առանց փաստաբանի արտոնագրի ներկայացուցչություն կարելի է իրականացնել ոչ պարբերաբար, իսկ պարբերաբար՝ չի կարելի,

- առանց փաստաբանի արտոնագրի կարելի է ներկայացուցչություն իրականացնել անվճար, իսկ վճարովի՝ չի կարելի,

- փաստաբան չհանդիսացող անձը պետական մարմնի անունից դատական ներկայացուցչություն իրականացնելու ազատություն, իրավունք ունի, իսկ նույն գործով կողմ հանդիսացող ֆիզիկական անձի շահերը ներկայացնելու ազատությունից, իրավունքից զրկված է,

- պետական մարմինն ազատ է ընտրել իր ներկայացուցչին, իսկ նրա մրցակից ֆիզիկական անձի այդ ազատությունը, իրավունքը սահմանափակված է՝ ներկայացուցիչը պետք է լինի փաստաբան:

Որպես վիճարկվող իրավակարգավորումների հետևանքով դատարանի մատչելիության իրավունքի ենթադրյալ սահմանափակման փաստարկ դիմողները ներկայացնում են նաև փաստաբանների գործունեության ձեռնարկատիրական բնույթով պայմանավորված դատական ներկայացուցչություն իրականացնելուց հրաժարվելու՝ փաստաբանի ազատության իրավաչափությունը:

4. Պատասխանողը, առարկելով դիմողների փաստարկներին, գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար, վկայակոչելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով ընդունված խմբագրությամբ) 18, 19 և 20-րդ հոդվածները, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը՝ պատասխանողն արձանագրում է, որ օրենքի 41-րդ

հողվածի 5-րդ մասն ամրագրել է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը: Ընդ որում, ըստ պատասխանողի ի տարբերություն Կոնվենցիայի, օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձանց համար անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք է նախատեսվել անկախ տվյալ անձանց ֆինանսական հնարավորություններից, ինչը գերազանցում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու անվճար իրավաբանական օգնության կոնվենցիոն չափանիշը:

Հարցին անդրադառնալով իր ընտրությամբ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի տեսանկյունից և արձանագրելով, որ ըստ Եվրոպական դատարանի այն հանդիսանում է արդար դատաքննության բաղադրատարր, վկայակոչելով իր ընտրությամբ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի վերաբերյալ Եվրոպական դատարանի համապատասխան դիրքորոշումները՝ պատասխանողն արձանագրում է, որ ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ Կոնվենցիան սահմանել է անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու՝ պետությունների պոզիտիվ պարտականությունը միայն այն անձանց համար, ովքեր ի վիճակի չեն վճարել այդպիսի օգնության համար և միայն այն դեպքում, երբ դա կպահանջեն արդարադատության շահերը, իսկ այլ դեպքերում, երբ անձը ցանկանում է ստանալ իրավաբանական օգնություն, պարտավոր է վճարել դրա դիմաց:

Ըստ պատասխանողի՝ իրավաբանական օգնությունը պրոֆեսիոնալ մատուցելու նպատակով պետությունը սահմանել է, որ պարբերաբար և վճարովի դատական ներկայացուցչությունը քաղաքացիական և քրեական գործերով կարող է իրականացվել համապատասխան որակավորում ունեցող փաստաբանների միջոցով, իսկ անձը լիովին ազատ է ընտրելու իր նախընտրած փաստաբանին: Այն, ըստ պատասխանողի, համապատասխանում է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի պահանջներին:

Հարցին անդրադառնալով դատարանի մատչելիության իրավունքի տեսանկյունից, վկայակոչելով նշված իրավունքի վերաբերյալ «Ուսուցիչների լեհական միությունն ընդդեմ Լեհաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2004 թվականի սեպտեմբերի 21-ի վճռի 29-րդ կետում արտահայտած այն իրավական դիրքորոշումը, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների, պատասխանողը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումներն ամեննին չեն սահմանափակում անձի իրավունքն իր ընտրած ցանկացած անձի միջոցով իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը, այլ ուղղված են առանց

համապատասխան արտոնագրի պարբերաբար և վճարովի հիմունքներով դատական ներկայացուցչություն իրականացնելն արգելելուն:

Անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորումների՝ մի կողմից, և ՀՀ սահմանադրական դատարանում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, ՀՀ վարչական դատարանում՝ մյուս կողմից, դատական ներկայացուցչության վերաբերյալ իրավակարգավորումների տարբերությանը և, դրանով պայմանավորված՝ իրավական անորոշության և խտրականության արգելման սկզբունքի խախտման վերաբերյալ դիմողների դիրքորոշումներին, պատասխանողը գտնում է, որ նման տարբերակումը համապատասխան իրավական նորմերում ակնհայտ է, ձևակերպված է բավարար աստիճանի հստակությամբ և հետապնդում է իրավաչափ նպատակ:

Ըստ պատասխանողի՝ նպատակի իրավաչափությունը պայմանավորված է նրանով, որ ՀՀ սահմանադրական դատարանում, ՀՀ վարչական դատարանում գործում է գործի հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը, որի դեպքում նշված դատարանները սահմանափակված չեն դատավարության մասնակիցների ներկայացրած միջնորդություններով, առաջարկություններով, ապացույցներով, իսկ քրեական և քաղաքացիական գործերով դատավարությունների դեպքում գործում է կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքը, որի դեպքում դատարանը սահմանափակված է դատավարության մասնակիցների ներկայացրած միջնորդություններով, առաջարկություններով, ապացույցներով: Բացի դրանից, քրեական գործում տուժողը հանդես է գալիս պրոֆեսիոնալ իրավաբան դատախազի հետ մեկտեղ՝ մեղադրանքի կողմում, ինչն ապահովում է տուժողի իրավունքների պաշտպանության բարձր որակը:

5. Սույն գործով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս ելնել.

- հանրային իշխանության կողմից մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա արդյունավետ պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտությունից (ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 3-րդ հոդված),

- ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 61-րդ հոդվածի 1-ին մասում և 64-րդ հոդվածում ամրագրված՝ արդյունավետ դատական պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքի, ինչպես նաև իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման անհրաժեշտությունից:

Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դիմումի մուտքագրման պահին գործել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ 2005 թվականի փոփոխություններով, և դիմողները վիճարկվող իրավադրույթները վիճահարույց են համարել Սահմանադրության այդ խմբագրությամբ 1-ին, 8, 14.1, 18, 19, 20, 23, 27.1 և 31-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-3-րդ գլուխներն ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ից, սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը քննության առարկա է հանդիսանում Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին հոդվածի, 10-րդ հոդվածի 1-ին մասի, 29-րդ հոդվածի, 31-րդ հոդվածի 1-ին մասի, 53-րդ հոդվածի, 60-րդ հոդվածի 1-5-րդ մասերի, 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի և 64-րդ հոդվածի համատեքստում:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթը սահմանում է դատական ներկայացուցչության իրականացման ընդհանուր կանոնը, այն է՝ դատարանում ներկայացուցիչ կարող է լինել դատարանում գործը վարելու պատշաճ ձևակերպված լիազորություն ունեցող ցանկացած գործունակ քաղաքացի: Օրենսդիրն այս ընդհանուր կանոնից բացառություն է նախատեսում՝ օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասությամբ ամրագրելով «բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը և օրենքի 5-րդ հոդվածում շարադրելով դատական ներկայացուցչության իրականացման ընդհանուր կանոնից տարբերվող դրույթները:

Վերը նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ ցանկացած գործունակ քաղաքացի, եթե առկա չէ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերից որևէ մեկը, կարող է իրականացնել դատական ներկայացուցչություն: Ինչ վերաբերում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերին, որոնք դատական ներկայացուցչության իրականացման բնագավառում հանդես են գալիս որպես բացառություններ, ամրագրված են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասում:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը սահմանել է դատական

ներկայացուցչության կամ դրա կազմակերպման երկու դեպք.

- դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն, և

- դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը ոչ որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն:

Ընդ որում, դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը՝ որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն, կարող է իրականացնել միայն փաստաբանը:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ միայն փաստաբանի կողմից պարբերաբար կամ վճարովի հիմունքներով ծառայություն մատուցելու օրենսդրական պահանջը բխում է փաստաբանական գործունեության ձեռնարկատիրական բնույթից, «ծառայություն» եզրույթի բովանդակությունից, որոնց համար հատկանշական են պարբերականությունը և վճարովիությունը, ինչպես նաև նման ծառայություն մատուցողի հանդեպ համարժեք պատասխանատվության երաշխիքների ապահովման անհրաժեշտությունից:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ միայն փաստաբանի միջոցով դատական ներկայացուցչության իրականացման օրենսդրական պահանջն ամրագրելով՝ օրենսդիրը ոչ միայն ապահովում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի երաշխավորման իր պոզիտիվ պարտականությունը, այլև երաշխավորում է որակյալ իրավաբանական օգնություն՝ դրանով իսկ երաշխավորելով իրավական պետությանը հարիր արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ամրագրված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում: Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. «Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության՝ որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը: Այդ նպատակն է

հետապնդում նաև օրենքով նախատեսված՝ փաստաբանական դպրոցի ստեղծումը, որը կազմակերպում և անցկացնում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնագիտական ուսուցումը, կազմակերպում է փաստաբանական դպրոցի ունկնդիրների համար անցկացվող որակավորման քննությունը, կազմակերպում և անցկացնում է փաստաբանների մասնագիտական վերապատրաստումը:

7. Ինչ վերաբերում է վճարովիության հիմունքներով պարբերաբար դատական ներկայացուցչության միայն փաստաբանի միջոցով իրականացման օրենսդրական պահանջի և դատարանի մատչելիության իրավունքի միջև հարաբերակցությանը, ապա, հաշվի առնելով փաստաբանական գործունեության ձեռնարկատիրական բնույթը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման հարաբերակցությունը կարող է պայմանավորված լինել բացառապես դատական ներկայացուցչություն հայցող անձի ֆինանսական հնարավորություններով:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը նախատեսել է որոշակի երաշխիքներ դատական ներկայացուցչություն հայցող, սակայն համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունեցող անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի ապահովման համար: Մասնավորապես, օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի և օրենքի 5-րդ հոդվածի վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, նախ՝ դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը չի կրում պարբերական բնույթ կամ վճարովի չէ:

Երկրորդ՝ անվճար, սակայն պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, թոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար:

Երրորդ՝ վճարովի կամ պարբերաբար դատական ներկայացուցչություն կարող է իրականացնել նաև փաստաբան չհանդիսացող գործունակ և համապատասխան լիազորագիր ունեցող անձը, եթե նա ներկայացուցչություն է իրականացնում այն իրավաբանական անձի համար, որի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանում են ներկայացուցչի մերձավոր ազգականին (ազգականներին):

Բացի դրանից, օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում օրենսդիրը թվար-

կել է հասարակության խոցելի խմբերին պատկանող 16 կատեգորիայի անձանց, որոնց իրավաբանական օգնությունը տրամադրվում է անվճար ուղղակիորեն չնախատեսելով տվյալ կատեգորիայի անձանց՝ համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունենալու հանգամանքը, և միայն մեկ դեպքում, որը սահմանված է օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետում (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներ), օրենսդիրն անվճար իրավաբանական օգնության տրամադրման համար ուղղակիորեն նախատեսել է տվյալ կատեգորիայի անձանց՝ համապատասխան ֆինանսական հնարավորություններ չունենալու հանգամանքը:

Միաժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի ապահովման նկատառումներից ելնելով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթները պարտավորեցնում են դատարաններին յուրաքանչյուր կոնկրետ քաղաքացիական գործով ստուգելու հետևյալ հանգամանքների առկայությունը.

- ներկայացուցչի փաստաբան լինելը,
- ներկայացուցչի փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա կողմից դատական ներկայացուցչությունը պարբերաբար կամ վճարովի հիմունքներով իրականացնելը,
- ներկայացուցչի փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա՝ վստահորդի մերձավոր ազգական հանդիսանալը և դատական ներկայացուցչությունն անվճար իրականացնելը,
- իրավաբանական անձի ներկայացուցչի՝ փաստաբան չհանդիսանալու դեպքում՝ նրա մերձավոր ազգական հանդիսանալն այն անձի կամ անձանց նկատմամբ, որոնց պատկանում են տվյալ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը:

8. Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում այն փաստարկները, որ վիճարկվող նորմերը հակասում են արդար դատաքննության, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքներին, անձնական կյանքի հարգման իրավունքին, դրա բաղադրատարր հանդիսացող ինքնաարտահայտման իրավունքին, այլ անձանց շահերը պաշտպանելու նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմումներ ներկայացնելու և սեփականության իրավունքներին: Նախ՝ առկա չէ որևէ պատճառահետևանքային կապ վիճարկվող նորմերի և արդար դատաքննության, անձնական կյանքի հարգման և սեփականության իրավունքների միջև: Երկրորդ՝ ինքնաարտահայտման իրավունքը, որը դիմողների ընկալմամբ ներառում է նաև դատական ներկայացուցչությունը, և իրավաբանական օգնություն ստա-

նալու իրավունքը մնացած բոլոր իրավունքների նմանությամբ կարող են իրացվել միայն օրենքով նախատեսված կարգով, այլ ոչ թե սեփական հայեցողությամբ: Բացի դրանից, ինքնաարտահայտման իրավունքը, որը դիմողների ընկալմամբ ներառում է նաև դատական ներկայացուցչությունը, վերաբերելի է դատական ներկայացուցչություն իրականացնողին, մինչդեռ տվյալ դեպքում դիմողները դատարաններում հանդես են եկել որպես հայցվորներ, այլ ոչ թե ներկայացուցիչներ: Երրորդ՝ այլ անձանց շահերը պաշտպանելու նկատառումներով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմումներ ներկայացնելու իրավունքն ուղղակիորեն չի վերաբերում հայցադիմումին, վերաբննիչ և վճռաբեկ բողոքներին, դրանց պատասխաններին, քաղաքացիական գործով ներկայացվող գրավոր բացատրություններին և առարկություններին, գրավոր միջնորդություններին, հատուկ և հատուկ հայցային վարույթներով ներկայացվող դիմումներին:

Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում նաև այն փաստարկը, որ վիճարկվող նորմերը հակասում են խտրականության արգելման սկզբունքին, քանի որ տվյալ դեպքում տարբերակումը վերաբերում է տարբեր կատեգորիայի անձանց՝ փաստաբաններին, իրավաբաններին և այդպիսիք չհանդիսացող անձանց: Խտրականությունն առկա կլիներ այն դեպքում, երբ օրենսդրորեն տարբերակում նախատեսվեր այս երեք խմբերից որևէ մեկում: Դատավարական տարբեր գործընթացներում ներկայացուցչության ապահովումն ու վերջինիս իրավակարգավորումն իրականացվում է այդ գործընթացների առանձնահատկությունները հաշվի առնելով:

ՀՀ սահմանադրական դատարանը, հաշվի առնելով նաև ՍԴՈ-1135 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վեճի առարկա հիմնախնդրի առկա իրավակարգավորման հիմնական նպատակը քաղաքացիական արդարադատության ոլորտում մարդկանց վճարովի իրավաբանական ծառայություն մատուցելու ինստիտուտի հստակ կանոնակարգումն է՝ արգելելով անձանց պարբերաբար և վճարովի հիմունքներով հանդես գալ որպես ներկայացուցիչ դատարանում՝ չունենալով համապատասխան գործունեությամբ զբաղվելու արտոնագիր: Նման իրավակարգավորում առկա է բազմաթիվ երկրներում և բխում է իրավական պետությունում իրավունքի գերակայության երաշխավորման սահմանադրական սկզբունքի էությունից: Այլ խնդիր է, որ արդարադատական պրակտիկայում չպետք է այն աստիճան նեղացվի քաղաքացիական գործերով իրավաբանական օգնություն ցույց տալու շրջանակները, որ բացառվեն ոչ վճարովի հիմունքներով և ոչ պարբերաբար մատուցվող իրավական օգնության հնարավորությունները: Իր հերթին, դատական պրակտիկայում տարակերպ մեկնաբանություններից

խուսափելու համար, հետագա օրենսդրական հստակեցումներն առավել որոշակի պետք է դարձնեն «պարբերաբար» և/կամ «վճարովի հիմունքներով» եզրույթները, ինչպես նաև երաշխավորեն դատավարական իրավակարգավորումների միասնականությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ «բացառությամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դեպքերի» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 ապրիլի 2016 թվականի
ՄԴՈ-1263



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 102-ՐԴ ՀՈՒՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

12 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ Հ. Հովհաննիսյանի, Գ. Գրիգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 եւ 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՎՏԲ-Հայաստան

Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի՝ 26.11.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող եւ պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն (ՀՕ-247, այսուհետ՝ օրենսգիրք) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին եւ ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցումը» վերտառությամբ 102-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Պատասխանողն իրավունք ունի հայց հարուցել նույն դատարան ընդդեմ հայցվորի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով»:

Օրենսգրքում հիշյալ հոդվածը լրացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-101 ՀՀ օրենքով, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 2000 թվականի հոկտեմբերի 24-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2000 թվականի նոյեմբերի 15-ին եւ ուժի մեջ է մտել 2000 թվականի դեկտեմբերի 10-ից:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետեւյալին.

Թիվ ԵՄԴ/0425/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում 10.04.2013թ. ներկայացված հայցադիմումի եւ 18.04.2013թ. ներկայացված հակընդդեմ հայցի հիման վրա Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում /այսուհետ՝ դատարան/ քննվել է քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Արտադրատպագրական» ՓԲ ընկերության տնօրեն Մ. Բաղիրյանի ընդդեմ Վ. Համբարձումյանի, դատարանի 22.04.2013թ. որոշմամբ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի միջնորդության բավարարման արդյունքում որպես երրորդ անձ ներգրավված՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության՝ թիվ ԵՄԴ/0761/02/12 քաղաքացիական գործով կայացված վճռի հիմքով

պարտավորությունների կատարմանը պարտավորեցնելու պահանջի մասին եւ ըստ հակընդդեմ հայցի Վ. Համբարձումյանի ընդդեմ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի, «Դանհիս» ՍՊԸ-ի եւ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ «Արտադրատպագրական» ՓԲԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին: Դատարանը թիվ ԵՄԴ/0425/02/13 քաղաքացիական գործով վճիռ է կայացրել 05.02.2014թ., որով հայցը եւ հակընդդեմ հայցը մերժել է, վճռել է դատարանի 09.10.2013թ. որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչեւ վճռի օրինական ուժի մեջ մտնելը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր՝ 22.05.2014թ. որոշմամբ մերժել է Վ. Համբարձումյանի վերաքննիչ բողոքը, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 16.07.2014թ. որոշմամբ վերադարձրել է վերջինիս վճռաբեկ բողոքը:

Մինչեւ վճռի կայացումը դատարանն իր՝ 12.04.2013թ. որոշմամբ Վ. Համբարձումյանի միջնորդությունը բավարարել է՝ ի թիվս այլնի, հայցագնի՝ 350.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել Երեւան քաղաքի Իսակովի պողոտա, թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

Հետագայում «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի միջնորդության բավարարման արդյունքում 10.01.2014թ. կայացված որոշմամբ փոփոխվել է դատարանի՝ վերը նշված որոշումը՝ ի թիվս այլնի, 350.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դրամական միջոցների վրա:

Դատարանի 09.10.2013թ. որոշմամբ սկզբնական հայցով հայցվոր «Արտադրատպագրական» ՓԲԸ-ի միջնորդության բավարարման արդյունքում արգելվել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերությանը կատարել որեւէ գործողություն Երեւան քաղաքի Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցեում գտնվող անշարժ գույքի վրա, արգելվել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերությանը եւ նրա կողմից լիազորված անձանց խոչընդոտելու «Արտադրատպագրական» ՓԲ ընկերության եւ նրա աշխատակիցների մուտքը Երեւան քաղաքի Իսակովի պողոտայի թիվ 48/5 հասցե, արգելվել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերությանը եւ ընկերության համար ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպություններին խոչընդոտել «Արտադրատպագրական» ՓԲ ընկերության աշխատանքներին:

Հետագայում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի միջնորդության բավարարման արդյունքում 10.01.2014թ. կայացված որոշմամբ վերացվել է վերը նշված հայցի ապահովման միջոցը:

Սակայն մինչեւ վերը նշված հայցի ապահովման միջոցը վերացնելը, 27.11.2013թ. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն դիմել է դատարան՝ պահանջելով «Արտադրատպագրական» ՓԲԸ-ից բռնագանձել 12.000.000

3. Դիմողը գտնում է, որ.

- վիճարկվող դրույթի՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից թիվ ԵՄԴ/1613/02/13 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ տրված մեկնաբանությամբ կիրառումը /դատական պրակտիկան/ հակասում է ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, 61-րդ հոդվածի 1-ին մասի եւ 63-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին,

- կամ վիճարկվող դրույթում առկա օրենքի բացը հակասում է ՀՀ Սահմանադրության հիշյալ դրույթներին այնքանով, որքանով այդ բացը իրավակիրառ պրակտիկայում հստակ հնարավորություն չի տալիս երրորդ անձին դատական կարգով պահանջել հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասի հատուցում:

Իր՝ վերը նշված դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողն օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 27-րդ հոդվածի 1-ին կետի նորմերի համակարգային վերլուծության արդյունքում գտնում է, որ վիճարկվող նորմը տվյալ դեպքում պետք է մեկնաբանել ընդարձակ մեկնաբանման կանոններով եւ եզրակացնում է, որ ընդարձակ մեկնաբանման դեպքում վիճարկվող դրույթի բովանդակությունը ներառում է նաեւ տվյալ դրույթով նախատեսված իրավունքն ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձին վերապահելը:

Որպես փաստարկ՝ դիմողը վկայակոչում է օրենսգրքի 98-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, որը դատարանին իրավունք է վերապահում կիրառել նաեւ հայցի ապահովման այնպիսի միջոց, որն արգելում է կողմերից տարբերվող այլ անձանց եւս իրականացնելու որոշակի գործողություններ վեճի առարկայի նկատմամբ: Ըստ դիմողի՝ տվյալ դեպքում այդ անձը կարող է կրել գույքային վնաս, իսկ հայցի ապահովմամբ պատասխանողին եւ երրորդ անձին պատճառված վնասի հատուցման դեպքը դասվում է օրինաչափ վարքագծի եւ մեղքի բացակայության պայմաններում պատճառված վնասի հատուցման՝ օրենքով սահմանված դեպքերի շարքին:

Դիմողը վկայակոչում է նաեւ սեփականատիրոջ կողմից իր գույքն օգտագործելու եւ տիրապետելու իրավագործությունների սահմանափակման հետեւանքով գույքային վնասի առաջացման հնարավորության եւ անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի վերաբերյալ համապատասխանաբար՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումներ, ինչպես նաեւ օրենքի բացի քննության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումներ:

4. Պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին, սակայն տվյալ դրույթի մեկնաբանությունն իրավակիրառ պրակտիկայում /վերաքննիչ դատարանի թիվ ԵՄԴ/1613/02/13 որոշում/ այնքանով, որքանով ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց համար չի երաշխավորում հայցի ապահովմամբ իրենց պատճառված վնասների հատուցում ստանալու պահանջով դատարան դիմելու իրավունքը, հակասում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

Իր՝ վերը նշված դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողն օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի եւ 45-րդ հոդվածի 2-րդ մասի համակարգային վերլուծության արդյունքում գտնում է, որ վիճարկվող դրույթով նախատեսված իրավունքը վերապահված է նաեւ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց, իսկ օրենսդիրն ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց՝ պատասխանողի իրավունքների հետ նույնական բոլոր իրավունքներն ամեն անգամ թվարկելու փոխարեն սահմանել է պատասխանողի բոլոր իրավունքներն ունենալու վերաբերյալ ընդհանուր կանոն՝ այդ կանոնից հատակ թվարկված բացառություններով:

Անդրադառնալով օրենքի բացի վերաբերյալ դիմողի փաստարկներին՝ պատասխանողը գտնում է, որ օրենսգրքում գործող իրավական դրույթները ներկա խմբագրությամբ ամբողջովին հնարավորություն են տալիս ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձանց արդյունավետորեն իրականացնել իրենց օրինական շահերի պաշտպանությունը, այդ թվում՝ հայցի ապահովմամբ իրենց պատճառված վնասների հատուցման պահանջով հայց հարուցելը եւ հատուցում ստանալը:

5. Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասում «Պատասխանողն» բառի օգտագործմամբ օրենսդիրն ըստ էության նկատի է ունեցել պատասխանողին: Մյուս կողմից, օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսել է դատավարական պաշտպանության համապատասխան միջոցներ եւ եղանակներ, որոնց օգտագործմամբ հայցի ապահովմամբ վնաս կրած անձը հնարավորություն է ստանում ձեռք բերելու պատճառված վնասի հատուցման իրավունք: Ընդ որում, դատավարական պաշտպանության համապատասխան միջոցները եւ եղանակները, ի թիվս այլնի, ներառում են դատա-

1. «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

12 ապրիլի 2016 թվականի
ՄԴՈ-1264



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԳԱԳԻԿ ՉՐԱՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 340-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով.

Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ.
Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա.
Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի
ներկայացուցիչ Տ. Եգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային
ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխա-
տակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական
բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-
րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Գազիկ Չրադյանի

դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Գագիկ Չրաղյանի՝ 11.12.2015թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ր Զ Ե Ց.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ 1998 թվականի մայիսի 5-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ՀՀ Ազգային ժողովի կողմից 17.06.1998թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ «Հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատվելը» վերտառությամբ 340-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով:

2. Ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում: Մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ»:

Օրենսգրքի 340-րդ հոդվածում փոփոխություններ կամ լրացումներ չեն կատարվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2010 թվականի նոյեմբերի 3-ին կնքված պարտավորագրի համաձայն՝ Գ. Հովհաննիսյանը պարտավորվել է 2010 թվականի նոյեմբերին դիմողին՝ Գ. Չրաղյանին, վերադարձնել որոշակի գումար, որը չի վերադարձրել: Դիմողը 2013 թվականի նոյեմբերի 29-ին հայցադիմում է ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Գ. Հովհաննիսյանի՝ վերոնշյալ պարտավորագրով նախատեսված գումարի բռնագանձման պահանջի մասին: Հայցադիմումով ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն:

06.12.2013 թվականին դատարանը որոշում է կայացրել միջնորդությունը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին՝ հայցադիմումը վերադարձնելը պատճառաբանելով, ի թիվս այլնի, պետական տուրքը վճարված չլինելու հանգամանքով, իսկ միջնորդությունը մերժելը՝ նրանով, որ ներկայացված չեն ապացույցներ պետական տուրքը վճարելու հնարավորության բացակայության մասին (գործ թիվ ՇԴ/1511/02/13): Դիմողը որոշումն ստացել է 12.12.2013 թվականին, իսկ 16.12.2013 թվականին, եռօրյա ժամկետի պահպանմամբ, կրկին հայց է ներկայացրել դատարան:

19.12.2013 թվականին առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել վերադարձնել 16.12.2013 թվականին, եռօրյա ժամկետի պահպանմամբ, կրկին ներկայացված հայցադիմումը նույն հիմքով՝ արձանագրելով, որ չեն կատարվել 06.12.2013 թվականի որոշման պահանջները:

Նշված որոշման դեմ բերվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 22.01.2014թ. որոշմամբ վերադարձվել է, և Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 06.12.2013թ. և 19.12.2013թ. հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները մտել են օրինական ուժի մեջ:

27.12.2013 թվականին դիմողի ներկայացուցիչը փոստային կապի միջոցով նոր հայցադիմում է ներկայացրել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Գ. Հովհաննիսյանի՝ վերոնշյալ պարտավորագրով նախատեսված գումարի բռնագանձման պահանջով: Հայցադիմումով ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդություն: 13.01.2014 թվականին դատարանը որոշում է կայացրել միջնորդությունը մերժելու և հայցադիմումը վերադարձնելու մասին՝ հայցադիմումը վերադարձնելը պատճառաբանելով պետական տուրքը վճարված չլինելու հանգամանքով, իսկ միջնորդությունը մերժելը՝ նրանով, որ ներկայացված չեն ապացույցներ պետական տուրքը վճարելու հնարավորության բացակայության մասին (գործ թիվ ՇԴ/0014/02/14): Նշված որոշումը չի բողոքարկվել վերաքննության կարգով:

05.02.2014 թվականին նոր հայցադիմում է ներկայացվել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով, սակայն այլ ծավալի հայցապահանջով: 10.02.2014 թվականին դատարանը որոշում է կայացրել վերադարձնել 05.02.2014 թվականին ներկայացված հայցադիմումն այն պատճառաբանություններով, որ ՇԴ/1511/02/13 գործով ներկայացվել է վերաքննիչ բողոք, գործը գտնվում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում դեռևս անավարտ վիճակում, և որ նման պայմաններում հայցադիմումը ենթակա է վերադարձման (գործ թիվ ՇԴ/0140/02/14):

միջնորդություն, որը դատարանի կողմից մերժվում է իր հայեցողական լիազորության շրջանակներում, ապա օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դատարանների կողմից նշված դրույթին տրված մեկնաբանության շրջանակներում նման հայցը համարվում է սահմանված կարգով չհարուցված, և նման հայց ներկայացնելու փաստն ինքնին հիմք չի հանդիսանում հայցային վաղեմության ժամկետի ընդհատման համար:

Դիմողի կարծիքով՝ նման մեկնաբանության պայմաններում անձի իրավունքների պաշտպանության հնարավորությունը հայցային վաղեմության ժամկետի իմաստով, ուղղակի կախվածության մեջ է դրվում վերջինիս ֆինանսական հնարավորություններից, և հայցային վաղեմության ժամկետի ընթացքում դատարանն ղիմելու համար անհրաժեշտ պետական տուրքի վճարման հնարավորության բացակայությունը՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդության մերժման պայմաններում, ուղղակի անհնարինություն է ստեղծում հայցվորի համար իր իրավունքների պաշտպանության նկատառումներով նաև հետագայում դատարանն ղիմելու համար: Արդյունքում, ըստ դիմողի, անհամաչափ սահմանափակում է անձի դատական պաշտպանության իրավունքը՝ արգելափակելով դատարանի մատչելիությունը վերջինիս համար: Ըստ դիմողի՝ օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ Սահմանադրության 1-ին, 18-րդ և 19-րդ հոդվածների, ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի պահանջների լույսի ներքո պետք է ենթադրի հայցային վաղեմության ժամկետի ընդհատում հայց հարուցելու բոլոր այն դեպքերում, երբ հայցադիմումի վերադարձը դատարանի կողմից կատարվել է միայն հայցվորի կողմից պետական տուրքի չվճարման պատճառաբանությամբ՝ հայցվորի կողմից, գույքային դրությունից ելնելով, պետական տուրքի վճարման արտոնություն կիրառելու միջնորդություն ներկայացվելու պայմաններում:

Դիմողը վկայակոչում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2015թ. թիվ ԵԱՆԴ/0052/02/11 գործով կայացված որոշումը, որում ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատել է իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմին տրված մեկնաբանությունը: Դիմողը նաև վկայակոչում է ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք որոշումներ, որոնցում «Վճռաբեկ դատարանը գտել է, որ պետական տուրքի գծով արտոնությունները՝ այդ թվում՝ դրա տարածամեկտումը կամ վճարման հետաձգումը, նպատակ են հետապնդում վերացնել արդարադատության մատչելիության այնպիսի խոչընդոտները, որոնք պայմանավորում են անձի մոտ համապատասխան միջոցների բացակայության պատճառով դատարանն ղիմելու, վերադաս աստիան բողոք ներկայացնելու անհնարինությունը: Այդ նպատակից ելնելով օրենսդիրը, ի տարբերություն պետական տուրքի վճարումից ազատելու ձևով արտոնություն սահմանելուն, դատարանի համար

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ի ՏԵՂԵԿՎԱԳԻՐ Ի 4(82)2016

Պատասխանողը նշում է, որ դատարանի մատչելիության ապահովման նպատակով պետությունը սահմանել է պետական տուրքից ազատման դեպքեր: Ըստ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի՝ պետական տուրքի գծով կարող են սահմանվել հետևյալ արտոնությունները՝

- ա) պետական տուրքի վճարումից ազատում.
- բ) պետական տուրքի նվազեցում.
- գ) պետական տուրքի դրույքաչափի նվազեցում.
- դ) պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում.

ե) պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանք վճարելու ժամկետի հետաձգում:

Միաժամանակ, օրենքով սահմանվել են այն դեպքերը, երբ անձինք դատարաններում օգտվում են պետական տուրքի գծով արտոնություններից:

Պետական տուրքի հետաձգման հարցը լուծվում է դատարանի՝ համապատասխան միջնորդությունը բավարարելու դեպքում՝ հաշվի առնելով վերջինիս հիմնավորվածությունը: Այն գնահատելու հարցում դատարաններն ունեն հայեցողության որոշակի շրջանակ՝ քննարկելու յուրաքանչյուր դեպքում կոնկրետ հանգամանքներ, ինչը ենթադրում է, որ դատարանները կաշկանդված չեն բոլոր դեպքերում պետական տուրքի վճարման հետաձգման միջնորդության առկայության պայմաններում բավարարելու այն:

Ինչ վերաբերում է ինդրո առարկա դրույթի համապատասխանությանն իրավական որոշակիության սկզբունքին, ապա պատասխանողը հարկ է համարում անդրադառնալ Եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի թիվ ՍԴՈ-630 որոշման համաձայն որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res iudicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը:

Պատասխանողը վկայակոչում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Հետևաբար, ըստ պատասխանողի՝ օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող «սահմանված կարգով հայցը հարուցելով» բառակապակցությունը հստակ սահմանում է, որ ոչ թե ցանկացած կարգով

ներկայացված հայցն է ընդհատում հայցային վաղեմության ժամկետը՝ կարևորելով պարզապես հայց հարուցելու, այն է՝ անձի նկատմամբ պահանջ ներկայացնելու կամահայտնության առկայությունը, այլ բացառապես օրենքով սահմանված կարգով հայց հարուցելը՝ նկատի ունենալով հայցադիմում ներկայացնելու օրենքով սահմանված պահանջները, և այս մասով խնդրո առարկա «դրույթն ամբողջությամբ համապատասխանում է իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, օրենքում օգտագործվող ձևակերպումների հստակության, բավարար մատչելիության, համապատասխան սուբյեկտների կողմից իրենց վարքագիծն օրենքի կարգադրագրերի պահանջներին համապատասխանեցնելու գործնական, ռեալ հնարավորության և օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջներին»:

Միաժամանակ, պատասխանողն առաջարկում է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք դիմողը ձևականորեն քննարկելով խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է իր նկատմամբ կայացված դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության հարց, ինչը հանդիսանում է գործի քննությունը մերժելու հիմք:

Այնուամենայնիվ, ամփոփելով ներկայացված փաստարկները՝ պատասխանողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի լուծման նպատակով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հիմնախնդիրներին՝

- արդյո՞ք վիճարկվող դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որ հնարավորություն է տալիս իրավունքի սուբյեկտներին ընկալելու օրենսդրի պահանջը, կանխատեսելու դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնելու այդ պահանջներին,

- արդյո՞ք վիճարկվող դրույթը չի սահմանափակում ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ դատարանի մատչելիության իրավունքն այնքանով, որ անձը զրկվի դատական պաշտպանության իրավունքից:

Միաժամանակ, սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ դիմումի մուտքագրման պահին գործել է ՀՀ Սահմանադրությունը՝ 2005 թվականի

փոփոխություններով, և դիմողը վիճարկվող իրավադրույթները վիճահարույց է համարել Սահմանադրության այդ խմբագրությամբ 1-ին, 18, 19, 31 և 43-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-3-րդ գլուխներն ուժի մեջ են մտել 2015 թվականի դեկտեմբերի 22-ից, ուստի սույն գործի շրջանակներում վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցը քննության առարկա է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 1-ին, 60, 61, 63 և 79-րդ հոդվածների համատեքստում:

6. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի վիճարկվող 1-ին մասով նախատեսվում է հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման երկու հիմք, այն է

1. հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով,

2. պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով:

Այս պայմաններից որևէ մեկի առկայությունը բավարար է, որպեսզի ընդհատվի հայցային վաղեմության ժամկետի ընթացքը: Հաշվի առնելով այն, որ դիմողը վիճարկում է միայն հայց հարուցելու միջոցով հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման հիմքը, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այդ հիմքով հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատումը կարգավորող դրույթի սահմանադրականությանը:

Ըստ օրենսգրքի վիճարկվող դրույթի՝ հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, երբ համապատասխան հայցը հարուցվում է սահմանված կարգով, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

Հայց հարուցելու հետ կապված իրավակարգավորումները նախատեսված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ գլխով, ըստ որի՝ հայց հարուցելն իրենից ներկայացնում է այնպիսի իրավական փաստ, որն ի հայտ է գալիս հայցադիմում ներկայացնելով և դատարանի կողմից համապատասխան որոշմամբ այն ընդունելով:

Հարկ է նշել նաև, որ հայցային վաղեմության ժամկետը և դրա ընթացքի ընդհատումը կարգավորող նորմերը հավասարակշռում են պարտատիրոջ և պարտապանի շահերը: Այդ իսկ պատճառով պարտապանը պետք է տեղյակ լինի հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման մասին: Այն դեպքերում, երբ հայցը սահմանված կարգով չի հարուցվում, պարտապանը կարող է և տեղյակ չլինել պարտատիրոջ կողմից ներկայացված պահանջների մասին, քանի որ ՀՀ քաղա-

քացիական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի համաձայն՝ ոչ թե հայց ներկայացնելուց, այլ հայց հարուցելուց հետո է դատարանը հայցադիմումի և կից փաստաթղթերի պատճենները պատշաճ ձևով ուղարկում պատասխանողին:

Բացի դրանից, եթե հայցադիմումը սահմանված կարգով չընդունվի դատարանի որոշմամբ, և միայն դատարան հայցադիմում ներկայացնելու փաստն ընդհատի հայցային վաղեմության ժամկետի ընթացքը, ապա չի լինի հստակ երաշխիք, որ ընդհատված ժամկետն ուղղակիորեն վերաբերելու է հետագայում ներկայացվող հայցադիմումի առարկային:

Հետևաբար՝ սահմանված կարգով հայց հարուցելը փաստվում է հայցադիմումն ընդունելու մասին դատարանի կայացրած որոշմամբ, և եթե դատարանը կայացրել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին կամ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում, որը չի բողոքարկվել կամ բողոքարկվել է, սակայն չի վերացվել և ուժի մեջ է մտել, ապա դատավարական տեսանկյունից նշանակում է, որ սահմանված կարգով հայց չի հարուցվել:

Միաժամանակ, դիմողն ըստ էության վիճարկում է ոչ թե օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասի՝ «սահմանված կարգով հայց հարուցել» դրույթը, այլ բուն կարգի առանձին տարրը, ինչը քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման առարկա է, և որի սահմանադրականության հարցը սույն գործի շրջանակներում քննության առարկա չի կարող դառնալ:

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև Եվրոպական դատարանի կողմից արտահայտված այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ «նորմը չի կարող համարվել «օրենք» քանի դեռ այն ձևակերպված չէ բավարար որոշակիությամբ, որպեսզի քաղաքացուն հնարավորություն տա կարգավորել իր վարքագիծը: Նա պետք է ի վիճակի լինի, անհրաժեշտության դեպքում համապատասխան խորհրդի օգնությամբ, այդ հանգամանքներում ողջամիտ աստիճանի կանխատեսել այն հետևանքները, որոնց նշված գործողությունը կարող է հանգեցնել» (CASE OF MICHAUD v. FRANCE (Application no. 12323/11)):

Վերոշարադրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի լույսի ներքո վեճի առարկա դրույթը, այն է՝ «սահմանված կարգով հայց հարուցելը»՝ որպես հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման պայման, իր բովանդակությամբ որոշակի է, հնարավորություն է տալիս անձին հստակ ընկալել օրենսդրի կողմից սահմանված պահանջը և կանխատեսել սահմանված կարգով հայց չհարուցելու հետևանքները հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման առնչությամբ:

7. Ինչ վերաբերում է առանց տուրքի վճարման հայց ներկայացնելուն և, հետևաբար, սահմանված կարգով հայց չհարուցելու պարագայում հայցային վաղեմության ժամկետի ընթացքի չընդհատվելուն, ապա անձի դատական պաշտպանության իրավունքի իրականացման տեսանկյունից անհրաժեշտ է նշել հետևյալը.

նախ՝ ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Սահմանված կարգով հայց հարուցելու ֆինանսական բաղադրատարրի առնչությամբ՝ որպես արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի նշանակությանը համարժեք սահմանափակում, պետք է ընդգծել, որ ՀՀ սահմանադրական դատարանն այս հարցի առնչությամբ արտահայտել է իր դիրքորոշումը: Մասնավորապես, իր 25.05.2010 թվականի ՍԴՈ-890 որոշման 6-րդ կետում Սահմանադրական դատարանը նշել է. «Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դատարաններում պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարումը սերտորեն առնչվում է անձի՝ դատարան դիմելու սահմանադրական իրավունքի իրացման հնարավորության հետ՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատարաններում պետական տուրք վճարելու պարտականությունը չի հետապնդում դատարան դիմելու սահմանադրական իրավունքից անձին զրկելու նպատակ: Օրենսդիրը կարգավորելով դատարաններում պետական տուրքի գանձման հետ կապված իրավահարաբերությունները՝ կաշկանդված է քաղաքացիական իրավունքների ու ազատությունների պաշտպանության սահմանադրական սկզբունքներով, մասնավորապես, դատարանի մատչելիության սկզբունքի երաշխավորման պարտականությամբ: Ուստի օրենսդրի պարտականությունն է երաշխավորել պատշաճ հավասարակշռություն, մի կողմից, դատարաններում պետական տուրք գանձելու պետության օրինավոր շահի, դատարաններում պետական տուրք վճարելու՝ անձի սահմանադրական պարտականության և, մյուս կողմից՝ դատարանների միջոցով իր իրավունքները պաշտպանելու՝ դիմողի օրինավոր շահի միջև: Հետևաբար, այդպիսի հավասարակշռության ապահովումը հետապնդում է սահմանադրաիրավական նպատակ»:

Երկրորդ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի առաջին պարբերության «գ» կետի համաձայն՝ առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից: Այս դրույթը դատարանի մատչելիության

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 ապրիլի 2016 թվականի
ՄԴՈ-1265



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջև 2015 թվականի դեկտեմբերի 11-ին ստորագրված՝ «Երևանի կոշտ թափոնների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պար-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ի ԿՆՆՈՒՄ Խ 4(82)/2016
ՏԵՂԵԿԱԳԻՐ

տավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի 2016 թվականի մարտի 29-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Բ Ձ Ե Յ .

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ (այսուհետ՝ Բանկ) «Երեւանի կոշտ թափոնների ծրագիր» վարկային համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2015թ. դեկտեմբերի 11-ին:

Համաձայնագիրը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2016թ. մարտի 3-ի որոշմամբ:

2. Համաձայնագրի շրջանակներում Բանկը «Երեւանի կոշտ թափոնների ծրագրի» ֆինանսավորման նպատակով Համաձայնագրում սահմանված կամ հղվող պայմաններով Հայաստանի Հանրապետությանն է տրամադրելու 8.000.000 եվրո գումարի չափով վարկ: Ֆինանսավորվող ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) միտված է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երեւանում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավմանը:

Համաձայնագրով նախատեսված վարկը բաղկացած է երկու տրանշից. տրանշ Ա-ի գումարը կազմում է 4.700.000 եվրո, իսկ տրանշ Բ-ի գումարը՝ 3.300.000 եվրո: Օգտագործման նվազագույն գումարը 50.000 եվրո է: Վաղաժամկետ մարման նվազագույն գումարն է 500.000 եվրո, իսկ չեղյալ հայտարարման նվազագույն գումարը՝ 100.000 եվրո: Տոկոսագումարի վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ը եւ հոկտեմբերի 16-ը: Հանձնառության վճարի դրույքը տարեկան 0.5 տոկոս է: Վարկը ենթակա է փոփոխվող տոկոսադրույքի: Տրանշ Ա-ի համար վարկի մարման ժամկետը 15 տարի է, որից 3 տարին՝ արտոնյալ, իսկ տրանշ Բ-ի համար՝ վարկի հասանելիությունից հետո 15 տարի, որից 3 տարին՝ արտոնյալ:

Համաձայնագրի 1-ին հոդվածի 1.01 բաժնի համաձայն՝ 2012 թվականի դեկտեմբերի 1-ով թվագրված Ստանդարտ պայմանների (փոփոխված եւ լրացված) բոլոր դրույթները ներառվում են կիրառելի են Համաձայնագրի նկատմամբ: Ընդ որում, համաձայն այդ պայմանների՝ «Շուկայի անկում»

վերտառությունը կրող 3-րդ բաժնի 3.13-րդ կետով նախատեսված է, որ շուկայի անկման դեպքում Բանկն իրավունք ունի իր հայեցողությամբ, սակայն Վարկառուի հետ նախապես քննարկելով (3.13ա կետ), փոփոխել տոկոսադրույքի վճարման համապատասխան ժամանակահատվածը, լողացող կամ ֆիքսված տոկոսադրույքով հաշվարկվող վարկի ցանկացած մասի վրա ավելացնել տոկոս:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

ա) մարել տրանշ Ա-ն քսանչորս (24) հավասար (կամ հնարավորինս հավասար) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին եւ հոկտեմբերի 16-ին, Համաձայնագրի II հոդվածի 2.02 բաժնի «ե» մասի 1-ին կետով սահմանված կարգով,

բ) մարել տրանշ Բ-ն քսանչորս (24) հավասար (կամ հնարավորինս հավասար) կիսամյակային վճարումներով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին եւ հոկտեմբերի 16-ին, Համաձայնագրի II հոդվածի 2.02 բաժնի «ե» մասի 2-րդ կետով սահմանված կարգով,

գ) անհապաղ Բանկին վճարել Պայմանների փոփոխության հետ կապված ծախսերի դիմաց համապատասխան գումարը՝ Համաձայնագրի II հոդվածի 2.02 բաժնի «զ» մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում եւ կարգով,

դ) հասանելի դարձնել Վարկի ամբողջական միջոցները ԾԻԸ-ի (Ծրագրի իրականացման ընկերության) համար, Օժանդակ համաձայնագրի (կնքվելիք վարկավորման համաձայնագրի) համաձայն (Հոդված III, Բաժին 3.01, մաս «ա»),

ե) Օժանդակ համաձայնագրի շրջանակներում կիրառել Հայաստանի Հանրապետության իրավունքներն այնպես, որ պաշտպանվեն Հայաստանի Հանրապետության եւ Բանկի շահերը, բավարարվեն Համաձայնագրի դրույթները եւ իրականացվեն այն նպատակները, որոնց համար տրամադրված է Վարկը (Հոդված III, Բաժին 3.01, մաս «բ»),

զ) չփոխանցել, չփոփոխել, չեղյալ չհայտարարել եւ չիրաժարվել Օժանդակ համաձայնագրի որեւէ դրույթից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ կերպ կհամաձայնի (Հոդված III, Բաժին 3.01, մաս «գ»),

է) ապահովել, որպեսզի Երեւան քաղաքը (այսուհետ՝ Ծրագրի սուբյեկտ) կատարի Նախագծման, կառուցման, շահագործման համաձայնագրով, Օպերատորի սպասարկման համաձայնագրով ու Գործառնական եւ պարտքի սպասարկման սուբսիդավորման համաձայնագրով սահմանված իր բոլոր պարտականությունները (Հոդված III, Բաժին 3.01, մաս «դ»),

ը) ապահովել, որպեսզի Ծրագրի սուբյեկտը կատարի Համաձայնագրով սահմանված իր բոլոր պարտականությունները, այդ թվում, առանց սահմանափակման, ՀՀ պարտավորությունները, որոնք վերա-

բերում են Համաձայնագրի III հոդվածի Բաժին 3.01-ի մաս «ե»-ում սահմանված գործողություններին (Հոդված III, Բաժին 3.01, մաս «ե»),

թ) ապահովել, որպեսզի ձեռնարկվեն բոլոր այն լրացուցիչ գործողությունները, որոնք անհրաժեշտ են Ծրագրի ավարտի համար բավարար միջոցներ ապահովելու համար (Հոդված III, Բաժին 3.01, մաս «զ»),

ժ) իրականացնել բոլոր օրենսդրական, կարգավորող եւ այլ գործողությունները, եւ բաց չթողնել որեւէ գործողություն, որն անհրաժեշտ է, որպեսզի Համաձայնագրի դրույթներն ուժի մեջ մտնեն (Հոդված III, Բաժին 3.01, մաս «է»),

ժա) ապահովել, որպեսզի Ծրագրի սուբյեկտը մշտապես բավարար միջոցներ ունենա պարբերական ընթացիկ ծախսերը հոգալու համար, այդ թվում՝ ֆինանսական միջոցներ իր պարտավորությունները կատարելու համար (Հոդված III, Բաժին 3.01, մաս «ժ»):

4. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Համաձայնագրի 5.01 բաժնում նախատեսված նախապայմանները կատարելուց հետո:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ 2015 թվականի դեկտեմբերի 11-ին ստորագրված «Երեւանի կոշտ թափոնների ծրագիր» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 ապրիլի 2016 թվականի
ՄԴՈ-1266



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
16-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ԵՐԵՎԱՆԻ ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐ-ԱՌԱՋԻՆ
ՓՈՒԼ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 ապրիլի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլում-
յանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկու-
ցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրա-
պետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Երևանի քաղա-
քապետի առաջին տեղակալ Կ. Արեյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-
րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ
հոդվածների,

դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի
Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2015
թվականի հոկտեմբերի 16-ին ստորագրված «Երևանի կոշտ թափոններ-
առաջին փուլ» ֆինանսավորման պայմանագրում ամրագրված պարտա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ x ՏԵՂԵԿԱԳԻՐ x 4(82)2016
121

վորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի մարտի 29-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Պ Ա Ը Ե Ց .

1. Քննության առարկա ֆինանսական պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2015թ. հոկտեմբերի 16-ին: Պայմանագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 8 մլն եվրո գումարի չափով փոխառություն Երեւան քաղաքում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավման նպատակով:

ՀՀ կառավարությունը 2016թ. մարտի 3-ին հավանություն է տվել Պայմանագրին:

Պայմանագրով նախատեսված վարկային միջոցները տրամադրվելու են հերթական մասնաբաժիններով (առավելագույնը 5 մասնաբաժնով՝ յուրաքանչյուրն առնվազն մեկ մլն եվրոյի չափով): Վարկի սպասարկման գծով վճարումներն իրականացվելու են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա ապրիլի 16-ին եւ հոկտեմբերի 16-ին: Յուրաքանչյուր մասնաբաժին ունենալու է մարման ժամկետ (4-18 տարի): Միանվագ կումիսիոն վճարը կազմում է 50.000 եվրո:

Ֆինանսավորման ենթակա ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) բաղկացած է երեք բաղադրիչից: Առաջինը նախատեսում է նոր սանիտարական աղբավայրի առաջին երկու գոտիների եւ օժանդակ ենթակառուցվածքի կառուցում, որոնք սպասարկվելու են Երեւան քաղաքն իր մոտ 1.1 մլն բնակիչներով եւ, ինչպես վկայակոչված է Պայմանագրի Առդիր «Ա»-ի Ա.1 մասում, հավանաբար՝ նաեւ հարակից չորս տարածաշրջանները՝ մոտ 770 հազար բնակիչներով: Նոր աղբավայրը, որը տեղակայվելու է Նուբարաշենում գործող աղբավայրի հարեւանությամբ եւ գտնվելու է Երեւանի կենտրոնից 12 կմ հեռավորության վրա, կնվազեցնի գործող ոչ սանիտարական աղբավայրի անբարենպաստ ազդեցությունը շրջակա միջավայրի, հանրային առողջության եւ կլիմայի վրա: Ծրագրի երկրորդ բաղադրիչն ընդգրկում է գործող աղբավայրի փակման ու վերականգնման նպատակներով նախատեսված աշխատանքները՝ նոր աղբավայրը շահագործման հանձնելուց հետո: Ծրագրի երրորդ բաղադրիչը միտված է այնպիսի համակարգերի եւ օբյեկտների ստեղծմանը եւ ներդրմանը, որոնք կավե-

լացնեն կոշտ թափոնների վերամշակման ծավալները՝ երկարացնելով նոր աղբավայրի շահագործման ժամկետը:

Ծրագիրն իրականացնող մարմիններն են՝ Երևանի քաղաքապետարանը եւ Երևանի քաղաքապետարանին պատկանող կամ պատկանելիք ընկերությունը (այսուհետ՝ Օժանդակող):

2. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի (այսուհետ՝ Բանկ) միջեւ «Երևանի կոշտ թափոններ-առաջին փուլ» ֆինանսավորման պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

ա) վճարել Բանկին մասհանման հետաձգման փոխհատուցում Ֆինանսավորման պայմանագրի 1-ին հոդվածի 1.05.Ա կետով սահմանված դեպքերում եւ պայմաններով,

բ) վճարել Բանկին հետաձգման փոխհատուցում տրանշը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու դեպքում՝ Ֆինանսավորման պայմանագրի 1-ին հոդվածի 1.06.Գ.1) եւ 1.06.Գ.2) կետերով սահմանված դեպքերում եւ պայմաններով,

գ) վճարել կամ ապահովել գնահատման վճարի կատարումը Բանկին՝ Ֆինանսավորման պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 15 օրվա ընթացքում (1-ին հոդվածի 1.08 կետ),

դ) կատարել վարկի տոկոսի վճարում Պայմանագրի 3-րդ հոդվածի 3.01 կետի համաձայն,

ե) վճարել տույժեր Պայմանագրի դրույթների հիման վրա վճարվելիք ցանկացած ժամկետանց գումարի դիմաց՝ Պայմանագրի 3-րդ հոդվածի 3.02 կետով սահմանված կարգով եւ պայմաններով,

զ) վճարել վաղաժամ մարման դեպքում նաեւ վաղաժամ մարման գումարի կուտակված տոկոսները, փոխհատուցման տույժի գումարը (4-րդ հոդվածի 4.02 կետ),

է) ձեռնարկել քայլեր Ծրագրի հավելյալ ծախսերը ֆինանսավորելու համար, որպեսզի հնարավոր լինի Ծրագիրն իրականացնել համաձայն Տեխնիկական նկարագրի (6-րդ հոդվածի 6.03 կետ),

ը) իրականացնել Ծրագրի մաս կազմող ողջ սեփականության տեխնիկական սպասարկման անցկացում, վերանորոգում, մանրակրկիտ զննում եւ նորացում, եւ ապահովագրել Ծրագրի մաս կազմող բոլոր աշխատանքները եւ սեփականությունն առաջնակարգ ապահովագրական ընկերությունների կողմից (6-րդ հոդվածի 6.05 կետ),

թ) պահպանել եւ ապահովել, որ Օժանդակողը եւ Երևանի քաղաքապետարանը պահպանեն բոլոր այն օրենքները եւ կանոնակարգերը, որոնք տարածվում են ՀՀ-ի, Օժանդակողի եւ Երևանի քաղաքապետարանի վրա (6-րդ հոդվածի 6.06 կետ),

ժ) պահպանել ֆինանսական պարտավորություններ ստանձնելու առկա սահմանափակումները՝ Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ ԱՄՀ) Արտոնյալ պայմանների տրամադրման վերաբերյալ Հայաստանի հետ համաձայնագրի կամ ԱՄՀ որեւէ այլ փաստաթղթի համաձայն (6-րդ հոդվածի 6.08 կետ),

ժա) ապահովել Օժանդակողի եւ/կամ Երեւանի քաղաքապետարանի կողմից Պայմանագրի 8-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության տրամադրումը Բանկին,

ժբ) ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք Բանկը ողջամտորեն պահանջում է, հետաքննելու եւ (կամ) դադարեցնելու համար որեւէ ենթադրյալ կամ կասկածվող գործողություն, որն ունի Պայմանագրի 6.09 հոդվածում նկարագրված բնույթ,

ժգ) տեղեկացնել Բանկին այն միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են որեւէ կորստի համար պատասխանատու անձանց գործողությունների հետեւանքով պատճառված վնասի հատուցում ստանալու ուղղությամբ եւ օժանդակել ցանկացած հետաքննության, որը կարող է իրականացնել Բանկը նման գործողության առնչությամբ (8-րդ հոդվածի 8.03 կետ),

ժդ) վճարել բոլոր հարկերը, տուրքերը, վճարները եւ ցանկացած բնույթի այլ պարտադիր վճար, ներառյալ՝ պետական տուրքը եւ գրանցման վճարները, որոնք կծագեն Ֆինանսավորման պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի կատարումից կամ իրականացումից (9-րդ հոդվածի 9.01 կետ),

ժե) կրել բոլոր գանձումների եւ այլ ծախսերի վճարման պարտավորությունը, այդ թվում՝ մասնագիտական, բանկային կամ տարադրամի փոխանակման գանձումները, որոնք առաջանում են Ֆինանսավորման պայմանագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի նախապատրաստման, փոփոխման, կատարման, իրականացման եւ դադարեցման կամ Պայմանագրից կամ այլ համապատասխան փաստաթղթից հրաժարվելու, ինչպես նաեւ Վարկի համար որեւէ երաշխիքի փոփոխման, ստեղծման, կառավարման, իրականացման եւ իրացման առնչությամբ (9-րդ հոդվածի 9.02 կետ),

ժզ) վճարել (հատուցել) Բանկին ցանկացած գումար կամ ծախս, որն առաջացել է, կամ Բանկը կրել է որեւէ օրենքի կամ կանոնակարգի ներդրման, փոփոխության, մեկնաբանման, կիրառման, կառավարման կամ Պայմանագրի ստորագրման օրվանից հետո ուժի մեջ մտած ցանկացած օրենքի կամ կանոնակարգի կատարման արդյունքում (9-րդ հոդվածի 9.03 (ա) կետ),

ժէ) հատուցել եւ զերծ պահել Բանկին որեւէ կորստից, որը հետեւանք է Հայաստանի Հանրապետության կողմից կատարված որեւէ վճարման կամ

վարկի մասնակի մարման, որը տեղի է ունենում Պայմանագրի հստակ սահմանված ձևից տարբերվող ձևով (9-րդ հոդվածի 9.03 (բ) ենթակետ):

3. Ֆինանսավորման պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրի 1.04.Ա. ա) հոդվածով պահանջվող ապացույցները Բանկի համար ընդունելի ձևով ու բովանդակությամբ, Բանկի կողմից ստանալուց հետո:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա ֆինանսավորման պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ 2015 թվականի հոկտեմբերի 16-ին ստորագրված՝ «Երեւանի կոշտ թափոններ-առաջին փուլ» ֆինանսավորման պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19 ապրիլի 2016 թվականի
ՄԴՈ-1267

ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ



ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Ի ՎԵՐՆԱԿՎԱԿՐ Խ 4(82)2016

Հուլիսի 1-ին Հայաստանի ազգային պատկերասրահում, ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի մասնակցությամբ, տեղի ունեցավ ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված ընդունելություն:

Հանդիսությանը մասնակցում էին՝ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ ԱԺ փոխխոսնակ Հերմինե Նաղդայանը, ՀՀ սահմանադրական դատարանի անդամներ, ՀՀ ԱԺ խմբակցությունների ղեկավարներ, հանձնաժողովների նախագահներ, պատգամավորներ, ՀՀ կառավարության անդամներ:

Իրենց մասնակցությունն էին բերել ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարներ: Վերջիններիս նախապես բաժանվեց անգլերեն եւ ռուսերեն լեզուներով Գ. Հարությունյանի ելույթի տեքստը:

ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված ելույթով հանդես եկավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը: (Ելույթի տեքստը ներկայացվում է տեղեկատվության վերջում):

Միջոցառմանը կայացավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի հեղինակած «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները» գրքի շնորհանդեսը: Այս հրատարա-

կուրթունը նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին:

Գրքի եւ հեղինակի մասին հակիրճ խոսք ասաց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գագիկ Ղազինյանը:



ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված հանդիսությունը ՀՀ ՄԴ նախագահ Գ. Հարությունյանի ելույթի տեքստը:

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-588-171
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 20.07.2016թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՄԴ տեղեկագիրը ՀՀ
բարձրագույն որակավորման
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 4(82) 2016
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 4(82) 2016
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 4(82) 2016





